

Բնագիտություն

ԱՊՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ Կ'ՄԵՐՈՒԵՍԻ

Գ. ՏԱՐԻ 1964
Յ Ո Ւ Ն Ի Ս 6



پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANJIAN

•

բ ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

ՎԱՐՁ ԽՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՐԱԳԻՐՆԵՐ
 ԵՂ. ՊՅՍԱՋԵԱՆ, Գ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Յ. ԳԵՂԱՐԳ
- Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ
- Գ. ՍԻՀՈՒՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Գ. ԳԵՂԱԿ
- Բ. ԿՈՒՆԵԱՆ
- Ա. ՀԵՐԱՆ
- Գ. ՄԱՀԱՐԻ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ
- Զ. ՄԻՐՁԱՅԵԱՆ
- ԵԴ. ՊՅՍԱՋԵԱՆ
- Պ. ՄՆԱՊԵԱՆ
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՐԻԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԷ
 E. D. BOYADJIAN
 B. P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռագրային թիվ 252786/14

Բազմը

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Գ. ՏԼԲԻ, ԹԻԻ Զ

Թ Ա Ր Ա Ի 1964

ԳԼԵՐՈՒԹ

Ծ Ա Ր Ա Ի

Լեռներ՝ փուռներ բարձրաբանդակ,
Ծովեր՝ սիրոյ կապոյտ մասեան,
Ու երկինքներ՝ ասղախորան...
— Զյուղեցան աչեա բաժակ:

Ու լանջերէ սիրակառօս,
Մարմիններէ՛ կանանց արօս,
Քաղեցի վարդ ու մանիշակ...
— Զլեցուեցան արեա դասարի:

Նուրջըս՝ ծառեր ոսկեսօսափ,
Նուրբ ծղփում, լոյսեր անափ,
Կախարդ գոյներ, բոցեր կակաչ...
— Զբոցկլցաց հոգիս նանանչ:

Տանար ու խաչ, խորհուրդ ու խունկ,
Բիւրեղի եղ ու ջի՛նջ արցունք...
— Սիրօրս մղնաց այրի մ՛անկաց,
Զեկա՛ւ այցի նայնիսկ Աստուած:

Յ. ԳԵՂԱՐԴ

Ժ. ԱՅԹԱՐԵԱՆ

Պ
ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեր ճամբորդութեան առաջին օրն էինք տակաւին բայց այն ձեւով որ կը թաւալէին բաները ու ըէժիմը որ կը պարտադրէր ինծի խարտիչաճեր սաստանուէին, մարդարէ ըլլալու պէտք չկար դուռակէլու համար հոսկէ, տեսակը այն... ջրհեղեղին որ կը սպասէր ինծի նաւահանգիստը...

Պէտք էր անպայման հրաժարիլ ուրեմն սուտ նշանածի իմ դերէն: Պէտք էր ճամբան շեղել քանի դեռ ուշ չէր:

Բայց ինչպէ՞ս ընել, ինչպէ՞ս անհետանալ: Ինչպէ՞ս պրծիլ վտանգէն այս երկաթէ կղզեակին մէջ որ մէկ ճամբայ ունի միայն, երկնքին ու ծովուն միջև: Ամէն մարդ Եղիս մարգարէն չէ մէկ հարուածով երկինք ցտաքելու համար:

Յաջորդ օրը կը փակուէմ խուցիս մէջ: Միակ ապաստանարանն է ուր ինքզինքս կրնամ ապահով դալ:

Ամէն ինչ լաւ կ'ընթանայ միջին կէտք: Կը սկսիմ նոյնիսկ զղջալ առած որոշումս համար: Լէյլան հասկցած կ'ըլլայ անուշտ ինչ վախկոտի հետ է գործը ու անկասկած գտած կ'ըլլայ մէկ ուրիշը, այս վայրկեանիս: Բարեկամները չեն որ պիտի պակսէին իրեն:

Բայց կէտքէ ետք՝
- Թ'օ՛ք, ք'օ՛ք, ք'օ՛ք, դուռս կը զարնեն:

Պրութիւն կը կեղծեմ, մաղթելով սակայն որ դարձողը յամառի:

Կը յամառի: Ու... Լէյլան է, Կ'ըսէ ինծի շատ մը բաներ, նոյնքան մըն ալ կ'ըսեմ ես իրեն, բայց ի վերջոյ ինքը կ'ըլլայ յողթողը եւ իւրաքանչիւրս կը վերստանանք մեր նախկին դերերը:

Ս. իրիկունը, ճաշարանին մէջ՝ արտ երրորդ, երրորդ տեսարան - նշանած-նշանած կը խաղանք, Բայց այս անգամ մայրն ալ մուտք կը գործէ բեմ ու կը ստանանէ իր դերը: Ապագայ կեսուրի մը դերն է իրը, քաղցր ու քնքոյշ, գորովայր կետուր մայր մը որ կը գուրգուրայ վրաս ու կը վարուի հետս փափկութեամբ, կարծես Կալէսի իշխանն ըլլայի:

Այնպէս լաւ կը խաղանք մեր դերը, մենք երեքով որ կը յաջողինք չուտով ջրայնացնել սեղանաւորը: Յանկարծ կը թողու սեղանը ու կը հեռանայ առանց ոչ մէկ պատրուակի ու կը թողու մեզ հանգիստ:

Լէյլա կը ցնծայ: Ի՞նչ դերասանուհի, Աստուած իմ, կարծես Մարիլին Մընրօն ըլլար, քնքոյշ, հրայրքոտ: Մարիլին մը, որուն բոլոր կրակները ուղղուած են դէպի ինծի, կախարհ Մարիլին մը: Եւ ես որ կախարդուածի դեր եմ ստանձնած, զժուարութեամբ կը լըռեցնեմ մէջս արտօմակներ որ կը ծընին... Մարդակերի արտօմակներ՝ լափելու համար զզլիս սա Մարիլինը:

Յաջորդ օրը դործողութիւնը տեղի ունեցաւ վարի կամրջակին վրայ, միեւնոյն ուսանողներուն մօտ, որոնք զրադուած են միշտ նուազով ու պարով:

Լէյլան ու ես կը պարէինք բաւական ատենէ ի վեր, երբ յայտնուեցան Հայրն ու սեղանաւորը:

- Ահաւասիկ մարդուկը, ահա կուզայ, կ'իմացնէ ինծի Լէյլան:
- Հոգգ անգամ մի ընեք...

Այն է որ՝ Հիմա այլևս պէտք չու-
նէի որ Լէյլան յուշէր ինծի իմ դերոս:
Ամենայնիս ազդանշանին՝ կը սեղ-
մըւէի իրեն, կը սեղմէի դիմք ին-
ծի: Ամենանուրբ կատարելութիւննե-
րու հասցուցած էի այլեւս նշանա-
ծի այդ դերը, ու ոչինչէ մը կ'օգտը-
ւէի ցուցարբերելու համար... տաղան-
դըս: Եւ երբեմն կը դնէի այդ դերիս մէջ
սոյնքան եռանդ ու այնքան հրաշք՝ որ
վերջապէս կը ձգտուէր խեղճ ազնիւ
բազումիներուս մէջ ու կը դանդաղէր
այդքան փութիւտութեան համար...

Ուրեմն չորրորդ արար, չորրորդ
պատկեր: Մեղանաւորին ու Լէյլայի հօր
միջև տեղի կ'ունենայ այս մէկը: Ակըն-
յայտ կերպով վէճի տեսարան մըն է ու
զատելով մեղի նետուած նայուածքնե-
րէն՝ շատ բացորոշ կերպով մենք ենք
խնդրոյ առարկան: Բայց մենք կը պա-
րենք, Լէյլան ու ես, կարծես ոչինչ պա-
տահած չլլայր: Կը պարենք, խելայիդօ-
րէն իրարմով տարուած զոյգ մը էակնե-
րու պէս: Կը մարմնացնենք երկու սիրա-
հարներ որոնք կարծես պիտի հալին ի-
բարու մէջ:

Կը պարէինք, բայց մեր անթէնները
ուզողուած էին ղէպի երկու մարդիկը:
Ոչինչ կը լսէինք անոնց ըսածներէն, կի-
թառիսթն ու իր արբանեակները չէին
ձգեր որ լսէինք ուրիշ մասն. բայց
ունէինք... պատկերը: Ու պատկերը մե-
զի կ'ըսէր որ բաները կը շարժակէին,
այնտեղ, անկիւնը, երկու մարդոց մէջ,
թէ բաները կը տաքնային, կը պոռթկա-
յին եւ թէ պիտի պայթէին շուտով:

- Կարծեմ շատ հետու չենք մեր նը-
պատակակէտէն, կը մրմնջէ ականջիս
Լէյլան, դժուար ջողարկուած ուրախու-
թեամբ մը:

- Կանխաւ գուշակութիւններ մի ը-
նեք, կ'ըսեմ իրեն, այս մարդուկը դիւ-
րին դիւրին տեղի տուողներէն չի թուիր
ինծի:

- Բայց ապահով եղիր, կը պատաս-
խանէ Լէյլան, արդէն առաջին կողմը
տուք մը ունեցան ինք եւ հայրս քիչ ա-
ռաջ:

- ...Ա՛, իրա՞ւ:
- Իրաւ եւ ինչպէ՞ս: Այո առաւօտ
իող, նախաճաշի պահուն:

- Բայց յետո՞յ: Զպատմե՞ս:
- Յետոյ վրայ հասաւ մեր սեղանա-
ւորը, շարունակեց պատմել Լէյլան, ե-
րեսը կախ էր, դժգոհ կ'ուզէր երեւնայ:
«Զեզի բսկիք ունիմ», ըսաւ, ուղղելով
խօսքը հօրս որ կը պատրաստուէր հետե-
ւի իրեն: «Վերջացուր նախ նախաճա-
շը», միջամտեց մայրս, «յետոյ կը խօ-
սիք»: Բայց սեղանաւորը անհամբեր է,
չշատ կարեւոր է կ'ըսէ, պէտք է ան-
պայման խօսիմ իրեն հիմա: «Վարեւո՞ր,
այդ սասիճա՞ն», կը դիմադարձէ մայրս,
«բայց այդ պարագային խօսեցէք այս-
տեղ...»

«Այն է... այն է թէ, կը տատամսի
սեղանաւորը... Ձեր Օրիորդին ղէշ ըն-
թացքին համար է»: «Ընթացքի՞ն, բայց
ի՞նչ ընթացքի մասին է խօսքը, կը զոր-
մանայ մայրս: «Բայց այդ անպէտք,
այդ նենգաւոր տղուն հետ, ի վերջոյ կը
պարպուի սեղանաւորը, բխսթիքներու
այդ մարդուն, ան, որ ինքզինք տնօրէն
ալ կը կոչէ, պէտք է անպայման որ Լէյլ-
յան դադարի հետը խօսելէ»:

«Ա՛հ, բայց չափը կ'անցնէք պարոն,
կը գայրտանայ այլևս մայրս, դուք ինք-
դինքնիդ ի՞նչ կը կարծէք, լուս դիտցէք
որ մենք ոչ ոքէ հրահանդ ստացողը չենք,
նա մանաւանդ ձեզմէ՞ ու յետոյ, իմա-
ցէք, ոչ նենգաւոր է եւ ոչ ալ անպէտք՝
ան որուն մասին կը խօսիք, կարգին
մարդ մըն է, իրական պարոն մը... ի
վերջոյ»:

Մենք կը պարէինք միշտ, Լէյլան ու
ու ես, մինչ երկու մարդիկը չէին դադ-
րեք ձեռքով ոտքով խօսելէ, սանդուխ-
ներուն մօտ:

- Ո՛հ, բայց ինչ լիբր է, բացազան-
չեց Լէյլա, զրաւի կու դամ որ խեղճ
հօրմէս կը պահանջէ որ ջեղէ հետ տե-
սակցիլս արգիլէ: Ի՞նչ լրբութիւն: Եւ
այսը փակցնելով այտիս, եկուր, ըսաւ,
եկուր մօտենանք իրենց, եկուր խլինք
այս մարդուկէն ինքզինք ուրիշին պար-
տադրելու փափաքը:

Պարելով մտեցանք անոնց: Եւ այլ-եւս սկսանք դառնալ երկու մարդոց շուրջ-րուրր: Եւ նուազուն սիրահարներու մեր ձեւերով շատ մը փափաքներ խել-ցինք մեր մարդուկէն: Պարպեցինք զինք հաւանաբար մինչեւ անգամ ապրելու իր փափաքէն: Պէքօնի պէս կարծրացաւ, խղճ պարոն Այնքանաւորը, սկսաւ մեզ դիտել սոսկալի աչքերով: Աչքեր, որոնք պիտի յանկարծ փրցնէին կարծէք զիրենք բռնող կապերը ու խոյանային մեր երկուքին վրայ: Բարեբախտաբար շատ շմեաց այդպէս ու լաւ ատենին կծիկը գրաւ: Այնքան բրինք էէյլան ու ես, որ թիչ մնաց խեղճին հոգին հանէինք:

Եւ այս եղաւ նախափերջին տես-րանը նախափերջին արարին: Եղաւ շնորհաց վերջին հարուածը որ Թօթափեց սաղաթկալի սեղանաւորը իր պատրանք-ներէն, հրամարեցուց զինք վերջնակա-նապէս իր սին երազներէն:

Ճամբորդութեան Հինգերորդ օրը՝ ծովը այլակերպեցաւ յանկարծ: Սկսաւ յանկարծ կասաղութեամբ փրփրիլ ու բանայ մեր առջեւ սարսուղոցիկ անդունդներ: Սկսաւ խազալ մեր նաւուն հետ, կարծես յարդի շիւղ մը ըլլար ան: Կարծես յանկարծ թշամացած էր մեր նաւուն դէմ ու անոր բուրբ բնակիչնե-րուն:

Այդ օր՝ ոչ մէկ ճամբորդ երեւցաւ կամբողջներուն վրայ, բացի ուսանող-ներէն եւ... Ինձմէ: Ուսանողներուն հողմ խոկ չէր թէ ինչ կ'անցնէր կը դառ-նար իրենց շուրջ, ամէն բան լաւ էր, ամէն ինչ նոյնը իրենց համար, երբ կրթ-նային երգել ու պարել: Չարմացան նոյն-խիկ դիտ այդ օրին դուրս տեսնելով: Ա-նոնք կ'երգէին շարունակ, բայց ես... Այլեւս ուշ էր ինձի համար, ըլլալիքս եղած էի ես արդէն: Ծա այլեւս չէի կըր-նար... առանձին մնալ: Կամբողջները կը շափչփէի ոսկեվարս արարածի մը փըն-տըռտըռեովը տարուած: Թերեւս տակա-ւին առիթն ունենայի մէկ կամ երկու դեր խաղալու: Թերեւս տակաւին պէտք ըլ-լար մէկ կամ երկու տեսարանի, ինձի համար...:

Կարելի չեղաւ էէյլան տեսնել մու-թը կոխելէն առաջ:

Ամբողջ օրուայ խնթութենէն ու-ժասպառ, ծովը մտած էր կապա-րեայ ջուռի մը մէջ: Կը ննջէր խա-ղաղօրէն թափանցիկ նայլօմէ ծածկոցի մը տակ: Կարելի էր գրաւի գալ որ ցե-րեկուան կատղած ծովը ինքը չէր, որ ինք երբեք չէր խենթեցած:

- Միշտ գրաղուած, հուշակաւոր ձեռ տապանով, լսեցի էէյլայի փաղաքշող ձայնը՝ ինձի ուղղուած:

- ...Տապան... Ա՛հ, այո՛, տա-պան: Բայց այլեւս չեմ գիտեր թէ ինչ բանի կրնամ գոյն գործածել, կրցայ վերջապէս ըսել էէյլային, - չեմ կրնար միտ մինակս մէջը մտնել, ինչ օգուտ, տապան մը...: Եւ լուսցի: Որովհետեւ, այդ մայրկեանին բոլորովին ուրիշ ձայն մը սկսած էր մրճակարել ականջներս, զաղտնի, ներքին ձայն մը որ կը կշտամ-բէր դիտ դառնօրէն: Վճիմար, կ'ըսէր ան, այսպէ՛ս կը խօսին, խօսելու ի՞նչ ձեւ է այս, բաւական շատախօսեցիւր, թէ՛ կը մնայ որ պարպեալ դուռ ջեղ, որ բանաս սիրտդ: Եւ այս բոլորը փոքրիկ դերի մը համար որ ջեղի վտտահու-ցաւ:

- Գիտե՛ս, էէյլա, ամբողջ օրը ջեղ փնտոցի, վերջապէս դատայ մեւը ըսե-լու:

Օ՛, իրապէ՛ս, պտտասխանեց ան ցրուած, հիւանդ էի, ծովախտը... Ե-կայ մասնաւոր, բարի լուրը հազարգելու ջեղի:

Ո՛չ, վճռապէս, էէյլան գրազուած է գուտ անձնական հարցերով: Ոչ մէկ յոյս որ կարենայ գրաղուիլ, կարենայ ըմբռ-նել իմիներս ալ:

- Լո՛ւր, ըսի իրեն, անակնկալի ե-կածի պէս, հակառակ որ շատ լաւ դի-տէի, գուշակելու պէտք չունէի թէ զլու-րը՝ ինչ կրնար ըլլալ:

- Եղա՛ւ, շարունակեց էէյլա, ճա-ռադայթող արտայայտութեամբ, վեր-ջապէս եղաւ, գոտուեցան իրարու հետ հայրս ու պանքէշը: Կոտեցան իրարու

Հետ իմ ու ջու խնդրովդ. տեսնելիք որ- շափ քաջ եղաւ հայրս, անքամի մը հա- մար գտնէ: Վնդիկս ազատ է իր ուզածը ընելու, իր ուզածը տեսնելու», պոռաց անոր զժին-բերնին: Վնտեց զրեթէ զինք:

Եւ դադարէ մը ետք:

- Ձի՞ ուրախացնիր ձեզ ասիկա, շա- րունակեց լէյլա: Բայց վերջացաւ հի- մա, յարթանակեցինք, այլեւս պիտի չըտնանայ ինձի դէմ այդ անիծեալ սե- ղանաւորը, պիտի այլեւս չտաղտկացնէ զիս:

Եւ որովհետեւ միշտ չէի գիտեր թէ ինչ պատասխանէի՝

- Բայց այս բոլորը եղան շնորհիւ ձեզի, շարունակեց լէյլա, այս ամէնը կը պարտիմ ձեզի, որքա՞ն եքախոտ- պարտ եմ ձեզի, որքա՞ն, որքա՞ն: Ձէք կրնար երեւակայել, փրկեցի՞ք զիս, փըր- կեցի՞ք:

- Բայց լէյլա, բայց մ'չ, պէտք չը- կայ շնորհակալութեան: Պէտք չկայ... պէտք չկայ... Այնքան ոչինչ էր ըրածս, որեւէ մէկը պիտի ընէր այդքանը: Եւ ըս- կըսայ կմկմալ, սկսայ լեզուս ծածծմել ըսելու համար թէ շնորհակալաբար ես պէտք էր ըլլայի, սկսայ անճիկիլ առանց կարենալ ըսելու ինչ որ սիրտս կը թե- լաղէր:

- Եւ այսքան համեստ, այսքան վե- հանձն, ընդմիջեց զիս լէյլան, բայց չը- նորհակալ էմ, յամենայնդէպս, իսկապէս աղնիւ էք, իսկապէս վեհանձն. շնորհա- կալ եմ, շնորհակալ...:

Ու մինչդեռ ես կ'որոճամ խել մը բաներ՝

- Բայց ահա, կը վերսկսի լէյլա, յաւերժաբար պիտի չյոգնիք, ձեր տաղ- տուկներուն վախճանին հասաք: Այս գի- շեր եւ վաղը իրիկուն, եւ ամէն ինչ վեր- ջացած կ'ըլլայ, արդէն հասած կ'ըլլանք Պէյրութ:

- ...Ձոհողութիւն չկայ, լէյլա, ճիշդ հակառակն է, յամառեցայ բացատ- րել իրեն... ընդհակառակն...:

Բայց ի՞նչ բացատրել, ինչպէ՞ս բա- ցատրել:

Արդէն հրամեշտ կ'առնէր ու կը հե- ոտանար, պատրուակելով թէ հանդիստի պէտք ունէր, կ'աճապարէր վերադառ- նալ իր խցիկը:

Երկու ժամ ետքն էր որ կարիքն ու- նեցանք ներկայացնելու մեր վերջին ա- բարենիւն մէկը: Ծաշարանն էինք: Սե- ղանաւորը առանձին կը նստէր: Ընտրած էր սեղաններէն ամէնէն հեռաւորը, ըսե- լու համար կարծես մեզի թէ ինք հեռուն էր այլեւս, հեռո՞ւն, շատ հեռուն... Բամշաթթա էր ինք, ու կ'անդիտանար մեր գոյութիւնն իսկ:

Բայց լէյլան եւ ես նստեցանք միշտ զով-զովի, կատակելով, ծեծծեքելով, զոյր մը իսկապէս նշանածներու պէս ո- բոնք իրարմէ չեն կշտանար: Բայց մեր խաղը երկար չտեւեց: Իրապէս որ սեղա- նաւորը կ'արհամարհէր մեզ այդ երեկոյ, նայուածք մը իսկ չշնորհեց մեզի եւ հե- ոացաւ արահէն անմիջապէս որ աւարտեց ընթրիքը:

Եւ տեսարանը ընդմիջուեցաւ՝ երբ հանդիսատես չմնաց: Ու ամէն ոք իր խցիկը վերադարձաւ:

Յաջորդ առաւօտ, ամենավերջին օ- րը մեր ճամբորդութեան, քանի մը ներ- կայութեան դեր եւս խաղացի, քանի մը մտերմութեան փոքրիկ պատկերներ: Եւ որովհետեւ ժամանումը կը նախատես- ուէր յաջորդ յուսադէմին՝ ընթրիքէն անմիջապէս ետք լէյլան զիս թողուց որ- պէսզի երթայ պայուսակները պատրաս- տէ:

Գիշերը, խուցիս մէջ, աչք զոցելու հնար չկայ: Անկողնիս մէջ երկարած է տարօրինակ մէկ անհաս... Ի՞նքը, Տոն Քիշոթը անձամբ: Կատողած է ան, փըր- փըրած, ամէնուն դէմ ու մանաւանդ... ինքն իրեն դէմ: «Յիմա՛ք, կ'ըսէ ինձի, խնդացին իմ վրաս հարիւրաւոր տարի- ներ, ծաղրեցին զիս, միթէ չէ՞ր բաւեր: Ի՞նչ պէտք ունէիր ինձի կապելու, «հե- րոսութիւն» խաղալու, ազատագրողի հո- վեր առնելու: Յիմա՛ք, երեցս յիմաք»:

Քնանալու քանի մը զուր փորձեր: Բայց Տոն Քիշոթ ներկայ է միշտ, միշտ

աւելի զայրացած, միշտ աւելի յանդիմանող: Լաւագոյնն է դուրս նետուիլ խուցէն եւ գիշերը աստղերուն հետ անցընել: Անոնք դոնէ բարեկուս են եւ դիտեն ժպտիլ անոնց որոնք իրենց կը նային...

Հոն եմ, կամբջակին վրայ: Ծովը միշտ հազած է թափանցիկ նայլօնէ իր մութ գիշերանոցը: Լուսթիւն է... Ամբողջական լուսթիւն մը: Չկան նոյնիսկ ուսանողները, թերեւս կ'երազեն անոնք հիմա:

Կը լսեմ յանկարծ պզտիկ պզտուկներ, քայլերու ձայներ որ կը մօտենան: Լէյլային տոնաձա՞յնն է արդեօք, զըժուար է հաւատալ:

Լէյլան է: Չարմացած է դիտել գիշերուայ այս ժամուն դուրսերը գտնելով: Հետու կը կենայ, վերապահ է ու լուրջ: Եւ այս ամէնը հասկնալի են, վերապահ ու լուրջ այս դիրքը, սեղանաւորը մէջտեղերը չէ, ուստի պէտք չկայ դերի ու դերասանութեան...

- Չիրցայ քնանալ, կ'ընէ, կարծես ինքզինք արդարացնելու համար, շատ տաք կ'ընէր...

- Ես ալ, կը պատասխանեմ, ես ալ... այո, տաք... շատ տաք: Պէտք չկայ Տոն Գիշօթի մասին խօսելու իրեն, ոչ մէկ կարիք ամէն պարագայի այդ ամէնը պատմելու:

- Բայց քանի հոս էք, պիտի կրնամ անդամ մը եւս շնորհակալութիւն յայտնել ձեզի, նաեւ մօրս կողմէ, ձեր ծառայութիւններուն համար, ձեր ազնիւ վերաբերմունքին համար:

- Ալ այդ մասին չխօսինք, ընդհատեցի ես կոպտօրէն, բաւական է այսքան շնորհակալութիւն, եւ արդէն... տգնիւ չեմ ես, կը հասկնա՞ք, ծանաւանդ ոչ ատիկա...

Իրկար պահ մը լուռ մնացինք:

- Բայց անհրաժեշտ է, վերսկսաւ Լէյլա, վաղը լուսաբացին կը հասնինք արդէն, հաւանաբար իրարու երբեք չհանդիպինք այլեւ... Եւ ըսել որ անուր անդամ չեմ գիտեր, ըսել կ'ուզեմ... իրական անուշտ:

- Պահ, ի՞նչ կարեւորութիւն, ձեզի Ալֆօնսն էր պէտք, չբաւե՞ց ան արդեօք վերջին վայրկեանին: Կ'ուզէք տակաւին որ հարստացնեմ ձեր յիշատակները, կ'ուզէք որ տամ ուրիշ անուն մը... Տոն Գիշօթ, օրինակ:

- Բայց տհաւասիկ որ կը շարանաք:

- Չա՞ր, հըհ, աւելի քան այդ: Ի՞նչ պիտի ըսէիք հասցա եթէ ձեզի իմացնեմ որ ստած եմ ձեզի սկիզբէն ի վեր: Ահա, ըսեմ, տնօրէն չեմ ես, երբե՞ք չեմ եղած:

- Բայց ի՞նչ կարեւորութիւն, բողոքեց Լէյլա, դիտել արդէն: Ես ալ իմ կարգիս պահած եմ ձեզի շատ մը բաներ... իրական անուն... Իվլինն է եւ ոչ թէ Լէյլա: Եւ յետոյ, շարունակեց Լէյլա, եկած էի ձեզի շնորհակալութիւն յայտնելու վերջին անգամ մը եւ պիտի ընեմ, ընդունիք կամ ոչ:

Անգամ մը եւս յայտնեց ու այլեւս մեկնեցաւ:

Չհամարձակեցայ վերադառնալ իմ խուց: Ձէի ուզեր դորձ ունենալ Տոն Գիշօթին հետ որ անկասկած ինծի կը սպասէր ըսելու համար սր յիմար մըն եմ: Պոտալու համար ինծի «յիմար», «տասնապատիկ յիմար»:

...Այդպացին հետ գաղտնիցի Լիրանի ընտանի շրջապիծերը: Երբե՞ք այդքան դրաւիչ չէի գտած գանոնք եւ իրենք ալ, վստահ եմ, զարմացած էին անկասկած դիտ այսքան... դիտ այս վիճակի մէջ տեսնելով:

Շուտով ժամանեցինք: Եւ եղաւ շուտով աննախընթաց իրարանցում: Նաւը քարափին մօտեցաւ: Տենդոտ կերպով երկարեց իր ելաբանները, կարծես կ'աճապարէր Հողայինները Հողին վերադարձընել:

Կան ժամանողները, կան սպասողները եւ կայ իսկական... Բարեկոնք, Ապշեցուցիչ արտորանք մը փակած է բոլորին, մէկը միւսէն առաջ կ'ուզէ ցամաք հասնիլ: Ամէն ոք կը շտապէ վերադառնալ Հողին, վերադառնալ իր հին սովորութիւններուն:

Բայց ես՝ պայուսակ մը ունիմ միայն կղզիքիք եւ... ոչ մէկ անապարանք, տուն հասնելու ոչ մէկ արտորանք: Ուրովհետեւ ես գիտեմ... ես գիտեմ որ շուտով պիտի մանձրանամ: Գիտեմ որ հազիւ հասած, այս ամբողջ մարդիկը պիտի ուզեն վերադառնալ...

Աշուտասիկ ուսանողները: Անառակ են ու անհոգ աւելի քան երբեք: Հողին վրայ ըլլան թէ Գուրին, մեկնող ըլլան թէ ժամանող, միևնոյնն է իրենց համար: Միշտ տօն է իրենց համար:

- Ի՞նչ է, կը պոռայ ինծի աֆօրտիանիստը, սոնդուիները երկու-երկու իջնելով, հոյս, բարեկամ, եւ մնա բարիք:

Եւ պարոն Ալեքսանտրն ալ որ կ'իջնէ ահա, արհամարհոտ, դոտող, սեղանաւորի վայել կեցուածքով:

Եւ վերջապէս Լէյլան, կ'ուզեմ ըսել... Եվրոպայ, իր զխարհով, պայուսակներով, ճիշդ նաև ելած ատենուան պէս: Բայց նոյն Լէյլան է արդեօք, նաև իմ նշանածս: Տարօրինակ, որքան քիչ կը նմանի անոր, որքան տարբեր է, որքան հեռաւոր: Եւ որքան դրաւիչ է... որքան գեղեցիկ:

Պիտի մօտենա՞մ արդեօք իրեն, երթամ հրաժեշտ առնեմ իրմէ: Թերեւս խաղած գեր մը եւս... Ի՞մ գերս այս անգամ:

...Բայց Տոն Քիշօթը հապա: Եւ յետոյ ի՞նչ օգուտ, արգէն հասած ենք, պիտի բաժնուինք արգէն իրարմէ:

Լէյլա կը պայքարի բեռնակիրներու խումբի մը մէջ: Կորսուած երեւոյթ մը ունի, կարծես մէկը կը փնտռէ: Մնողը մօտէն կը հետեւի իրեն: Մայրն է որ կը տեսնէ զիս ամէնէն առաջ ու կը բարեւէ, պզտիկ, ծածուկ ժպիտով մը, ճիշդ ժողովնախի ժպիտով: Եւ այս կ'ըլլայ իրմէ ամբողջ ստացածս:

Լէյլան ալ վերջապէս կը նշմարէ զիս:

- Ահ: Վերջապէս, կ'ըսէ յանդիմանող շեշտով, ո՞ր դժոխքը կորսուած էիք: Կը փնտռէի ձեզ առտունէ ի վեր, գացի նոյնիսկ մինչեւ մեր խուցը: Կարծես

ցի վայրկեան մը որ մեկնած էիք առանց հրաժեշտ առնելու: Չա՛ր, ըսէք, կը մեկնի՞ք առանց ինձմէ հրաժեշտ առնելու:

Ոչինչ չեմ կրնար ըսել իրեն: Այս ամբողջը, իրարանցումը եւ մանաւանդ... Տոն Քիշօթը: Ո՛չ, կարելի չէ: Բայց ի վերջոյ, միայն այդ է մնացած, մնաք բարով մը եւ ուրիշ ոչինչ: Ի՞նչ բանի կը ծառայէ իրար հրաժեշտ տալ-առնելը:

Լէյլա կը բռնէ ձեռքս: Կ'ըսէ միասին: Բայց հազիւ ուրիշ գրած հողին, աղ-պականներու եւ բարեկամներու խումբ մը կը յարձակի մեր վրայ: Ամէն մէկըս մէկ կողմ կը քշուինք: Զիս կը խլուին իմ մարդիկս. կը յախշտակեն զինք իրենները: Կ'ընկղմինք իւրաքանչիւրս մեր ցեղախումբին մէջ:

Կը նշմարեմ զինք վերջին անգամ մը մաքսատան ելքին: Պաշարուած է միշտ իր սոհմին ամբողջով որ կը հրէ գրեթէ զինք գէպի շրջուցիչ ինքնաշարժ մը որ կը սպասէ հետուն: Բայց հակառակ այս հրմշտուքին, առիթը կը գտնէ Լէյլան ետին դառնալու եւ ինծի ձեռք ընելու...

- Պայ-պայ, պայ-պայ, կ'ըսէ ինծի իւրաքանչիւր քայլափոխի:

Բայց հազիւ հասած ինքնաշարժին, ահա կը կենայ յանկարծ, մէկդի կ'ընէ ամբողջ ու կը սկսի իմ կողմս վազել: Կու գայ, կը մօտենայ եւ ես կը պատրաստուիմ բազուկներս բանալ իրեն:

- Քիչ մնաց որ մոռնայի, կ'ըսէ շքուսպառ, քիչ մնաց որ մոռնայի հասցէդ ուզել, շուտ, շուտ կը սպասեն ինձի, տո՛ւր ինծի հասցէդ:

- Հասցէ՞ն...

- Այո՛, այո՛, հասցէդ: Կրնայ պատահիլ որ վերսկսի մեր անպիտան սեղանաւորը, կրնայ պատահիլ որ փափաքները վերստին արթնան, բայց շուտ ըլնէ, շուտ, տուր ինծի հասցէդ...

Կ'առնէ հասցէս ու «մերսի», կ'ըսէ ինծի, «մերսի» անգամ մը եւս, եւ պայ-պայ, պայ-պայ...

Ժ. Ա.

(Շար. 2 եւ վերջ)

Ծ Ա Ռ Ե Ր Ո Ւ Ն

Երբ կը նայիմ ամէն առտու,
 Ճամբաներուն եզերքն ի վար,
 Ծառեր, ձեր վէս կատարներուն,
 Ձեր նիւղերուն մարչ ու դայար,

Կարծես ձեր մէջ իջած չըլլան,
 Ձիւն, փոքորիկ, դաժամ ճմեռ,
 Դուք խաղաղ էք հիմա այնքան,
 Ձեր երազով գարնանաբեր:

Հովերուն ետ դուք կը խաղաք,
 Արեւ կ'իջնէ ձեր նիւղերուն,
 Սիրոյ կարօտը ձեր պապակ,
 Կը փափսսաք զերմ ու բաճում:

Թռչուններուն երգն է ուրախ,
 Ձեր հարսներուն քափ ու ծնծղան,
 Ուր կը փթթին շէն ու խաղաղ,
 Ձեր սնուրջներն այս սէր-գարման:

Դուք չունիք վախ, չունիք ցասում,
 Ճակատագրին դէմ ձեր դաժան,
 Երբ վաղը գան օրեր տրտում,
 Պաղ քամիներ փչեն սրտում,

Երբ հեռաւոր երկիւնքներէն
 Դան ամբուսները կատաղի,
 Ձեր նիւղերուն մէջ համօրէն,
 Ճօնեն սուրբն իրեց վայրի,

Անձրեւներուն շառաչը ցուրտ
 Իջնէ ձեր մէջ օսի նման,
 Գալարներով բիրտ ու բօնուտ,
 Տայ ժամատոտես գոյնը մահուան,

Ձեր տերեւներն իյնան բուռ-բուռ,
 Իյնան գետնին գորշ, անկենդան,
 Ձեր նիւղերուն մահաաբստու,
 Վրան ծածկէ ձիւնը մահուան,

Այդ ծածկին տակ, օ՛ր, ես գիտեմ,
 Ձի կորսուիք ձեզմէ ոչինչ,
 Դայուններուն տենչը վսեմ,
 Պիտի ապրի միշտ ձեզի հետ:

Երնէկ ձեզի, ձեզի՛, ծառեր,
 Երբ մահն է ձեր քաղցրօրը նինջ
 Որուն քոյիւն տակ մթ-ստուեր,
 Կ'ապրի գարնան երազը չինջ:

Գ. ՍԵՂՈՒՆ

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱՅ

ՓՈՒՔՐԻԿ ԴԱԳԱՂԸ

(ՊԱՏՄՈՒԱԾՔ)

Յուզիսի սկզբները գրեթէ ըստըստովն պարտազ էր պանդոկը, երբ Սուրէն Յակոբեան Կիրակի առաւօտ մը հոն ժամանեց: Պրուժանան Լիրանանի լեռներուն ամէնէն դեղնցիկ եւ կանաչազարդ գիւղն է: Մովի եւ լեռան տեսարանները կը մրցին իրարու հետ: Անոնց հետ կը ներգաշնակուին լոճիի խնկարոյր անասուններն ալ՝ որոնք տեղ տեղ, մասնաւորապէս «էլ Լաբիմ» պանդոկին շուրջ, թրթռուն են, որն ի բուն, սկիւթեւ ճըպուտներով, մինչեւ իսկ գիշեր ատեն, երբ նշեկարական լոյսերուն յորդ պարծառութիւնը արեւային դրդումով մը կ'արթնցնէ զանոնք:

Երկու երեք զոյգեր, քանի մը փոքր տղաներով կը կազմէին պանդոկին ամբողջ բնակչութիւնը: Սուրէն Յակոբեան տակաւին ոչ մէկ յարարերութիւն մշակած էր անոնց հետ, հակառակ որ ինքն ալ անոնց պէս Եգիպտոսէն եկած էր: Արդէն առանձնութիւնը սիրող եւ անոր մէջ հոգեկան բաւարարութիւն դտնող մէկն էր ան: Կը սիրէր կարգաւ ժամերով, առանց դոյզն յոգնութիւն դպալու: Իր ճամբորդի պայտասակին կէտը դրամած էին գիրքերը՝ որոնց բարեկամութիւնը դաւանանութեամբ չէր վերջացած երբեք:

Կէսօրուան ճաշէն ետք սովորութիւն ունէր քանի մը ժամ հանգստանալու: Բայց նախապէս անձնատուք կ'ըլլար իր սիրած մէկ գիրքին՝ ուրկէ տասնեակ մը էջ կարդալէ ետքը միայն կը մրափէր: Անոր սենեակին մինչեւ պատուհանները կը հասնէին բակին մէջ գտնուող շոճի-

ներուն սասերը՝ որոնք իրեն կ'ընծայէին անտառին բոյրը եւ ճարտաներուն քաղցը նուազը:

Առաջին օրերը կը վախնար որ կը խոտվէին իր հանդիսար ամբան սիրտէն ծնած եւ արեւով տրեքցած այդ միջատները: Բայց հետզհետէ վարժուեցան անոնց: Ընդհակառակը պատուհան էր: Երբ այցելութեան կ'երթար գիւղին մուտքին գտնուած «Ճրէյնա» պանդոկը, Կիպրոսէն հոն իջեւանած բարեկամի մը, կը թուէր իրեն թէ պակաս քան մը կար զինք շրջապատող բնութեան մէջ: Հոն չկային շոճիներ. ոչ ալ նուազը ճարտաներուն՝ որոնց երգը այլեւս իր տօթեայ ժամերէն անբաժանելի հրապոյր մը դարձած էր:

Կիրակի երեկոյ մը, ընթրիքի պահուն, բաւական թիւով նոր ուղեւոր յայտնուեցան պանդոկին ընդարձակ ճարտարակին մէջ՝ որուն պատուհանները կը բացուէին դէպի ձորը իջնող այգեստանի մը վրայ: Նոր բնակիչներուն մէջ ուշադրութիւն դրաւզ երիտասարդ կին մը կար, որուն սմուռները բաւական տարիքոտ՝ ճաղատ դլուխով մէկն էր: Սեւակնոց մը կը ծածկէր անոր աչքերը: Անոնք որակին խորը, լուսամուտի մը տուփեւ դրամած սեղանը դրամած էին: Բայց առանձին չէին: Նորածին մանկան մը օրօրոց-անկողինին նմանող հանգստարան մը չորս անիւներու վրայ, անոնց ճաշասեղանին կցուած էր: Երեք կամ չորս տարեկան անդամալոյծ տղայ մը կար պատկած: Թուր կապոյտ աչքեր ունէր ան, արթորինակ կերպով արտայայտելի-

որտայո՞ղ քաղցրութեամբ մը լեցուն: Թախանձագին, տրամահարորդ բան մը կար նայուածքին մէջ: Անոնց այդ աղաւանքը կ'ուզուէր ո՛չ միայն դիտողներուն, այլ նաև շուրջը գտնուող անկենդան բայց տեսանելի աշխարհին: Տպաւորիչ թախիծ մը կարծես աւելի կը գեղեցկացնէր կնոջ դիմագիծերը՝ որոնք շարունակաբար ներքին անդունդներ մը ազդեցութիւնը կը թուէին կրել: Անոնք, ամուսին եւ կին, իրենց աչքերը յառած էին աղուն, եւ մեքենական շարժումներով միայն կ'ընթերցէին, առանց ուշադրութիւն պարձնելու սպասեակին՝ որ սկաւառակներուն մէջ երկրորդ կերակուրը կը լեցնէր: Գինիի բացուած շիշ մը կար սեղանին վրայ: Ամուսինը Հազիւ լսելի ձայնով բան մը Հարցուց կը նոջ՝ որ Հաւանութիւն յայտնեց գլխու շարժումով: Լեցունեցան բաժակները՝ զորս անոնք իրարու բախեցին ժպտելով թեթեւօրէն եւ իրենց շրթներուն ծօտեցունքին զսպում յաւուրով:

Տղան աչքերը դոց էին: Կը քնանար: Եսա մեղմամայն կը խօսակցէին ճաշողները: Սպաւոր բան մը կար օդին մէջ: Հողեմաշ էր կարծես այդ Կիրակի դիշուան բնթրիքը:

Պանդուկին բնակիչները Հեազհետէ կը խմբուէին պարտէզով եզերուած բակը՝ ուր քանի մը աղաներ կը վազվզէին ծառերուն շուրջ: Դեռ չէին յոգնած եւ կ'ուզէին ամբողջ օրուան իրենց խօսածեալները դիշերն ալ շարունակել: Ելելուտրական լոյսերու յորդ պայծառութիւնը արեւային պարծանքով մը արթնացած էր ճպուռներն ալ՝ որոնք կ'աղմկէին խաղաղաւէտ դիշերը իրենց ձայնը խառնելով երգապնակէ մը լսուող պարերգին: Բակին բոլոր անկիւնները դրուուած էին, երբ նորեկ զոյգը անդամալոյծ աղուն մահապառք բերին եւ շոճիի մը տակ տեղաւորուեցան երկու թիկնաթոռներու մէջ: Հիւանդը կը քրնանար միշտ: Մահատիւղ դալկութիւնով մը ծեփուած էր գէմքը՝ որուն կէսը ստուերի մէջ էր, եւ միւս կէսը ծառէն իջնող լոյսին Համբոյրովը օծուած:

Սուրէն Յակոբեան նստած էր առանձին բակին մէկ անկիւնը՝ ուրկէ քաղաքին պլպլուն լոյսերը կ'երեւային, ծովին մութ պարանոցը զարդարող աղամանգակուտ մանեակի պէս: Ան կը մտածէր Հիւանդ աղուն վրայ եւ միտքին մէջ կ'արթննար, տասնեակ տարիներ առաջ Լէյլէն գտնուած միջոցին, նմանօրինակ փոքրիկ Հիւանդի մը յիշատակը: Անոր ծնողքն ալ այսպէս երիտասարդ կնոջ մը եւ տարիքոտ մարդու մը պատկեր կը կազմէին: Անոնց դուստին ալ շորս տարեկան Հազիւ կը թուէր ըլլալ: Իրարմէ այնքան Հեռուոր կէտերու վերայ, ցաւատանջ յոյսերով ու մահացող վերքերով բարախուն աշխարհի մը մէջ, երկու անձանթ ճակատագիրներ կը Հանդիպէին իրարու:

Մանրաթախիծ մտածումներով կը ճնշուէր անոր սիրտը: Եսա անգամ գրծախտ եւ անժառանգ զգացած էր ինքզինքը, ամուսնացած, ընտանիք կազմած ըլլալուն Համար: Ան խուսափած էր միշտ սրտի կապեր ունենալէ: Սէրը անոր Համար վշտի ամենաթեթեւ խորշակէն թառամող ծաղիկը եղած էր, ամէն անգամ որ Սուրէն Յակոբեան իր զգացումներուն եւ երազներուն Հետ ներդաշնակուող վերաբերում եւ ջերմութիւն չէր գտած սիրուած կնոջ մը կողմէ:

Մէկը միւսին ետեւէն ծփիկ մը կը վառէր եւ կը Հառաչէր վշտակոծ Հողիով, ինչպէս եթէ զաղտնահիւս կապով մը միացած ըլլար այդ դժբախտ զոյգին:

Ելաւ եւ պահ մը վարանտո՞ քանի մը քայլ առնելէ ետք՝ գանդազօրէն յառաջացաւ դէպի մօտակայ անասուր տանոց ճամբան: Վերադարձին արդէն դուրեթէ բոլորովին ամայացած էր պանդուկին պարտէզը: Եոճիներուն լոյսերը մարած էին: Ծպուռները կը քնանային, ըսպասելով այդուն տուալին շողերուն, երբ Հազարաւոր փոքրիկ ծննդաներով պիտի վերսկսէին իրենց Համանուագը: Քանի մը վայրկեան նստաւ մութին մէջ եւ դիտեց քաղաքը՝ որուն ազամանդէ մանեակը կը պսպղար ծովեզները նետուած եւ աստղերու կամարէն քաշուած կախար-

դական ուսկանի մը պէս: Աւելի խորունկ վիշտով, աւելի դառն ափսոսանքով, որ կեանքը յաղթած էր մահուան, եւ ինքը վերադարձած էր Լէյզլէնի Բուժարանէն, աւելի տարած սպասումներ չգալով՝ երջանկաբեր զաղտնիքներէ Սուրէն Յակոբեան անգամ մը եւս անդրազարձաւ իր առանձնութեան վրայ: Հիմա կրնա՞ր ըսել ան ձեռքը որտի՞ն վրայ, երզումը ընող մէկու մը պէս, որ ինքը նուազ դժբախտ էր այդ փոքրիկ հիւանդին հօրմէն: Յանձն պիտի տանէ՞ր փոխէլ իր ճակատագիրը անոր ճակատագրին հետ: Անոր տառապանքը, անդուհանքը, իր հողիէն, սիրովառ երազներէն Խոնդածուած այս աղաղուն էակը կորոշնցնելու վախը աւելի խորհրդաւոր ու խարհ մը շէ՞րն կազմէր. մինչդեռ ինք մինակ էր աճա՛: Կեանքի ճամբուն վրայ չէր Հանդիպած մէկու մը՝ որուն ձեռքին մէջ սրտաբացօրէն դրած ըլլար իր սարսուղին ջերմութեամբ օծուն ձեռքը:

Գլանիկ մը եւս վառեց եւ ծօխը անյազօրէն ներշնչելով դիտեց զատիվօրը՝ որ կ'երկարէր մինչեւ ձորին մէջ՝ ուր տակաւին քանի մը տուներ իրենց յոյսերը չէին մարած: Տեսաւ երկու ըստեւերներ՝ որոնք պահիկ մը անշարժացան ճամբուն եզերքը եւ քաղցրամրմունջ խօսքեր թեւ առին գիշերական խոր լուռութեան մէջ: Թրեւեւ իմ քովէս ալ տեսնօք անցաւ երջանկութեան ոգին, եւ ես անուշադիր գանուէցայ. մտածեց ան:

Նախանձը սենեակին մէջ բերել կուտար, քանի որ առանձին էր միշտ: Այսպէս աւելի ազատ կը զգար ինքզինքը եւ Ենթարկուած չէր սպասեակին: Կէսօրին նկատեց որ փոխած էին իր սեղանը՝ որուն վրայ միշտ փոքրիկ անօթ մը կար անտառէն քաղուած վայրի ծաղիկներով լեցուն: Աւելի մօտ էր հիմա նորեկ զոյգին: Կինը տարբեր շքեղագեղ մը հագած էր: Սպիտակ պարանոցին շուրջ կը կրէր մարգարտաշար մանեակ մը: Յայտնի էր որ մեծահարուստ էր ամուսինը եւ կամ ինք փարթամ հօր մը աղջիկն էր: Ամէն ինչ իր Հանդերձանքին մէջ այս իրականութիւնը կը մտանէր: Մահճակատ

քին մէջ պառկած էր աղան: Անոր երկու կողմերը դրուած էին մանկութիւնը հրապուրող խաղալիքներ: Արջ մը, փիղ մը, եղնիկ մը եւ Թռչուն մը երգներանգ փետուրներով: Տղան երբեմն իր ուսուսպառ ձեռքերուն մէջ կ'առնէր անոնցմէ մէկը եւ կը մօտեցնէր դայն աչքերուն՝ որոնց մէջ ժպիտի մը տարտամ երազը կը շողար:

Պանդուկին քարտուղարին հետ ունեցած խօսակցութենէ մը ետքը՝ Սուրէն Յակոբեան դիտէր հիմա, որ նորեկները հայ էին: Անոնք այնքան մեղմամայն կը փոխանակէին իրենց խօսքերը, որ շուրջը զանուագները չէին կրնար լսել: Հիւանդը տակաւին բառ մ'իսկ չէր արտասանած: Անոր լայնարաց աչքերը միայն կը խօսէին այնպիսի սրտամտիկ աղաչանքով, որ երկար ատեն չէիր ուզեր նայուածք յառել անոնց:

Յետ միջօրէ մը, իրիկնամուտէն շատ առաջ, Սուրէն Յակոբեան պտոյտի գացած էր Մեթնիի այգիներու ճամբան, երբ դիմացէն կու գար վշտահար մարդը: Առանձին էր ան, թախծոտ աչքերը բարեւեցին բունպարտիկ ժպիտով մը: Սուրէն Յակոբեան պատասխանեց խոնարհելով ու շարունակեց գառիվերէն յառաջանալ:

Այդ գիշերն իսկ, ընթրիքէն ետք, անոնք ծանօթացան իրարու:

Պաղտատէն, մեծահարուստ Մեարուպ Աւագեանի աղջիկն էր ան: Ամուսնացած էր նկարիչ Արտակ Սարգիսեանին հետ՝ որ նկարչութեան դասեր կու տար իրեն: Միջահարած էր իր ուսուցչին՝ որ քսան տարեկան աւելի մեծ էր իրմէ: Ծնողքը նախապէս բուն կերպով ընդգիտացած էին այս անյարմար միութեան, բայց վերջ ի վերջոյ սեղի տուած էին իրենց աղջկան անտեղիտալի կամքին առջեւ:

Անոնց առջինեկ զուակն էր այդ անգամալոյծ համր աղան:

Սուրէն Յակոբեան աւելի համարձակութիւն տուաւ անոնց մօտենալու, հիմա որ իր գլխաւոր գիծերուն մէջ որոշ ծանօթութեան մը հասած էր: Մինչեւ իսկ միասին պտոյտի կ'երթային անոնք զէ-

պի անտառը տանող Հարթ ճամբուն վրայ իրենց հետ առնելով հիւանդը մահահապառքին մէջ պակաս խոշոր պուպրիկի մը պէս: Ուրիշ օր մըն ալ գէժ դիմաց եկաւ ան Եւզինէ Մարգիսեանին հետ Մեթնիի վանքը առաջնորդող զատիվներին վրայ: Այս անգամ կանգ առին, շարունակելու համար յետոյ իրենց պտոյտը ստուերաշող ծառերուն տակ:

Եւզինէ խօսելով իր ամուսնութեան մասին՝ այսպէս արտայայտուեցաւ. — Իր քույր շարժումները, խօսելակերպը, ձայնին շեշտը, վերարերուսը իր աչակերտներուն հետ այնքան հմայք ունէին, որ ես վստահ էի առաջին զգացումներու մասին: Ազնուասիրտ ամուսին մը պիտի ունենայի: Չեմ խաբուած երբեք: Մեծ երջանկութեան մը հառած պիտի ըլլայինք, եթէ ճակատադիրը չհարուածէր մեզ:

— Ուրեմն, որեւէ յոյս չկա՞յ:

— Քանի՛ քանի՛ բոխիկներու դիմեցինք: Լոնտոն, Փարիզ, Միացեալ Նահանգները: Միակ սիրտիանքս այն է որ հարուստ է հայրս եւ մեզի չէ վրանար իր օղնութիւնը: Բայց բարեխաւովի ոչ մէկ նշան մինչեւ հիմա: Դժբախտ մայր մըն եմ: Չաւկիտ մայրն չեմ յսած դեռ:

Աչքերը պզտորեցան արցունքով:

Սուրէն Յակոբեան փորձեց միտքաբական քանի մը խօսքերով մեղմել մայրական վերաւոր սրտին կակիծը: Խօսքեր՝ որոնք ձեւակերպական արտայայտութիւն մըն էին սոսկ:

Օրերը կը յաջորդէին իրարու: Վիլ Հաքիմ՝ պանդուխտ մէկ պարսպ սենեակ չկար: Նոր ճամբորդներ ժամանած էին: Սեղաններուն թիւը աւելցած էր ճաշարանին մէջ: Պանդուխտ վրայ մանկութեան տիրապետութիւնը աւելի ժխորալից դարձած էր: Պաղտատէն ժամանած էին Եւզինէին ծնողքը՝ որոնց հետ շուտով ծանօթացաւ Սուրէն Յակոբեան:

Օգոտոտսի մէջ կարծես աւելի բազմացած էին ճպուռները՝ որոնք առնուող շատ կանուխ, հազիւ ծառերուն կատարները ոսկեղօծուած, կը սկսէին իրենց միայր Կուպր: Ճպուռներուն հետ՝

աղաներուն եւ աղջիկներուն թիւն ալ տարօրինակ կերպով աւելցած էր, պանդուխտ բակը վերածելով մանկապարտէզի մը դրօսատեղիին:

— Երբ կը տեսնեմ այս փոքրիկներուն խաղը, երբ կը լսեմ անոնց ուրախ զուարթ կանչերը, սրտէս արիւն կ'երթայ: Հոգիս կը խռովի անոնց յարուցած ազմուկներէն: Պիտի ուզէի խաղաղ պանդուխտ մը կը կրթալ: Ամուսնիս խօսեցայ այս մասին: Համաձայն գտնուեցաւ ինծի: Հաւանական է որ քանի մը օր ետքը աւելի վերը, ճամբուն եղբքը հանդարտ պանդուխտ մը փոխադրուինք:

Սուրէն Յակոբեան իրաւունք տուաւ անոր եւ յայտնեց որ Վիլ Հաքիմ՝ պանդուխտ արձակուրդի եկող աշակերտներու արշաւանքին ենթարկուած էր կարծես: Եւզինէ ժպտեցաւ:

Փոքրիկ հիւանդը աչքերը լայն լայն բացած կը դիտէր երկնակամարէն սահող ամպերը՝ որոնք Մեթնիի բարձունքէն դէպի արեւմուտք ձորին վերեւ կ'իջնէին:

— Խնդրակտուար Աստուածամայր մըն է եղեր այդ վանքի Տիրուհին, ուխտի պիտի երթանք երեքս միասին, մըմնջեց Եւզինէ տրտմաբախիտ աչքերը սեւեռած հոն, վերը հսկող վանքին՝ սրբիչ աղօթասացութեան ձայնը կու զայնի:

Բայց տակաւին ուխտագնացութիւնը չէր կատարուած, երբ առաւօտ մը ամբողջ պանդուխտ խռովակոծ երեւոյթ մը կը ներկայացնէր, խաղաղ ծովի վրայ անշարժացած նաւի մը պէս:

Գիշերուան ընթացքին, կարճատեւ հոգեվարժէ մը ետք, անդամալոյծ տղան քոցած էր իր խոշոր զարմանահար աչքերը, զարմանահար՝ որովհետեւ շարաշուք խորհուրդով մը միայն բացուած էին անոնք լուսութեան եւ անթափանց երազի այս աշխարհին մէջ:

— Նետահար թռչունի մը պէս մեռաւ խեղճ զաւակս...

Սուրէն Յակոբեան ոչ իսկ փորձեց միտքարական խօսք մ'ընել Եւզինէին՝ որուն քովէն չէին հեռանար ծնողքը եւ ամուսինը:

Յեամիջօրէին կաղնեփայտէ փոքրիկ դադաղ մը դրուած էր պանդոկին հիւրասրբոսհին մէջտեղը, բորբոսի սեղանի մը վրայ: Մահապսակներուն հետ կային վայրի ծաղիկներու դէպքը՝ զորս անտառին կածաններէն եւ արահետներու եզերքէն քաղած էին պանդոկին տղաքը:

Դադաղին քով նստած էր Եւդիէնէն, բազկատարած: Երթունքները կը շարժէին անլուսի ազօթքի մը մրմունջներով: Փոքրիկ դադաղը լռեցուցած էր առօրեայ բոլոր ձայները: Ո՛ր մէկ ժխոր կը վրդովէր պարտէզին լուսթիւնը: Մահուան ստուերը կը ճնշէր հողիներուն վրայ: Ընդունե՞րն իսկ լուծ էին եւ երբեմն միայն ծառի մը մէկ ստէն միւսը, չփոթահար նուազածութեան մէջէն լքուող հնչիւններու պէս, քանի մը մեղմ մաձայն ծնծղաներ կը բախէին իրարու:

Ինդրահատուր մահը փութացած էր վերջ դնելու դժբախտ մօր մը շարժարանքին:

Հետեւեալ օրը սենեակներուն մէջ իրարու քով եկան տղաքը: Ամբողջ օրը լռութիւն տիրեց բակին մէջ՝ ուր ծառի մը տակ լքուած էր մեռած հիւանդին մահճակառքը:

Սուրէն Յակոբեան փոխադրուեցաւ Պասպուտա դիւղը, կապոյտ պատուհաններով խաղաղ պանդոկ մը: Բայց միայն երկու շաբաթ մնաց հոն: Աչքին առջեւն էր միշտ կաղնեփայտէ փոքրիկ դադաղը եւ անոր մէջ փակուած խոշոր սրտայոյզ աչքերը՝ որոնք զարմանքով կը դիտէին դեռ իրենց տեսողութեան ծիրին մէջ՝ երազային աշխարհի մը կրտսուած տեսիլքը:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԱՉՔԻՍ ԴԻՄԱՑ

Աչքիս դիմաց ծագկած ծաղիկ եւ մաշխում,
Ոտքի՛ ելիք, շարորակով հիւ՛ր դում,
Գո՛գը մետուիր իմ սարաշէկ երգերում,
Եղանակին անշեղ ռիթմով պարե՛ դում:

Աչքիս դիմաց, սրտիս գամուած բոցի պէս
Դում կը վառիս, դում կը վառես, կ'արքեցրնես,
Հեքիաքսահիւս կեանքիս ուղին շրջելով՝
Քիս կը բաշես, կը մօտեցնես սրտիդ ինձ:

Աչքիս դիմաց, կրծքիս փռուած լոյսի ծով,
Սիրոյդ հրեղէն պեպկներով գիտ կ'օրրես,
Շուշանաքոյր բազուկներուդ գրգանքով՝
Ափէ՛մ էշուած սիրտս սիրոյդ մէջ կ'առնես...:

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ

Հոբելուտ

ԱՇՆԱՆԱՅԻՆ

Թռչուններուն տօնահանդէսն ո՞ւր է հիմա,
 Ամառուան գոլ ու սամազուն երկինքներուն.
 Եւ ո՞ւր գացին ծիծեռնակներն, ո՞ր հեռակայ
 Ու անծանօթ հորիզոններ երազամոյն:

Բաժանումէն այդ տխրաւէտ իջեր է, տե՛ս,
 Իր կարօտն հիւանդ՝ տրտում մի դալկաւթիւն,
 Փողոցներուն ու մայթերուն կուրծքին կարծես,
 Կը հնչէ լուռ, անցելայուշ երգ մ'օրորուն...:

Յօդաթաթաւ առաւօտներ սյաղ, սրսիւն,
 Օ՛, դալկահար տերեւներուն շշուկն անուշ,
 Խոնջ արեւուն դէմքն ուժասպառ ու նուազուն
 Կ'օրրին հիւանդ կարօտ մը խոր ու թախծանուշ:

Աշունն դալուկ չո՞ր տերեւներ, մէկ-մէկ ինկած
 Մտռերն ի վար գետնին վրայ լուռ ու խաղաղ...
 Դուք արցունքներ բլլաք կարծես աչքերէ թաց
 Յօդուած վրան այս մայթերուն տրտմաշաղախ:

Ճամբաներուն վրան լճուած, հիմա կուլաք,
 Կը քափառիք ուղեկարոյս հովու շունչին,
 Այդ ի՞նչն է որ կը հայածէ ձեզ շարունակ,
 Սէ՛րը գարնան, թէ՞ մօտալուտ քուրջ ձիւնին:

Թափառեցէ՛ք հիմա անտուն եւ անօթի,
 Երազելով անցէ՛ք մուր ճամբաներէն,
 Ե՛տ կանչեցէ՛ք գարունն անցած կմաչ կեանքի,
 Եւ օր մըն ալ անհետացէ՛ք ձմրան ցուրտէն:

Գ. ՍԻՀՈՒՆ

Հանդիպումներ ԿԱՆԱԿԵՐՔՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

- Կամայ, գրացիները չլսեն, - փոփոսց Լեւոն:
- Աղջկան ձեռքէն բռնած, մաշած աստիճաններէն կը բարձրանային մութին մէջ:
- Զգոյշ, հոս կտորած քար մը կայ:
- Հասան տանիք եւ՝ մատներու վրայ կոխելով՝ մտան իր սենեակը եւ փակեցին դուռը լաւ մը:
- Հիմա ապահով ենք:
- Լոյսը չվտակեց, անշուշտ: Աղջիկը կը դողար:
- Լէտնէ, կը կարծես, որ սխալ չէ ըրածս... այսինքն՝ եթէ լսուի... Dio mio, կատարեալ աղէտ մը կ'ըլլայ... Վա՛յ ինձ, վա՛յ ինձ... - Խենթ մի ըլլար, - ըսաւ Լեւոն, բայց ինք ալ չհաւատաց բռածին:
- Մութին մէջ տեսաւ աղջկան աղապատանքն ու արցունքները: Մէկէն, երկուքն ալ անդրադարձան իրենց յանդիմութեան ծանրութեան: Աղէտ մը: Ատկէ միայն անձնասպանութիւնը կրնար փրկել աղջիկը: Բայց սէրը դիտէ խղճմտանքը քնացնելու կախարհանքը:
- Մարիան նստեցուց աիւանի վրայ:
- Հանդարտէ, - ըսաւ:
- Մեխակները բուրբիցին թաղարներէն:
- Ի՞նչ յիմարութիւն էր... Նախ իմ սենեակս, հիմա քու սենեակդ... Եթէ լսուի, միայն մահը... Մահն իսկ չի կրնար սրբել ամօթը... Անհաճոյ, անստոյգ պահը:
- Տանիմ քեզ ետ... Մարիան նստած էր: Կ'ուզէր փախչիլ, իր անձէն դուրս գալ, թողու մարմինը ու փախչիլ: Խորունկ, քաղցր ձայն մը զինք վար կը քաշէր, առանց պնդելու, առանց համոզել ջանալու... Զայն մը եկաւ դուրսէն, երկուքով ցնցուեցան: Աղջիկը պիտի նուազէր: Լեւոնի ձեռքը փարեցաւ իր ձեռքին, սեղմեց ու մտաց: Հանդարտեցան: Յաջորդ բանը, որ կը յիշէր, մէկէն պլլուած էր Լեւոնի եւ ըրթները միացած: Պահն անցաւ մտերմութեամբ, խենթօրէն, շատ հեշտանքով:
- Այլ ուշ է, պէտք է երթամ

- Քիչ մըն ալ, գեռ գիշերը անհուն է:
- Երեք ես, ծնողքիս ինչ պիտի ըսեմ... վստահ եմ, մայրս պիտի ճշդէ՛ թէ ուղիղ կը խօսի՛մ... Ընկերուհիս պիտի հարցնէ... սակայն անոր վրայ կատարեալ վստահութիւն ունիմ...
- Ի՞նչպէս կարելի է վստահիլ ձեզի... Ձեր մօր իսկ հանդէպ կը դաւէք...
- Մեղքը ձեր վրին... Փորձութիւնը քեզմէ ծնաւ... Դուն է, որ զիս Հմայեցիր... Մեղքը վրե՛... Դու չըսիր, քանի անգամ հարցուցի... Ինձմէ առաջ բնաւ սիրած ես... Ըսէ՛, ի՞նչ կ'ըլլայ...:
- Սիրած... չեմ գիտեր... Ամերիկա աղջիկ մը կար, ... Բայց այդ սէր չէր...:
- Ուրի՞շ
- Ուրիշ... Հայ աղջիկ մը...
- Հա՛, ատիկա՛, պատմէ անոր մասին
- Ըսելիք բան չկայ
- Պատմէ՛
- Տղան մտայնեցաւ:
- Պատմէ՛, կ'աղաչեմ
- Ուրիշ օր
- Ձայնը այնքան զճառական էր, որ աղջիկը չպնդէր: Կասկածը սողոսկեցաւ սիրտը: Անձանօթ, Հայուհին նկատեց իր սուսը: Ի վերջոյ ան պիտի յաղթանակէ, կը զգամ, գիտեմ, ըսաւ:
- Երթում, ուշ է:
- Լեւոն գոռուլութեամբ բացաւ դրան կողմանքը, դուրս սահեցան: Ստուեր մը շարժեցաւ մութին մէջ: Սրտերնին թիրտայ: Փաթման էր:
- Աժօթ ձեզի, - ըսաւ:
- Բան չկայ, մի վախնար, - ըսաւ Լեւոն դաղիերէն:
- Ո՞վ է, - դողաց աղջիկը:
- Մօրդ պիտի ըսեմ, - ըսաւ Փաթմա:
- Մարիա ճանչցաւ զինք հիմա:
- Օ, Լէոնէ, մեր լուսցարարուհիին աղջիկն է... Եթէ մօրս ըսէ... Կորուսած եմ...
- Մի վախնար, - ըսաւ Լեւոն եւ դառնալով Փաթմային, - եթէ բառ մը չձո՞նես, կը սպաննեմ քեզ...
- Գիտէի, գիտէի... Հայրս կը խեղդէ զիս... Ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ պիտի ընենք...
- Երթանք, - ըսաւ Լեւոն եւ թեւէն բռնած՝ իջեցուց աղջիկը, որ աշխան տերեւի մը պէս կը դողար: - Մյն պիտի ըլլայ, որ հօրդ պիտի ներկայանամ եւ տէր դառնամ քեզի...
- Ընկերացաւ մինչեւ իրենց դուռը եւ արագ, ետ իր տունը բարձրացաւ: Փաթման դեռ դուրսն էր:
- Անպիտան արարած, - ըսաւ, - զգուշի լրտես, ես քեզի ցոյց կու տամ:
- Հապա աժօթ չէ՞, որ դուն աղջիկներ սննեակը կը բերես ու դուռը կը փակես, աժօթ չէ՞:
- Եւ դո՞ւն ես այդ ըսողը... Գու ի՞նչ դործն է... Մէյ մը մօրդ ըսեմ առաւօտուն, որ հասկնաս:

- Ոչ, խավովա, մի բեր, կ'ընեմ ինչ որ ըսես, ծորս բան մի բեր:
 - Լա՛ւ, լա՛ւ, - ըսաւ Լեւոն թեթեցած, - այս անդամ կը ներեմ:
 Եւ հինգնոց մը սահեցուց ձեռքին մէջ: Ինքն ալ չհասկցաւ թէ ինչո՛ւ տուաւ կաշառքը, որ տկարութեան նշան էր... Բայց այլեւ ուշ էր...
 Մտաւ սենեակ, նետուեցաւ անկողին, երկու ձեռքերով ծածկեց կրծքը: Ամօթ, նուատացում: Վատութեան հողերանութիւն մը: Աղջկան յուսահատ դրութիւնը: Ի՞նչ պէտք էր ընէր, չէր կրնար վատաբար լռել: Ձէր կրնար:

Մարիա լրտեսի մը նման սահեցաւ խոկացող դռնապանի ժտէն, հագիւ կարողացաւ բարձրանալ սանդուղիները (վերելակ չմտաւ՝ աղմուկ չհանելու համար) եւ մտաւ իր սենեակը: Մայրը ներսէն կանչեց.

- Եկա՛ր, աղջիկս:
 Պիտի նուազէր, վստահ էր, որ սիրտը պահ մը կանգ առաւ: Հազիւ կրցաւ մտնել:

- Այո:
 Ինկաւ անկողնի վրայ եւ փոճկեցաւ: Երկար լացաւ: Մինչեւ առաւօտ, նոյն դիրքին մէջ, կարծես անկենդան պառկեցաւ անքուն: Տեղ մը, յուլօրէն արթնցաւ գիտակցութիւնը, կշռեց, դատեց, որոշումներ տուաւ, մերժեց ու նոր որոշումներ փնտռեց: Կեցած էր նոյն կէտին:

Ձէր կրնար այսպէս շարունակել: Գայլ առ քայլ դաճափեամ էր: Ամօթը, արժանապատուութիւնը, վայելչութիւնը կործնուցած էր: Իր անձին հանդէպ յարգանքը փլած էր, - քայլ մը ետ եւ կատարեալ անկում: Ի՞նչպէս, ո՛ւր եւ ե՛րբ է, որ սկսած էր դաճափեմ:

Եթէ տակաւին պատահած չէր մեծ աղէտը, զայն կը պարտէր Լեւոնի առնական վեհութեան, ոչ իր իսկ հպարտութեան: Անհնար էր այսպէս շարունակել: Անհնար էր մանաւանդ, վերագտնել կորուսածը: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ:

Անհնար էր այսպէս շարունակել:
 Եւ ահա, մէկէն սուր ջութակ մը ճլաց էութեան մէջ: Միջոցը երանութեամբ որողուեցաւ:

Ի՞նչպէս չէր անդրադարձած: Մէկէն յիշեց, որ Լեւոն ըսաւ, որ եթէ խնդիրը երեւան ելլէր, ինք պիտի ներկայանար իր հօրը եւ «Տէր գառնար իրեն»... Այն ատեն, յուզումին մէջ չէր անդրադարձեր խօսքերուն: Միտակ չէր, լքուած չէր, ուրեմն: Իր կողքին պիտի կենար սէրը:

Լեւոն եւս չկրցաւ ջնանալ: Միայն առաւօտեան դէժ, հազիւ ժամ մը փակեց աչքերը: Ետտ կանուխէն արթնցաւ: Լեղի համ մը կը զգար էութեան մէջ: Նուստստացումի այրուցքը դեռ կը յամենար: Կ'ամչնար լոյսին նայելու: Ինչպէս կրցած էր աղջիկը այդքան նուստացնել: Այն ատիճան, որ կաշառք տալու իսկ զիջեցաւ: Ամբողջ խնդիրը անվայել էր: Իրեն համար աններելի: Ինք, որ ինքզինք միշտ ուժեղ էր զգացեր: Ուսուցիչը, Վարուժանը, մայրը... Ի՞նչ պիտի ըսէին: Ժամանակ էր ինքզինք թօթուելու: Ժամանակ էր որոշում մը անելու:

Լեւոն առաւ այդ որոշումը:

Մինեօր Մարտինելիի յոգնած ատն դարձաւ դորձէն: Ներս մտնելուն պէս, կնոջ դէմքին՝ տեսաւ լուրջ մտահոգութեան մը ծանրութիւնը: Ոչինչ ըսաւ: Ըստ սովորականին՝ մտաւ՝ լուացուելու:

Նախ քան ամուսնոյն դալը, Տիկ. ձինս Մարտինելի երկար խօսեցաւ Մարիայի հետ: Մայր եւ աղջկայ այն մտերիմ խօսակցութիւններէն էր, զոր եւրոպացիները բացարձակ կերպով կ'ունենան իրենց աղջիկ զաւակներուն հետ, ծանրանալով մինչեւ իսկ սեռային խնդիրներու:

Մարիան սկիզբը վերապահ, հետզհետէ սիրտը լիովին բացաւ մօրը: Յայտնեց, որ խննթի պէս կը սիրէր Լեւոնը եւ որ՝ եթէ ան յօտարէր, պիտի ամուսնանար հետը:

- Իսկ ան, նոյնքան կը սիրէ՞ քեզ, - Հարցուց մայրը:
- Անշուշտ, վստահ եմ:
- Ըսած է քեզի այդ բանը:
- Անշուշտ... Ը... այսինքն՝ վստահ եմ...
- Հարցումիս պատասխանէ, Մարիա՛:
- Ոչ: Այդ մասին կասկած իսկ չունիմ:
- Շատ լաւ: Կնոջական բնազդիդ ապաւինէ:
- Կասկած՝մի ունենար, մայր, լաւ կը ճանչնամ դինք: Աւելին չեմ կրնար ըսել:

Վերջին Հարցում մը.— Բնաւ ամուսնութեան խօսք ըրա՞ւ քեզի:
- Ոչ դեռ:

Ձինս Մարտինելի շարտայայտուեցաւ, բայց բացայայտ էր, որ դժգոհ էր: Աղջիկը կոթնելու խարխուհ չունէր: Միայն ըսաւ.

- Աւելորդ է ըսել, որ անձիդ տէրը կը մնաս... Ոչնիթ արարք մը չես դորձեր... Ընտանիքիդ եւ աղջկայ պատիւը մաքուր կը պահես...
 - Մամմա՛, - գոչեց աղջիկը եւ պլլուեցաւ մօրը:
- Միտին լացին:

Մինչ այդ Մինեօր Մարտինելի լուսցուած, չքուած ներս մտաւ ճաշասենեակ:

- Ճաշը պատրաստ է կը յուսամ, գայլի նման քաղցած եմ:
 - Այո, - ըսաւ Տիկ. Մարտինելի, - դուն ալ միայն ուտելիքի մասին կը մտածես:
 - Ահա թէ ինչ, կա՞յ աւելի կարեւոր Հարց այս պահուս: Եթէ այո, ըսէ՛ք՝ որ գիտնամ... Դու, Մարիա, ի՞նչ ունիս...
 - Ոչինչ, ինչո՞ւ կը Հարցնես, Բարբա՛...:
 - Վերջերս... Ի՞նչն է, որ կը տանջէ քեզ...:
 - Հիմա ասոր ժամանակն է, - ընդմիջեց կինը:
 - Հիմա, կամ աւելի ուշ... Հարցը տրուած է... Դուն առաջուան աղջիկը չես... Բան մը կը մտահոգէ քեզ... Երանի ըսէիք գոնէ մօրդ...
 - Աւելի հոգ, այժմ եկէք սեղան, կերակուրը կը պաղի:
- Նստան:
- Ո՞ւր է Բրանդիմ... մէկ հաճոյք ունիմ... Բաժակ մը գինի ճաշիս հետ... այդ ալ անպայման կը մոռնաք:

Ահասարակ շատ բարեկիրթ էր Պրն. Մարտինելի: Բացայայտ էր, որ ջղային վիճակ մը ունէր:

- Ե վի՛վա, - գոչեց եւ գինին մէկ ումպով պարպեց, ապա բերնին կղպանք դրաւ. ամբողջ ընթրիքի ընթացքին բառ մը չարտայայտեց:

Տիկ. Մարտինելի մէկ երկու անգամ ջանաց խզել լուսթիւնը, միւս երկուքը անհաղորդ մնացին: Մարիան Հաղիւ քանի մը պատառ ծածկեց: Մարտինելի խողի նման կերաւ, ինչպէս միշտ:

Երբ մայրը սուրճը բերելու համար խոհանոց դնաց, Պրն. Մարտիննիլի աչքերը վերցուց եւ սուր կերպով յառեց աղջկան, որ շտանել ձեւացուց, եւ սակայն տուայտեցաւ խիստ հայեացքին տակ:

- Կ'ուզեմ ատանձինն խօսիլ քեզի հետ - ըսաւ հայրը եւ շարունակեց պտուղը ուտել:

Մարիա չպատասխանեց: Երբ մայրը վերադարձաւ սուրճերը ավտէին մէջ, աղջիկը մէկէն բարձրացաւ սեղանէն, արագօրէն մտաւ իր սենեակը եւ դուռը աղմուկով փակեց:

- Ի՞նչ պատահեցաւ, Ի՞նչ ըսիր իրեն, - հարցուց կինը:
- Ոչինչ... Բացարձակօրէն ոչինչ... Այժմ դպրոցները հմտութիւն կու տան, բայց բարեկրթութիւն չեն սովորեցներ...
- Անպայման բան մը ըսիր, որ այդպէս վերաբերուեցաւ:
- Ոչինչ:

Սուրճը տաւ եւ սկսաւ հանդարտօրէն բնակիլ:
- Չէք թողուր, որ սուրճս իսկ մարդու պէս խմեմ, - բողբոջեց Տիկ. Մարտիննիլի, - կրնայիր քիչ մը համբերել... Ես ինքս պիտի խօսէի քեզի արդէն... Հարկ կ'ա՞ր մեր ընթրիքը խանդարելու այսպէս...

- Ճիշտ, - ըսաւ ամուսինը զուտ, բայց սրտեկող, - միշտ յառաջաբան մը կը յօրինես... Հստի՞քը ըսէ, ամփոփ ու յտտակ... Այդ տղու մասին է, չէ՞... Ի՞նչ հարկ առասպել հիւսել... Մեր աղջիկը սիրահարուած է այդ օտարականին... Ես կը կարծէի, որ պատանեկան յիմարութիւն է... Հիմա կը տեսնեմ, որ լուրջ է... Յանցաւորը դուն ես...

- Ե՛ր: Ի՞նչպէս թէ:
 - Աղջիկները իրենց մօրը պատասխանատուութիւնն են: Դուն աւելի մօտ ես իրեն, ինք աւելի դիւրութեամբ կը բացուի քեզի: Ի՞նչպէս կ'ըլլայ, որ չկարողացար տեսնել պատահածը եւ կանխել պատահելիքը:
 - Այս խնդիրները, Պրն. ճարտարադէտ, այդքան ալ դիւրին չեն լուծուիր: Դուն կեանքը երբեք պիտի չհասկնաս: Ամէն երեսոյթ մաթեմատիքական տեսութիւններու չ'ենթարկուիր:
 - Շատ լաւ, - ըսաւ Սինեօր Մարտիննիլի վճռականօրէն, - դուն չես կրնար, ե՛ս կը խօսիմ, եւ հիմա իսկ: Մարիա՛...
 - Ո՛չ հիմա, երկուքդ ալ յուզուած էք... Վաղը թող ըլլայ...
- Մարտիննիլի պահ մը մտածեց.
- Molto bene, վաղը: Քսանչորս ժամուայ ընթացքին կացութիւնը չի փոխուեր:

Մուտք իջաւ: Սիրահարները միացան: Մարիա ընկերուհին պատրուակելով, դուրս կրցաւ ելլել:

- Հայրն ալ սկիւմբ զացած էր: Մայրը նուաղ խիստ էր:
- Այսօր կեանքին ամէնէն երկար օրն էր, - ըսաւ Մարիա, - յաւերթութիւն մը թուեցաւ... Տասը տարիով ծերացայ...
- Ինչեք կ'ըսես, դեռ ճամբու սկիզբն ենք:
- Ամէն բոլոր կը սպասէի, որ լուսարարուհիին աղջիկը ներս մըտնէր եւ մատնէր զիս: Ամէն դուռը զարնուելուն, սիրտս կը կենար: Կատարեալ մղձաւանջ մը: Կը վախնամ, Caro mio, կը վախնամ: Գժբախտութիւն մը պիտի գայ մեզի: Եթէ հայրս լսէ...
- Պարզ է... Ես պիտի ներկայանամ հօրդ եւ ըսեմ ամէն ինչ...
- Մայրս երկար խօսեցաւ հետս զու մասին... Ընթրիքէն հտք, եր-

կուրքը զտպուած ծայրով զիճեցան... Ի՛մ մասին, վստահ եմ... Կը վախ-
նամ, որ Հայրս Հարցուփորձէ զիս...
- Հող մի ընեմ... Որոշումս տուած եմ... Հող մի ընեմ...
Մարիայի հուժեան մէջ երանութիւն մը ցաթեց:
- Ի՞նչ որոշում:
- Պիտի ներկայանամ Հօրդ եւ պարզապէս ըսեմ, որ կ'ուզեմ... Սա-
տանան տանի... Ամուսնանալ Հետդ...
- Իրա՞ւ... Պիտի ըսե՞ս այդ բանը...
- Ի՛նչ հարկէ... Պէտք եղածէն աւելի խորացաւ այս բանը... Պէտք չէր
այսքան հեռու երթալիք... Յանցաւորը ես եմ...
- Օ՛, Լէսնէ... Սէրս...
Ծնորհայի շարժումով մը պլլուեցաւ զդին:
- Փառք Աստուծոյ... Աստուածածինը լսեց ուխտս... Փառք Աստուծոյ,
այլեւս վախ չունիմ... Զօրաւոր եմ, երջանիկ եմ... Վստահ էի վրադ...
Քեզ մտորս...
- Ինչո՞ւ խեղճ:
- Օ, ոչինչ... Լաւ է, ամէն ինչ լաւ է...

Երբ բաժնուեցաւ, աղջիկը երանութենէն զեանէն կտրուած էր: Իսկ
Լեւոն խորունկ ապօքանապի մը մատնուեցաւ: Նախորդ գիշեր երբ որոշումը
տուած էր, իր անձին հետ մոլեղին ընդհարում մը ունեցաւ: Աղջիկը քայլ
առ քայլ հասցուցած էր աննկրիւ մտերմութեան մը: Յանցաւորը ինքն էր,
որովհետեւ մարդը ինքն էր: Հիմա չէր կրնար աղջիկը լքել: Անվայել էր,
անազնիւ էր, անմարդկային էր: Մարիան զինք խենթի նման կը սիրէր:
Այլապէս այդքան առաջ պիտի չերթար:

Միւս կողմէ, Ի՞նչ էր իր զգացումը գէպի այս աղջիկը: Հարկ էր
խոստովանիլ, որ ինք եւս խենթի պէս կապուած էր: Սատանան մտած էր
միտերուն մէջ: Չէր կրնար տուանց անոր ապրիլ: Զանացիք էր խզուիլ, չէր
կրցեր: Ծիտթ մը կար. արդեօք իր զգացումը սէ՞ր էր, թէ երիտասարդա-
կան ցանկութիւն: Դժուար էր ճշդել: Ո՞վ կրնար ճշդել այդ տարիքին:

Վարուժանը, ուսուցի՞չը, իր ցե՞ղը: Այս մասին եւս մտածած էր:
Լուրջ արգելք մըն էր, անանցանելի միջնաւ իսկ: Բայց ամուսնութիւնը
անհատական խնդիր մըն էր եւ սէրը հայրենիք եւ ազգութիւն չունէր: Տար-
բեր ազգութենէ անհատներ երջանիկ բոյներ կազմեր էին:

Մինչեւ իսկ թագուհին ներկայացաւ դատաստանին: Այսպէս թէ այն-
պէս, Լեւոն խոստովանեցաւ, որ այս էակը իր ճակատաւորին կապուած էր:
Իր բոլոր խոր մտածումներուն եւ որոշումներուն տտին, իր գոյութիւնը
զգալի կ'ընէր: Իր հնթադիտակցութեան մէջ էր միշտ:

Տարիքի հարցը իրենց միջեւ, պայմանագրական խնդիր մըն էր: Ին-
չո՞ւ զինք լքած էր, ինչո՞ւ իր նամակներուն չէր պատասխանած: Հաւա-
նաբար ուրիշի մը կապուած էր, թերեւս ամուսնացած իսկ: Այս կը բա-
ցատրէր ոմէն ինչ: Այլեւս փակուած էր նաեւ այս հարցը:
Եւ սակայն, կար ծանր խնդիր մը, զոր չկրցաւ լուծել:

- Մարիա, - ըսաւ Տիկ. Մարտինելի, - Հայրիկդ կ'ուզէ Հետդ խո-
սիլ:
- Արդէն կը սպասէի...
- Ես չէ, որ Հանդարտ մնաս: Հայրդ, գիտես, խիստ եւ չոր կը թուի,

բայց սիրտը բարեի է, եւ ժանաւանդ, քեզ աշխարհի վրայ ամէն բանէ աւելի կը սիրէ:

- Մի վախճար, մամա... Պէտք է այս խնդիրը միանգամ ընդմիջու կարգադրել...

Հայրը, մետաքսէ կարմիր գիշերազգեստ մը հագած, ծխամորճը բերնին, մտաւ սննեակ: Բազմեցաւ թիկնաթուռին մէջ, բացաւ երեկոյան թերթը, նայուածքը պտտցուց վրան, ապա Ծալից խնամով, դրտուցած սեղանի վրայ ու քանի մը անգամ հազաց: Ձէր դիտեր ինչպէս սկսիլ:

- Բարա՛, - ըսաւ աղջիկը, - կ'ուզես խօսիլ հետս:

- Օ, այո, Մարիա... Ը'... Ինչ պիտի ըսէի... Գիտե՞ս Մարիա, որ ես... Սասանան տանի...

Մէկէն քակուեցաւ լեզուն.

- Ես երբեք չեմ գործերուն խառնուած չեմ, աւելի մայրդ է, որ կը դրադի քեզմով: Հիմա կայ խնդիր մը, որ կ'ուզեմ միանգամ ընդմիջու կարգադրել: Այդ տղան, Արա՞ր է, ի՞նչ է:

- Հայ է:

- Հա՞յ, Հայի ի՞նչ է: Բնաւ լսած չեմ՝ Ուրեմն, ո՞վ ըլլալը յայտնի չէ, աւելի գէշ: Ի՞նչ են չու յարաբերութիւնները անոր հետ: Ուղիղ պատասխանէ:

- Այո՛: Հետը դուրս կ'ելլեմ:

- Հը՛մ: Ի՞նչ են ձեր յարաբերութիւնները... Ըսե՛ք կ'ուզեմ...:

- Իրար կը սիրենք, եթէ այդ է հասկնալ ուզածդ:

- Ի՞նչ:

Մինեօր Մարտինելիի զսպից ինքզինքը: Ճիգ մը պէտք եղաւ այդ բանը ընելու համար: Զօրաւոր կամքի եւ իր անձին տէր մարդ մըն էր: Այլ լայնեցաւ սակայն, շատ աւելի քան կիներ ու աղջիկը ըմբռնեցին: Կը դողաք մարմնով:

- Անկարելի է, - ըսաւ, - անկարելի է... Վերջ պէտք է տես անձի-ջապէս, կը հասկնա՞ս, անձիջապէս...

- Ձեմ կրնար, - ըսաւ աղջիկը:

Մարտինելիի կշռեց ըսելիքը: Միշտ կը վախճար սխալ բան մը ըսելէ: Տիկ. Մարտինելիի օգնութեան հասաւ.

- Թերեւս, կամաց կամաց, ատիմանարար:

- Ո՛ւ, - ըսաւ ամուսինը, - հիմա, անձիջապէս:

- Չ'աճապարենք, բարա՛, եթէ թոյլ տես, բացատրեմ:

- Անկարելի է, - ըսաւ Հայրը:

- Մամա՛, - ըսաւ աղջիկը, օգնութիւն աղերսելով:

Աղջիկը մնաց միմակ:

- Ձե՛մ կրնար զինք մտնալ, չե՛մ կրնար:

- Ինչո՞ւ:

- Ան է իմ ընտրելին:

Մինեօր Մարտինելիի զսպանակի վրայ նստածի նման վեր ցատկեց, քայլ մը առաւ, զսպից ինքզինքը.

- Ինչպէ՞ս կը համարձակիս... Ինչը թոցուցեր ես... Այդ անպէտ արարածը... Կը կարծէի, որ քեզ լաւ կրթութիւն մը տուած ենք... Այլեւս չես տեսներ զինք... Մտքէդ հանէ՛...:

- Ձե՛մ կրնար, բարա՛, չեմ կրնար ես դատնալ հիմա, այլեւս ուշ է...:

Ի՞նչ...

Այր ու կին իրարու նայեցան զարհուրած աչքերով: Ի՞նչ ըսել կ'ուզէր «այլեւ ուչ է»... Արդեօ՞ք... Մայրը պիտի նուաղէր...

Սինեօր Մարտինելիի բռնեց ազնկան ուսերէն եւ մոլեգնօրէն ցնցելով, պոռայ.

- Ի՞նչ ըսել կ'ուզես «այլեւ ուչ է»... Ըսէ նայիմ... Ի՞նչ ըսել կ'ուզես... Ի՞նչ ըսել կ'ուզես... Ի՞նչ ըսել կ'ուզես...

Ինքնիքովէ դուրս ելած կը դռուսը խելայեղ հայրը:

- Մարիտ, զուակս, անշուշտ խենթութիւն մը չըրիր... Կ'աղաչեմ, ըսէ'...

- Կը սպաննեմ զինքը... Կը սպաննեմ զինքը, - կը կրկնէր հայրը խելակորոյս:

Աղջիկը նետուեցաւ մօր վիզը.

- Օ, ո՛չ, մամա՛, ո՛չ այդ... Եւ սկսաւ հեծկտալ: Մայրը եւս փղձկեցաւ:

- Փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ:

Սինեօր Մարտինելի լայն շունչ մը քաշեց, փլաւ քաղկաթոտի մէջ: Կարծես երակներէն արիւնը կը պարպուէր, հետզհետէ կը թուլնար, պիտի հատնէր:

- Ձուակս, իմ պզտիկ աղջիկս, մի լար... Հանդարտէ, վերջը լաւ կ'ըլլա՞ր... Մի լար, զուակս, - կը հծծէր մայրը, ինք եւս արտասուելով:

Սինեօր Մարտինելիի սիրտը եւս փղձկեցաւ, ուղեց զրկել միակ դաւակը, շոյել գլուխը, ինչպէս կ'ընէր մանուկ ժամանակ: Տարիներէ ի վեր չէր շոյած աղջիկը... Տեղէն չչարժեցաւ սակայն: Մարդկային փոխարարութեան թրեմունտէն մէջ չոր էր: Կը սիրէր տրամաբանող ըլլալ եւ խուսափել զգացական միջավայրերէ: Եւ սակայն, այս անգամ իր գլխուն է, որ կը պայթէր փոթորիկը:

Ուղեց վերակոխել մեղմօրէն, բայց բռնաբը խիստ ելան.

- Այ դնա՛ սենեակդ, հանդարտէ: Այդ անպիտան արարածը չես տեսներ այլեւ, բացարձակօրէն: Այդ է հրամանս քեզի: Բացարձակօրէն:

- Բայց բարա՛... չեմ կրնար... Կը սիրեմ զինք:

- Սէ՛ր, սէ՛ր... Սէրն ի՛նչ է, չեմ հակնար... Աստուած մարդուն խելք տուեր է, որով կը զանազանուի կենդանիներէն... Սէ՞ր է այն, որ երթաս կապուիս արարածի մը, որուն ծագումն իսկ անծանօթ է... Atmeno, լսած իսկ չեմ... Ի՞նչ պիտի ըսեն մեր բարեկամները... Գնա՛ սենեակդ եւ մոռցի՛ր... Գէշ երազ մըն էր... Ուրիշ ոչինչ... - Բոպերասօ, թող այլեւ... Վաղը կը շարունակես, թող հանգստանայ...

- Գուն մի խառնուիր, - բորբոքեցաւ Մարտինելի, - արգէն յանցաւորը դուն ես... Եթէ հասեւէիր աղջկանդ, խնդիրը հոս պիտի չհասնէր... Այլեւ թող ես կարգադրեմ... Գնա՛...

Աղջիկը ոտքի ելաւ:

- Միտքդ դիր, այլեւ չես տեսնուիր հետը:

- Ձեմ խոստանար:

- Ի՞նչ... Խելագարած ես... Ի՞նչպէս թէ չես խոստանար...

- Ձեմ կրնար... Որոշած ենք ամուսնանալ:

Սինեօր Մարտինելի վեր թռաւ.

- Ի՞նչ...

Ուզեց խօսիլ, լիզուն բռնուեցաւ, կոկորդէն զսպուած ճիշեր արձա-
կեց, չկրցաւ խօսիլ: Գոյնը նեւեց, ինկաւ բազկաթոռին մէջ:

Կինը մօտ վազեց, ձեռքերը առաւ ձեռքերուն մէջ, դաստակը սկսաւ
չփեւլ, չծծեց.

- Բուպերտօ, Բուպերտօ, ի՞նչ եղար, ի՞նչ եղար... Բուպերտօ, Բու-
պերտօ... Մարիա, Տօբթօր Պարոնէին հետաձայնէ, թող անմեղապէս գայ...
- Հարկ չկայ, - ըսաւ Մարտինելլի, - բան չունիմ... Անցաւ ար-
դէն...

Եւ գտնաւորով աղջկան.

- Ուրեմն որոշեր էք ամուսնանալ... Այդ անպէտ տղուն հետ... Ե-
րազիդ մէջ... Քանի ես ողջ եմ, չես ամուսնանար անոր հետ...

- Կը ցաւիմ բարա՛, երբեք չեմ հակառակած քեզի, բայց ա՛յս որո-
շումը իմը պիտի ըլլայ... Իմ կեանքս է...

- Ըսի՛ չես ամուսնանար...

Մայրը թախանձեց.

- Ոչ հիմա, թող Մարիա, խնայէ հօրդ...

Աղջիկը միայն իր ճամբան կը տեսներ.

- Որոշումս որոշում է:

- Ամբարտաւանութեան նայէ... Կորուէ սենեակը եւ մնա՛ մինչեւ
քեզ կանչեմ... Մե՛ղք ծախսած շրամներուս, տածած գուրգուրանքիս...

- Ենորհակալ եմ, բարա՛, երախտապարտ եմ:

- Կորուէ՛, կորուէ՛, - դռնեց հայրը:

- Հանդարտ, Բուպերտօ, կ'աղաչեմ:

- Թող կորուէ... Աղջիկս չէ... Ձեմ ընդունիր զինք յարկէս տակ,
եթէ...

Մէկէն քալեց աղջկան վրայ եւ գրեթէ վայրագ կերպով, պոռաց.

- Քեզ կը սպաննեմ, կը հասկնա՞ս, կը սպաննեմ, ապա կը սպաննեմ
ինքզինքս...

Մայրը մէջ մտաւ..

- Հանդարտէ, կը պաղատիմ... Գնա՛ աղջիկս սենեակդ... Աստծոյ
սիրուն գնա՛...

Մարիա գնաց սենեակը եւ դուռը աղմուկով փակեց:

Մինեօր Մարտինելլի չէր կրնար հանդարտիլ, ինքզինքէն ելած էր:
Երբեք այդքան մոլեգնած չէր կեանքին մէջ: Նոր էր կնոջ համար, նոր էր
իրեն համար: Մարմնով կը դողար, բանտուած դազանի նման մէկ կողմէ
միւսը կը քալէր, ձեռքովը ճակտին քրտինքը կը սրբէր, օձիքը կը քակէր,
- ընեխէքը շուարած էր:

Կինը անօգնական, դժբախտ նստած էր սենեակի կեղերոնը եւ պարա-
պին կը նայէր: Լուսթիւն էր:

Ի վերջոյ, Մինեօր Մարտինելլի մէկէն բացաւ փողոցի դուռը եւ հ-
տին ուժգին փակելով, մեկնեցաւ:

Մութը կոխած էր: Տիկ. Մարտինելլի գետ սենեակին մէջտեղ անօգ-
նական նստած էր:

Ներսը, մէկը կուշար:

(Շար.)

Բ. Կ.

Մ Ե Կ Ն Ո Ւ Մ Ը

Ընդարձակ սրահին մէջ ամէն ինչ պայծառ էր եւ լուսուար: Պատերուն երկայնքն ի վար՝ հայելիները աւելի կը շեշտէին ասիկա: Դաշնակին եւ ջութակին խողերէն աւստրիական Հին վալստերու երանգները մարդոց շնչած օդին մէջ կը սաւառնէին, ու ծերունի ջութակահարը իր յիշողութեամբ ու երիտասարդ դաշնակահարը երեւակայութեամբ շերտ առ շերտ տանըրիններորդ դարը կը ստեղծէին:

Ամէն կիրակի առաւօտ պատահելիքը այս էր: Եկեղեցիին առեւած թմրութենէն ետք մարդիկ կու գային անուշեղէն ուսանելով թարմանալու եւ երթո՛ւտութեամբ զովանալու: Սեղանները կը լեցուէին փութիտութեամբ եւ կէսօրուան ճաշի ժամուն նոյն փութիտութեամբ ալ կը պարպուէին, ու սրճարանը դարձեալ կ'ամայանար, իրիկուան մթնշաղին հետ նորէն վերակենդանանալու համար: Մինչ այդ ծերունի ջութակահար Իվանը, որուն յեղափոխական անցեալին մասին մշուշաւ բաներ կը պատմէին, յարմար դադար մը ստեղծելով իր բուսական դըրձակը որպէս գանձանակ կը պտըտցնէր սեղանէ սեղան, իրենց շնորհիւ զովացողներէն տուրք պահանջելու:

Մեծորայ ժամէ մը աւելի նստած էր այդտեղ, քովընտի սեղաններէն մէկուն առջեւ, ուրիշէ կարելի էր ամբողջ սրահը դիտել, եւ յուսահատութիւնը շնորհունոց մարդու յարատեւութեամբ կը սպասէր աշխիւն: Ամէն կիրակի, տղան եկեղեցիէն, որովհետեւ հայրը հոգաբարձու էր, աղջիկը տունէն, որովհետեւ անհաւատա էր, կը հանդիպէին իրարու հոն, այլ օրերու իրենց հանդիպումներէն զատ:

Կիրակնօրեայ զգեստին ձախ թեւէն ժամացոյցը կը սարդէր դուրս, իր սիրած աղջկան սպասող մարդուն անհանդարտութիւնը վէրքի մը վերածելու վճռականութեամբ: Թեւերը աթոռին յենարա-

նին փաթթած, պատժուած աշակերտի մը պէս, կը ջանար անշարժ մնալ ժամացոյցին հետ շարադելու համար: Սակայն չէր կրնար արգելել իր աչքերը հետեւելու պատի մեծ ժամացոյցի սլաքներուն, որոնք կարծես աւելի արագ կը շարժէին:

Երբ ճամբան էր, կը կարծէր թէ աղջիկը արդէն այդ մարմարէ սեղանին առջեւ կը սպասէր իրեն: Հազիւ նոյն սեղանին տոջեւ նստած՝ կը յուսար թէ մինչեւ հարիւր համբելը անիկա պիտի գրաւէր իր տեղը, ճիշդ կողքին, կամ գիմացը: Հիմա հետզհետէ վախ մը կը սողար մարմինին մէջ: Հայտնի էր թէ ինչպէ՛ս պիտի կարողանար վերադառնալ տուն, առանց անոր շունչէն բան մը տանելու հետը: Գիտէր թէ աղջիկը տունէ մը ի վեր հետըզհետէ կը հեռանար իրմէ: Առանց կարենալ հաւատալու դիտած էր անոր քայլ առ քայլ փախուստը, որը կարծես կ'անդամահատէր զինք: Բայց ինչ որ իրեն համար անհասկնալի կը թուէր, փախուստին պատճառն էր: Վստահ էր որ աղջիկը ուրիշ մը չէր սիրեր: Ատիկա իրեն համար արդէն երանութիւն իսկ էր. բայց ինչո՞ւ կը մերժէր իր երկարած ձեռքը:

Ժամացոյցը գահիճի մը քայլերով կը յատաջանար: Եւ ժամ մը ետք սրճարանը պիտի փակուէր: Իվանը արդէն պտըտցուցած էր գանձանակը: Քսանըհինգերորդ անգամ ըլլալով սկսու մինչեւ հարիւր նորէն համբել: Աղօթելու պէս աչքերը փակեց. սակայն չկրցաւ դիմադրել ամէն մէկ տասին գանտնք բանալու փորձութեան: Ութերորդ տասին՝ մոռցաւ թէ մէկէն ետք ինչ կու գար: Հինգ... Եօթը... չորս... համբեց եւ աչքերը մէկէն բանալով անզրազարձաւ. որ թթուածինը կը պակսէր սրահին մէջ: Ընդոտ շարժումով շտկուեցաւ աթոռին վրայ, ու բերանը բացաւ շունչ տանելու

Համար. բայց չունիլ մնաց կոկորդին մէջ, որովհետեւ ա՛հ մը թուա բերնէն դուրս: Դիմացի հայելիէն նշմարած էր աղջկան քալուածքը: Հանդարտ ու իշխանական. ամտուան ճեղքակ զգեստին մէջ կարապի մը վայելութեամբ: Որքա՛ն յիմար եղած էր ինք այդքան չարչարուելուն համար: Ահաւասիկ աղջիկը հոն էր, եւ չգալու ամէն ենթադրութիւն կ'անէսնար:

- Ուշացա՛ր, ըսաւ, ոտքի՛ տեղ հըրամցնելով:

12-ին չէ՞ր ժամադրութիւնը...

- Մոռցա՛ր թէ ամէն կիրակի 10-ին հող կ'ըլլայինք:

- Կը հաւատա՞ս թէ մոռցած եմ...

Նոր նշմարեց որ աղջիկը իր բնական վիճակին մէջ չէր: Յոգնածութիւն մը կար անոր կեցուածքին մէջ, ու աչքերուն տակը կապուացած էր:

- Հիւս՞նդ ես, հարցուց վախցած:

- Ո՛չ, բան մը չունիմ. պարզապէս մոռցած էի...

- Խնդիր չէ: Արդիկ քեզի ուրախ լուր մը ունիմ...

- Գիտե՛մ. անպայման ամոսականի յաւելում ունեցած ես...

- Ինչէ՞ն գիտես:

- Որովհետեւ կը սպասէիր. եւ ամէն բանէ աւելի այդ կ'ըլլայ ուրախութեանդ պատճառը...

Տղուն բերանը կծկուեցաւ:

- Կը կարծե՞ս թէ այդ կ'ըլլայ ուրախութեանս միակ պատճառը...

- Ես չըսի որ միակը կ'ըլլայ, այլ մեծագո՛յնը...

- Արդիկ, ատենէ մը ի վեր տարօրինակ բաներ կ'ըսես... Պաղպաղակ մը կ'առնե՞ս...

- Ո՛չ:

Ինչո՞ւ նորէն եկած եմ խորհեցաւ աղջիկը: Արդէն ճամբան այդ մտածումը քանակուած էր մաքին մէջ: Աթոռին վրայ դիրքը փոխեց: Արմուկները հանկչեցուց սեղանին, ոտքերը անզաւորեց իրարու վրայ, բայց հանդատութիւնը չզբտաւ:

- Կը պարե՞ս, ըսաւ քիչ ետք, լուսթիւնը խզելու համար:

Տղան չպատասխանեց:

Որովհետեւ որա՛հը լուսաւոր է. եւ որովհետեւ պիտի չկարենայ երեսը երեսիս պարել, եւ կամ դողը պիտի չկարենայ զսպել, մտածեց աղջիկը ու ժպտեցաւ. այդ բարի եւ անճարակ տղուն համար:

Տղան չհասկցաւ ժպտին իմաստը. եւ սիրտ անշեղով շարունակեց կէս մը նայած խօսակցութիւնը:

- Եթէ՛ դալ ամիս սասնա՛մ խոտացուած յաւելումը, կ'ամուսնանանք: Համաձայն չե՞ս...

Ես պէ՛տք է մեկնիմ այստեղէն խորհեցաւ աղջիկը բայց չկրցաւ տեղէն շարժիլ:

- Ձե՞ս պատասխանե՞ր...

- Ձէ՞ որ պատասխանս տուած եմ արդէն...

- Բայց այն ատեն յաւելումի հարց չկար...

- Հարցը յաւելումի մասին չէ՛ Մերոպ, ըսաւ աղջիկը, յանկարծ մէկէն լրբընանալով եւ խօսակցութիւնը կարճ կապելու համար: Այդ մասին քեզի խօսած եմ արդէն. երկա՛ր:

- Բայց կ'ուզեմ պատճառը հասկընալ:

- Ե՛ս ալ չեմ գիտեր. եթէ՛ կարենա՞յի՛ դիտնալ... յետոյ գիտես թէ՛ չեմ սիրեր քեզ...

Սեղանին վրայ լուսթիւնը սաստկացաւ: Մինչ նուազը աւելի տիրեց երկուքին միջեւ: Անդին զոյգերը կը դառնային եղանակին հետ ներդաշնակ եւ ճշկուն: Առաջին կարգի սեղանին նստող մանրակազոյն մտաբերով կիներ, ինչպէս ամէն կիրակի, սաքերը թմբուկ ընելով մասները կը շարժուէր կը զարնէր սեղանին, քառասուն տարի առաջ սորված գունակը վերջիջելու ճիղով. ու ատենը մէկ արմուկովը կը ցնցէր ամուսինը որ իր ճաղատ զլուխը քովի երիտասարդ աղջիկէն վերագարձնէ իր մատներուն:

- Կիթէ՛ ծնողքիդ հետ մէյ մը խօսէի՛, մրմնջեց տղան:

Աղջիկը չլսեց: Այլեւս բան մը չէր տեսներ: Ո՛չ տղան, ո՛չ պարոտները եւ ոչ ալ առաջին կարգին նստող կիներ որ սեղանին վրայ դաշնակի վարժութիւն կ'ընէր: Ներսէն ձայնէ՛ր, ձայնէ՛ր կը խօսէին իրեն: Մտերիմ ձայներ: Այդ ծալները, որոնց հետ խօսած էր երբ դեռ պատանի իսկ չէր, եւ որոնց գոյութիւնը երկու տարիէ ի վեր ջանացած էր մոռնալ, անտեսել, ուրանալ, որովհետեւ իրեն համար պատրաստուած կեանքին եւ միջավայրին համաձայն, խոտոր ճամբաներու կը տանէին զինք: Ամիսներէ ի վեր Մեսրոպին ըրած առաջարկին հետ բախելով նորէն կեանք կ'առնէին, փոթորիկ մը ստեղծելով իր հոգիին մէջ: Իողը սուքին մասներէն սկսած կը բարձրանար մարմնին բոլոր մասերուն մէջ: Կը զգար թէ ծուխը կը զողար մասներուն մէջ, ու չէր կրնար կատարելի զայն: Գծամբանէ՛ր, խորհեցաւ. կ'ուզեմ կորսուիլ, անէնչաւ ձեր մէջ: Կ'ուզեմ որ զրկէ՛ք զիս. կ'ուզեմ ես ինքս ըլլալ միայն. կ'ուզեմ...: Ո՞վ եմ ես, մտածեց յանկարծ: Ի՞նչ կ'ուզեմ այս բարի տղային: Ինչու՞ նստած եմ զէ՛մը: Ինչու՞ կը շարշարեմ զայն: Կը սիրեմ՞. ո՛չ: Կը հաստատմ սիրոյ. ո՛չ: Երկար ատենէ ի վեր զիտէր թէ չէր հաւատար սիրոյ: Ոչ ալ այլ զգացումներու շարունակականութեան, յարատեւութեան: Այդ մտածումը, որ շարժանքէն ի վեր աւելի խորութեամբ կ'ապրէր, իր արտաբանութեան համար նորամուտ բան մը չէր: Ինք պահերո՞ւ մարդն էր: Պահերու ուժգնութեան հաւատացո՞ւղ, երկրպագո՞ւղ: Մինչ բոլոր անոնց որ հանդիպած էր երզումներու մասին կը խօսէին: Կապե՛ր, կապե՛ր կ'առաջարկէին: Կաշկանդումներ, որոնց հաւատալը իրեն համար ինքզինքին զէ՛մ մեղանում էր. կեղծիք էր: Սուտ էր: Մտքին մէջէն տողանցեց տղու անուններու շարք մը, որով կրնար յատուկ անուններու պզտիկ բառարան մը կազմել: Ամչցաւ ինքզինքէն. ու լալու փափաք մը զգաց: Այդ նիհար տղաները, որ ջանացած էր սիրել եւ որոնք կարծած էին ճանչնալ զինք, բայց միայն ազ-

ուոր երգի մը պէս իր անունը կրցած էին սորվիլ: Ի՞նչ ուզած եմ ես անոնցմէ, խորհեցաւ: Ի՞նչ փնտրած եմ անոնց մէջ, ճիշտացո՞ւմ մրմնջեց ինքն իրեն, կը փնտրեմ քեզ. ամառուան արշալոյսնեւրու պէս դեղեցիկ ես: Բայց հոսող ջուրերու պէս կը փախչիս ինձմէ: Պիտի վազեմ ետեւէդ եւ պիտի հասիմ հետդ...»

– Արփի՛կ, կանչեց տղան:

Աղջիկը չլսեց:

– Արփի՛կ, ցնցեց թեւը: Հիւս՞նդ ես:

– Ո՛չ:

– Գուէ՛դ ի վեր միայն ծխեցիք, առանց կարեւորութիւն տալու հազիդ:

– Այո՛, մայրս ալ այդպէս կ'ըսէ, ըսաւ աղջիկը նոր ծուխ մը տեղաւորելով շրթներուն մէջ:

Երկուքը մէկ նորէն լռեցին: Տղան՝ վերաւորուած, աղջիկը՝ ճանճարացած:

Մրճարանը հետզհետէ կը պարպուէր: Առարիական վալսերը վերջացած էին. ու ծերունի իմանը հայրենիքէն հեռու ապրող մարդու հոգին, ջութակին բարակ լարերուն վրայ, ցրկան եղանակներով կը բացատրէր: Եղանակը կը հասէր, կը զինովցնէր ու մթնոլորտը կը հեւար իմանի նիհար թեւերուն շարժումներուն հետ:

Մեսրոպ արմուկները սեղանին տեղաւորած կը ջանար հետեւիլ երաժշտութեան, խուսափելով աղջկան նայելէ: Աղջիկը պատուհանէն կը դիտէր ծովը: Յանկարծ ցնցում մը ունեցաւ: Ընթում, ձիւնի պէս մաքուր նաւ մը կը մեկնէր...: Ապակիին դիտող ընողին ժպտող գծուեցաւ դէմքին վրայ: Նա՛ւ մը, մտածեց. նա՛ւ մը պիտի փրկէ զիս: Պէտք է մեկնիմ: Պիտի մեկնիմ. այսօր իսկ պիտի ճամբորդեմ. առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու: Այլեւս ուրախ էր. ինքզինքը թեթեւ կը զգար. բայց ուրախութեանէն, զարմանքէն որ վերջապէս կտաւ փրկութեան միջոցը, տարօրինակ կերպով քարացած արձանի պէս կը մնար: Երնչապատեան հեւքն իսկ չէր խանդարեր իր անշարժութիւնը:

– Այսպէս անշարժ պիտի նստի՞ս,

ընդհատեց տղան: Յայտնի է որ Հիւանդ ես:

Աղջիկը ժպտեցաւ: Գիտէր թէ իր ամէնէն անշարժ դիրքին մէջ իսկ աւելի շարժուն էր ինք, քան ինքզինքը ապագայի ծրագիրներուն մէջ խորհրտացած կարծող տղան: Իր անշարժութիւնը սաւառնելու պատրաստ արծիւին զիրքն էր:

«Սա պէտք է մեկնիմ», ուղեց մտածել աղջիկը, բայց մտածումը դուրս թաւս բերնէն:

- Հիմա՛...
- Այո՛:
- Ձե՞ս սպասեր որ Իվանը վերջացընէք ուրիշ օրեր կը սիրէիր...
- Այսօր տարբեր է:
- Տո՛ւն...
- Կախ տուն, յետոյ ուրիշ տեղ...
- Ո՛ր:
- Պիտի ճամբորդե՛մ:
- Այսօ՞ր...
- Քիչ էտք...
- Արփի՛կ, տարօրինակ բաներ կ'ըսես...
- Թերեւս:
- Սպասէ, Հիմա միասին կ'երթանք արդէն քանի մը վայրկեանէն պիտի վերջանայ...

Աղջիկը շապատեց: Ելաւ ոտքի: Առաւ պայուսակը, նախ գողացող, յետոյ հետզհետէ Հաւասարակշռուած քայլերով յառաջացաւ դուրս: Մինչ տղան շրջաբաժնի, սպչած, նայելով տնոր ետեւէն կը շարժաբէր ուղեղը, ինքնիրեն պատասխան մը տալու մղձաւանջով: «Վաղը առտու հեռաձայն մը կ'ընես», խորհեցաւ գլուխը շարժելով:

Իտարը արեւը զօրաւոր էր: Հակառակ այրող տաքին, Արփիկ բերանովը ներշնչեց այդ մեղկ օդը, բայց չազդուեցաւ անոր թմրութենէն: Ինքզինքը հանդիստ եւ զօրացած կը զգար: Քաղեց իրենց տան հակառակ ուղղութեամբ: այն ճամբէն, որ դէպի քաղաք կը տանի, ուրկէ կ'անցնէր ամէն օր երբ տակաւին ակումբի սիրահար էր: Ամէն մէկ ցուցափեղկի առջեւ յիշատակ մը կ'արթննար իր մէջ: Իր սերած տեղերէն

վերջին անգամ անցնող մէկու մը զգարնութիւնը կ'ունենար: Անուշեղէնի խառնութեւ, որ Տէլիս կը կոչուէր, Շարաթ Իրիկուննկու իրենց հաւաքաձայրն էր, ակումբէն ելլելէ ետք: Ճիշդ քովի դրատունը՝ Վիքթորիան իր տկարութիւնը խորհրդանշած էր, երբ գիրքերը իր կեանքին անխուսափելի մէկ մասը կը կաղճէին տակաւին: Քանի տարի է որ հոն չէր մտած. այլեւս բնաւ գիրք չկարգալու իր որոշումէն ի վեր: Հին ընկեր մը տեսնելու ջերմութեամբ անդիմադրելի փափաքը ունեցաւ ներս մտնելու եւ անգամ մը եւս դողալու գիրքերու շուրջին: Սիրտը կարծես պիտի թափէր բերնէն դուրս: Մատնէրուն վրայ հազրու կոխելով մտաւ ներս: Պանութիւնը գոցելու վրայ էին: Ընտանի մէկու մը պէս յառաջացաւ: Յուշադրութեան ձեւերուն ծանօթ էր: Ոչ մէկ բան փոխած էին: Աղին՝ մանկական գիրքերը՝ Վերը՝ բոռաբանները, խոշորակազմ եւ հին: Չախին դիտապաշտ տուող բաներ կային: Մեռած կարծուած աշխարհներ, որոնք անշարժ անուններու տակ պահուած հըրարութիւններ էին: Անուններ, անուններ որոնք մոռցուած կը կարծէր: Ուղեց երկնայնի ձեռքը եւ հաս մը գնել: Բայց այդ ուժը չունեցաւ: Մատնիւր թիթեւօրէն սահեցուց անոնց վրայէն եւ ամբողջ մարմնին մէջ զգաց այդ տարաշխարհիկ դողը որ կ'ունենար ժամանակին, ամէն անգամ որ գիրք մը կարդար: Յետոյ մաքրուած հողիով յառաջացաւ դուրս:

Տակաւին քայլու փափաք ունէր: Ձգաց թէ անօթի էր: Երէկ կէսօրուքն է Վեր բան չէր կերած: Այսօր Կիրակի է խորհեցաւ. եւ տունը կը սպասեն: Այդ մտածումին վրայ ժպտեցաւ: Ե՛րբ հընազանդ զաւակ եղած էր ինք: Մանր բոռէ մը ազատուածի քայլերով ուղղուեցաւ դիմացի Թաւերման, որ ճաշին Հեսայլ զգայնութիւնների փնտրող մարդոց տեղն էր: Հակառակ տաքին, առաջ ապուր մը ուտելու փափաքը ունեցաւ: Ապրազրեց հաս մը. բայց առաջին զգայնէն իսկ զգաց թէ պիտի չկարենար վեր-

Նացնել: Ձոյացուցիչ մը խմեց, յետոյ ծիւղեց: Ծուխին մէջէն նորէն դիտեց ծովափը, ուր նստերը նորէն փրկարարներու պէս երեւցան իրեն:

«Պիտի մեկնիմ», խորհեցաւ. «մեկնումսին մէջ իր վրայ ճնշող բոլոր կաշկանդումներէն ձերբազատուողի շեշտը դնելով: Վերջին երկու տարիները այլեւս գոյութիւն չունէին իրեն համար: Երկու տարի առաջուան ազլիկն էր: Ինքզինքն էր. ոչ թէ ուրիշներուն նմանողութեամբ շինուած միակ եւ ոսկորի հաւաքածոյ մը:

«Հիմա պէտք է տուն երթամ», շարունակեց, ճաշարանէն ելլելէ անմիջապէս ետք: Դուրսը քախիւնները կը սպասէին: Մտակցաւ մէկուն, յետոյ ետ քաշուեցաւ: Նայեցաւ երկու յարկանի հանրակառքերուն, որոնք շարուած էին մեկնելու պատրաստ: «Բայց լաւ է որ քաշեմ», մըմնջեց: Վերջին օրն էր այդ քաղաքին մէջ: Ի՛ր քաղաքին մէջ, որ սընուցած էր զինք տարիներով, եւ որը հիմա նեղ կու գար իրեն: Նե՛ղ, նե՛ղ: Քաղաքը նե՛ղ էր իրեն համար: Պիտի ինզղուէր այդ նիհար սողոց մէջ: Ընտանեկան սիրով ողողուած տունին մէջ: Աստուծոյ մասին առասպելներ ծամծամող խամսնիկներուն մէջ: «Գոհացում, կըրկնեց նորէն ահուաներուն մէջէն. կը փրնտոսեմ քեզ. ամառուան արշալոյսներուն պէս զեղեցիկ ես. բայց հոսող ջուրերուն պէս կը փախչիս ինձմէ: Պիտի վազեմ ետեւէդ եւ պիտի հոսիմ հետդ... Պիտի քալեմ ուր որ ես կը տանի գիս, եւ անկէ՛զ զատ ուրիշ առաջնորդ պիտի չճանշնամ...»

Սաստիկ յոգնած էր բայց կը քալէր: Անօթի աչքերով կը լակէր ամէն մէկ մանրամասնութիւն որ այդ քաղաքը կը յատկանշէր: Եւ ամէն մէկ քայլին հետ կ'անդրադառնար որ յիշատակներու խուրձ մը կը քակուէր հոգիին մէջ: Երթիներուն վրայ երգ մը ծնունդ տուաւ: Սկսաւ սուլել: Ի՞նչ, տունի կրթուած աղջիկ՝ սկսաւ սուլել: Մերտալը հիմա զիս որ տեսնէ...: Ժպտեցաւ օրօրուելով: Յետոյ զգաց թէ պէտք էր քայլերը

արագացնել: Հիմա անձրեւ մը դար, խորհեցաւ եւ անձրեւին տակ վազէի: Հիմա, օդանաւ մը բլլայի եւ սուրբայի, սաւաննէի... Հիմա, արծիւ բլլայի եւ թըռնէի... եւ բլլայիներու շարան մը քակուեցաւ բերնէն դուրս:

Տունը այդքան ալ մօտ չէր: Եթէ ուրիշ որ մը մտադրէր այդ ահագին ճամբան քայլել, վստահարար կէսէն կառք մը պիտի վարձէր:

Շնչատ քայլերով բարձրացաւ սանդուխներէն եւ բանալին անցուց: Յոգնութիւնը, սանդուխները կտտ կարծիք ըրած էին զինք: Ներսը ձայն չկար: Հապճեպ նայեցաւ ժամացոյցին: Ժամը Ե-ն էր: Երեք ժամէ ի վեր կը թափառէր փողոցներուն մէջ: Աղմկոս՝ մտաւ խոհանոց: Սպասուհին պնակները կը լուար: «Մարդ չկա՞յ», հարցուց: «Տիկինը ներսն է», ըսաւ կինը: Վազեց ներս, մօրը սենեակը, ուր մայրը բազկաթոռին մէջ նըստած գիրք կը կարդար:

- Մա՛, ըսաւ, ընդհատելով զայն:
- Եղբայրդ երէկուրնէ ի վեր տուն չէ եկած պատասխանեց մայրը, գիրքը ծունկերուն վրայ դնելով: Հայրդ քիչ առաջ փնտուելու գնաց:
- Մա՛, ես պիտի մեկնիմ...
- Գիտե՛մ:
- Գիտե՞ս...
- Մերտալը հեռամայնեց:
Ներողամիտ ժպիտ մը դժուեցաւ աղջկան գէժքին, բայց շուտով անյայտացաւ:

- Ես պէ՛տք է մեկնիմ...
- Գիտե՛մ, բայց սպասէ որ եղբայրդ գտնենք...
- Մի՛ վախնար, անիկա չէ ճամբորդած... չի կրնար ճամբորդել...
- Գիտե՛մ:
- Մա՛, ես պիտի մեկնիմ...
- Ո՛ւր...
Առաջին անգամ բլլայով ինքն ալ մը տածեց: Ո՛ւր: Իր մեկնումի վճիռին հետ, ո՛չ մէկ ատեն ուր մեկնելու հարցականը չէր զբաղեցուցած զինք: Ո՛ւր՝ հարց տուաւ նորէն ինքզինքին:

Մայրը կը նայէր իրեն ներողամիտ

ժպիտով: Այդ ժպիտը սթափեցուց զինք: Ինք մանուկ չէր այլևս: Բայց մայրը կը շարունակէր ժպտիլ. անքան խաղա՛ղ եւ հանգարտ, որ կ'ապշեցնէր զինք: Կը զայրացնէ՛ր: Կարծես մայրը չէր հաւատար որ իսկապէս պիտի մեկնէր:

Մայրը տիրեց կացութեան: Մինչ ազդիկը կը դարձնէր թէ կ'ստանա իրենը զիչ մը եւս երկարէր մօրը անուշ ժըպիտին տակ ինք պիտի փչէր: Ինչո՞ւ անքան խաղաղ կը ժպտէր ան:

- Մամա՛... ըսաւ մօտենալով, բայց չկրցաւ շարունակել:

- Արփի՛կ, առաջին անգամը չէ որ ճամբաներու մտաին կը խօսիս...

- Քիչ ետք պիտի մեկնիմ...

- Գիտէի որ պիտի մեկնէիր օր մը. գիտեմ նաեւ որ պիտի վերադառնաս, որովհետեւ չես կրնար չիջնիլ...

- Պիտի վերադառնամ, երբ միտի եւ ոսկորի խառնուրդ մը մնամ միայն: Պիտի դառնամ հոս մեռնելու համար...



Երբ նաւահանգիստ հասաւ, արդէն մութ էր: Տեղ տեղ լոյսեր կը պլպլային պահապաններու խցիկներէն: Քանի ծովուն կը մօտենար, ինքզինքը աւելի հանդարտ կը զգար: Այլեւս ամէն բան մտացած էր: Ինք տուն ունէ՛ր. ունեցած էր: Ծնողք տեսած էր. ու բարի ու միտիտ տղաներ կային իր կեանքին մէջ: «Ամէն կրուք պիտի քանդիմ. միմիջեց: Ե՛ս եմ կուռքս եւ ամէն ինչ ինձմէ պիտի ծնի»:

Երբ աւելի յառաջացաւ, կարծեց թէ հետուին եղանակներ եւ բացաղանջութիւններ կը հասնէին իրեն: Քայլերը դարձուց այդ կողմ: Չայները աւելի յրստակացան: Հեղահեղ նշմարեց որ նաւերն արդէն այդ կողմը համախմբուած են: Քիչ ետք տեսաւ յոյն տղոց եւ ազդիկներու խումբ մը որ լաթերմայի մը շուրջ շուրջպար կ'ընէր: Մօտեցաւ անոնց եւ աննշմար նստեցաւ քորէ նստարանին վրայ: Հոն լոյսը աւելի զօրաւոր

էր. յետոյ անոնց զուարթութիւնը լաւ կ'ազդէր իրեն: Յայտնի էր որ հայրենակիցներու խումբ մը ճամբած էին:

«Ի՞նչ երջանիկ են, խորհեցաւ, ուրախ զուարթ կ'երգեն, կը պարեն»: Յետոյ անդրադարձաւ որ ինքն ալ երջանիկ էր այդ պահուն: Երջանիկ ըլլալու դադարը առաջին անգամ ըլլալով ընտանի թուեցաւ իրեն:

Հետուին նաւերը կ'երեւէին: Թարբախած նաւերը: Փարոսը կը վառէր, կը մարէր, ուղղութիւն տալով նոր հասնողներուն: «Ո՞ր մէկուն մէջ պիտի մանեմ», խորհեցաւ: Յետոյ, ո՞ւր մեկնելուն մըրտածումը նորէն տեղ առաւ մտքին մէջ: «Հողոս, մասծեց. պիտի երթամ հոն ուր պիտի տանի: Հարցը մեկնիւն է, եւ ոչ թէ ո՞ւր երթալը: Վաղը, այս նաւերէն մէկուն մէջը պիտի ըլլամ, շարունակեց. աշխարհներ պիտի առնեմ ոտքերուս տակ, եւ թոքերս նեղ պիտի դան անոնց տուած բոլոր շնչելու համար: Ներբաններս պիտի ճենճերին անոնց տուած զրայնութիւններէն ու հողիս պիտի պոթիկայ գեղեցկութիւններու առջեւ: Երջանիկ է ան որ Իւլիսին պէս կ'ընէ գեղեցիկ ճամբորդութիւններ...» Այլևս մտածել չէր կրնար: Այնքան յոգնած էր: Բարձր կրունկներով կօշիկները անկրկի ծանրութիւններու վերածուած էին: «Այնքան քուն ունիմ», խորհեցաւ, ու անդրադարձաւ, որ այլևս լաթերմային եւ տղոց ձայնը չէր լսեր: Աչքերը պըտրացուց շորս դին եւ նկատեց որ անոնք կը հեռանային: «Քիչ մը քնանայի», խորհեցաւ: Յետոյ զսպեց քունը, տակաւին ժամեր յամենալու յոյսով, իր արալոյսին սպասող երկնքին երկունքը դիտելու համար: Բայց չկրցաւ: «Հիմա քնանամ արշայոյսէն առաջ արթննալու համար», խորհրդածեց, մեղմութեամբ: Պայուսակը բարձր բաւ գլուխին տակ ու աչքերը փակուեցան: Քնանալէն առաջ յիշեց որ քսան տարեկան էր, հինը ամսու եւ տասը օրուան:

Ա. Հ.

Գ Ի Շ Ե Ր



Գ. ՄԱՀԱՐԻ

Մղձաւանջային ժամանակաշրջանէ մը կու գայ Գ. Մահարիի ԳիՇեմ պատմուածքը, զոր Գրական Թերթի 19 Ապրիլ 1964-ի թիւէն կ'ստաննիք, շարժառիթ ունենալով բացառիկ երեւոյթ մը խորհրդանշայ դրակահաւթեան մէջ:

Ստալինեան կեդրոնացման կայաններէն վերադառնալու բախտ ունեցող օտար դրամահներ, մերթ վտիտ ու մերթ ծաւալուն դործերով, փորձեցին սալ տալ կայաններուն սահմակեցուցիչ կեանքը, երկնց վրայ հրաւիրելով ազատ աշխարհի ժառանգականութեան ուշադրութիւնը:

Մեր երկրի դրակահաւթեան մէջ, Մահարիի ստալինեան է, որ տալ աշխարհէն վերջուած նիւթերուն կը յաջողի սալ գեղարուեստական որակ մը:

Յայտնենք անմիջապէս, որ յուշագրական խորքով այս պատմուածքը դրուագային ազաւորութիւն մը կը կրէ ընթերցողին վրայ: Ընդարձակութիւն», «ժողով», «Սօցիալի բաղաբաղուի», որ խորհրդուոր եւ մութ իրականութիւններու աշխարհ մը ունի իրեն իրբի եմթանոց:

Սարսուղադեցիկ ժամանակաշրջանի մը անըստ ու անպատմելի պատմութիւններուն մէջէն, ստալինեան հազար ու մէկ կարմիր դիշերներէն դիշեր մըն է Մահարիի սեւեռածը: Գիշեր մըն է, կարծես անիրական, դառանցադին, բոլորովին կոշտարային միջնորոտով, ուր մարդիկ ստուեր են այլևս, անբանաձեւիկ վիշտ:

«Ատութիւն», «Հակամարդկային կատակերգութիւն», «ժողով», «Սօցիալի բաղաբաղուի», «Մտայ» եւ հարցունք» պատմող այս գրութիւնը, աւելի հաւատարիմ պիտի մնար իրականութեան եւ տրուեալին, եթէ երբեք իր վախճանական մասին մէջ ստալինեան բարձրը լեռնաշունչ արուեստական միջոցներու շնորհիւ, եթէ զերծ մնար նոցի անողոք մը իրենց անողոքին հետ շփոթելու դիտաւորութենէն:

Հիւանդութիւնը, քանիքորոք անպատարազէն, նորից ուղեց վերանայել իմ լինել-չլինելու խնդիրը: Այն օրուանից, երբ ես մի գիշերուայ մէջ սփռագործ

դարձայ, նրա հետ քայլում էինք կողք-կողքի: Փոխում էր նրա բնաւորութիւնը, դէմքը, նրա հետ փոխում էի նաեւ ես: Երբ ընթացիկ էր նա՝ կրում էր ընդ-

հանուր բնոյթ, ուղեկցում էր ինձ առանց որոշակի պահանջներ ներկայացնելու՝ դաջցնել տալով միտյն իր գոյութիւնը. այս անգամ նա նորից ուզեց յիշեցնել, որ ես բացառութիւն չեմ եւ որ գեանափոր, ցուրտ եւ մութ մեռելատան յարմարութիւններն ու անյարմարութիւններն ինձ էլ են վերաբերում...

Այս ան ընթացիկ եւ ընդհանուր հիւանդութիւնը չէր, որի մասին երազում էին եւ որի մտերմութիւնը շատ թանկ էին դիտարկում կալանաւորները: Երեկոյան, աշխատանքից յետոյ, երբ յորձեւ եւ սպառուած ներս ես մտնում ճամբարի դարպասներից եւ զգում ես, որ ներքոյ խորում է բարակ մի դող եւ երեսից ալուրում է, հաւատա՛, որ դու գրտնրում ես երջանկութեան սեմին: Գուանջատում ես ջո բրիզադից եւ թեքում աջ, ուր եւ գտնում են մեզ Ծանօթ հիւանդանոցային միտարկանի տները: Հիւանդները ընդունարանը գտնում է հէնց առաջին շինութեան մէջ, մի փոքրիկ, քառակուսի սենեակ, ուր փարաւոնական փտալիզ, միւսասպիտակ բեղ-մօրուսով բուժակ Մերպերտն ընդունում է աշխատանքի վայրում Հիւանդացաններին: Ոմանց նա տալիս է մի հեղուկ, որն ինքն է պատրաստում ինչ-որ բոյսերից, որոնց ուժն ու տեսակը միայն նրան է յայտնի, ուրիշներին տալիս է Չերմաշափը: Երբ պարզում է, որ Հիւանդը յիբուսի Հիւանդ է, այսինքն՝ Չերմաշափանը ՅՂԵ-ից բարձր՝ բուժակ Մերպերտը նրա տունն ու ազգանունը գրում է խուռաքարտի վրայ. այն նշանակում է, որ նա յաջողօրն արեւտուած է աշխատանքից: Չերմութիւնից եւ ուրախութիւնից շո-ղացող դէմքով նա բարաք է մտնում եւ իր երջանկութեան մասին հաղորդում մօտիկներին, շահելով շնորհաւորանք եւ նախանձ:

Եղան ճարպիկներ, որոնք արհեստական կերպով բարձրացրին իրենց Չերմութիւնը. այդպիսիները ձախ թեւէ տակ սխտոր քսեցին, ուրիշները բթամատով տը'կ-տը'կ խփեցին Չերմաշափի անդիկաւոր վերջաւորութեանը եւ անդիկը Հրե-

ցին վեր: Գործը փշացրեց թե՛Փլիսեցի Հրեայ Միխայէլ Չինգաւը. նա թեւէ տակից հանելով Չերմաշափը, մեկնեց բուժակին: Բուժակն իրար անցաւ, եւ իրաւունք ունէր. Չերմաշափը ցոյց էր տալիս 41-5: Մարտափելի Չերմութիւն... Գարգուեց, որ Չինգաւը պէտք եղածից աւելի էր բարձրացրել անդիկը, կորցնելով այս գործում անհրաժեշտ չափի ըզգացումը... Գործը բացուեց եւ այնուհետեւ նշանակուեց Հերթապահ սանիտար, հետեւելու համար, որ Հիւանդները Չերմաշափը դործածեն առանց խոր-պիտութեան:

Ձէ, այս ան ցանկալի ու երանելի Հիւանդութիւնը չէր, որ բունց իմ հնամաշ, բամպակէ բանկոնի մաշուած օձիքից, բամպակէ բանկոն, որ անչափ յիշեցնում էր Երեւանի մատնաքաշ հացի զուպահեռները:

Ֆիզիքական աշխատանքի անընդունակներին կամ նուազ ընդունակներին փոխադրեցին նորաշէն, նուազ բարեկարգ չորրորդ բարաքը: Իմ միակ ուրախութիւնն այն էր, որ ինձ հետ այդ բարաքն ընկան երկու Հրեայ ուսանողներ, էյդ-դելմանն ու Պելզները. նրանց հետ մօտ էին իմ յարաբերութիւնները. նրանք անդիք արտասանում էին Նադսոն ու Եսե-նին եւ Եսենինից բարձր էին դասում Նադսոնին: Բայց որքան Չերմ լինէին ժեյ փոխյարաբերութիւնները, նրանք անկարող էին տաքացնել չորրորդ բարաքի ցրտութիւնը: Գրտում ցուրտ էր ու եթէ դու գրտի ցրտից ներս ընկնէիր այս բարաքը, մախորկայի կծու հոտը միայն քեզ կարող էր յիշեցնել, որ դու ոչ թէ դրսում ես, այլ ներսում:

Այս պայմաններում էլ Հիւանդութիւնը բունց ինձ, յետոյ իր հաշիւները մաքրելու հաստատ մտադրութեամբ: Նախ ոտներս սկսեցին մռնուլ, յետոյ ատամներս կափկափեցին, տպաւոր զարմինս զողաց ներքին Չերմից եւ արտաքին ցրտից:

Սա տեսնում եմ էյդ-դելմանին եւ Պելզներին, նրանք մտահոգ դէմք ունեն եւ չրթունքներից երեւում է, որ խօսում են,

իսկ ևս վատ եմ լսում նրանց ճայնը: Յիտոյ անկողնը բռնում է իմ ուղ չուրիւնը եւ ինձ թւում է, որ ինձ իջեցնում են մի մութ ջրհոր, ուր ե՛ւ շուգ է ե՛ւ ցուրտ, ե՛ւ նեղ է, ե՛ւ լայն, ե՛ւ մութ է, ե՛ւ կիսամութ:

- Աչոտ դայուն կանչէք, - գոռում եմ ես Հայրէն եւ նրանք հասկանում են, որ Աչոտ դայուն եմ ուզում:

- Շուտով... բրիգադները մտնում են դարպասներին... Շուտով, - հանգըստացնում է ինձ Պելզները, թեքելով վրաս իր եռանկիւնի զիթը: Իսկապէս որ նա եռանկիւնի զիթ ունի, իսկ ես մինչեւ Հիմա չեմ նկատել:

- Պելզներ, - ասում եմ ես տաքութիւնից խեղդուելով, - դու եռանկիւնի զիթ ունես:

- Աւելի լաւ է չիտենք զիթի մասին, - պատասխանում է նա հաշտարար եւ վիրաւոր, նայելով դէմքիս, ո՛չ, զբթիս:

- Յամենայն դէպս իմ զիթը եռանկիւնի չէ, - պաշտպանւում եմ ես, որ սալով նրա ականարիչ:

Բայց այդ միջոցին երևում է բուժակ Մերպերտը:

- Կապտել է, - ասում է նա եւ նորից ինձ թւում է, որ խօսքը զիթի մասին է: Տաքութեան մէջ այս ամէնն ինձ թրտում է գուարճայի եւ ես ուզում եմ ծիծաղել, բայց արդիւնքն այն է լինում, որ աչքերս յեցում են տաք արցունքներով, սակայն ես զգում եմ, որ դա կասլ չունի լացի Հետ, ինչպէս նաեւ ծիծաղի... Չէզոք արցունքներ...

Երևում է Աչոտ դային եւ նորից անհետանում ու երևում նորից: Երեւում են երկու սանիտար, գորշ, կեղտալուր խալաթներով:

Այս Աչոտ դային ինձ օգնում է, որ ես հազնեմ իմ վայնկաները. նա գլուխս խոթում է ականջաւոր գլխարկի խոնաւութեան մէջ, փաթաթում ինձ իմ տընային վերմակով եւ ահա...

Նւ ահա ես Աղամի մերկութեամբ կանգնած եմ բաղնիքի սառը յատակին եւ պարում եմ մէկը այն նուրբ պարերից,

որը կայանում է կանգնած տեղը դողալու եւ ամբողջ մարմնով գալարուելու մէջ: Ամեռային շորերից ազատուած Աչոտ դային յարձակում է ականջաւոր ջրամանի վրայ, խոթում է տաք ջրով լեցուն լայնչի պղնձի մէջ, դուրս է քաշում, ձեռքով ստուգում է ջրի ջերմաստիճանը եւ գոռում:

- Պի՛նդ կաց, Հայրո՛ւկ...

Ես վաղածանօթ եմ այս «Հայրուկ»-ին: Նա ինձ այդպէս է անուանում, երբ ես ոչ մի բանով նման չեմ լինում «Հայրուկ»-ի...

Նա ջրամանի ամբողջ բովանդակութիւնը շրփացնում է ինձ վրայ, որին յայտրդում է երկրորդը, երրորդը, արտ չորրորդը, հինգերորդը: Բաղնիքում կանգնած մշուշում ուրուագծուում է չինացի վանեան. նա բռնում է Աչոտ դայու ձեռքից.

- Խվատ, խվատ, - ասում է նա, այ-

սինքն բաւական է; այսինքն՝ հինգ կայանաւորի հասանելիք ջուր ծախսուեց միայն ինձ վրայ: Աչոտ դային վերջին, եզրափակիչ վեցերորդով ծեփում է ինձ եւ ես զգում եմ ինձ տասներօթերորդ երկրնքում: Ոսկորներս ասես փափկում են, ես պարուրում եմ ամպի բամպակներով եւ, երեւի կորցնում եմ իմ կշիռը: Մի անգուսպ ցանկութիւն՝ պսակել հէնց այդտեղ, ցեմենտի յատակին: Ես երեւի փորձում եմ կատարել իմ ցանկութիւնը՝ բայց այդ ժամանակ զգում եմ Աչոտ դայու ուժեղ ձեռքերի ներկայութիւնը: Նա դուրս է Հանում ինձ, համարեա գետնից կտրած, յետոյ վանեոյի օգնութեամբ ինձ հազցնում են, փաթաթում վերմակով, եւ ես Աչոտ դայու եւ մի սանիտարի օգնութեամբ դուրս եմ գայիս բակը: Յուրս օղբ խփում է դէմքիս չծածկուած մասերին, ես շնչում եմ զգուշութեամբ, ներսիս տաք օդը խնայելու համար:

Ահա եւ Հիւանդանոցը: Ընդհանուր պալատի դրան մօտ, ձախ կողմը մի գուռ է բացուում: Դա մի նեղ խցիկ է երկու նեղ, երկաթէ մահճակալներով, որոնք զբաղուած չեն:

- Այտեղ, - կարգադրում է բուժակ Մերպերտը:

- Ինչո՞ւ ոչ ընդհանուր պալատը, - մտալուծում է Այոտ դային:

- Այո՛, այո՛, - գրեթե շնչում է Մերպերտը, - միայն այտեղ, միայն այտեղ:

Իսկ ինձ գարմացնում է, որ Այոտ դային մտալուծեց եւ չի ուզում, որ ես ապրեմ ահա այս խցիկում, ուր օդն աւելի մաքուր է, ուր չեմ տեսնում ուրիշ հիւանդներին, չեմ լսում նրանց...

Ինձ պարկեցրին ծախակողմեան մահճակային:

- Հայդո՛ւկ, սի՛նդ կաց, ես առաւօտեան կը գամ, - ասաց Այոտ դային տեսուր ժպտով, միջանցքում խօսեց ինչ-որ բաներ Մերպերտի, ապա սանիտարի հետ եւ դնաց: Մօտեցաւ բուժակը եւ թելիս տակ դրեց սառը ջերմաչափը: Գնել եմ երեւի, որովհետեւ չեմ ըզպացել, թէ ինչպէս թեւատակիցս ջերմաչափը հանել են: Ես պարթում եմ ինչ-որ թիթիկացից եւ էլի ինչ-որ բանից նրկու մահճակալների մէջտեղ դրաւած փոքրիկ, քառակուսի սեղան-պահարանի վրայ վառում է նաւթի ճրագը: Դուռը բացուեց եւ մի պատգարակ իջաւ միջանցքի յատակին: Պէտք է ենթադրել, որ պատգարակը իջեցրին սանիտարները, որոնք չեն երեւում: Բայց ահա երեւում է պատգարակի վրայ պառկած մի մարդ: Ահա եւ սանիտարները. նրանք մի կերպ նստեցնում են հիւանդին, յետոյ մէկը դրկում է թելերի տակից, միւսը ստններն է բարձրացնում եւ ներս են քերում:

Երիտասարդ է, դեղին դէմքով, սրը մճճուած է պղնձագոյն բուսականուքեամբ: Մարմինն անշարժ է, դրա փոխարէն նա անդադար շարժում է դուռը եւ տեղ չի դնում նրա համար: Աչքերը դուրս են թռել իրենց խոռոչներից եւ թւում է, թէ նա ոչինչ չի տեսնում: Գերմանացի է, այդ երեւում է նրա բացահայտութիւններից, ապրում է Ռուսաստանում, այլապէս չէր արտասանի այն մի քանի կտարտուած ուղեւորէն բառերը:

- Օ՛, մայն դո՛թ, Օ՛ մայն դո՛թ, -

ասում է նա խեղդուելով եւ ձեռքը խրփում է մահճակալի երկաթին:

- Իմ ճաշամանը, - խնդրում է նա: Սանիտարը սեղանի վրայ է դնում մեր բրուտանոցում պատրաստուած հողէ ամանը:

Նա իր երկար, դողացող մասներով դրեթէ յարձակւում է ամանի վրայ, վերջրնում եւ դնում կրծքին:

- Դուռը, - խեղդւում է նա, այս անգամ սանիտարի ձեռքից համարեա խում է փայտէ գդալը եւ մի կերպ տեղաւորում պնակում:

- Ես հաց ունէի, - անվստահ կերպով ասում է նա եւ գլուխը շարժում ես ու առաջ. նա ուզում է յիշել՝ հաց ունեցե՞լ է, թէ ոչ:

- Այո, ես հաց ունէի, - այս անգամ առարկութիւն չվերջնող տոնով ասում է նա:

Սանիտարը պարզում է կրծքուտւած, չարշարուած սեւ հացի մի կտոր:

Գերմանացին վերցնում է հացի կըտորը, գծուարութեամբ դնում է ամանում եւ մի բողէ հանգստանում: Բայց այդ տեսում է մի կամ երկու բողէ, դուռը երեք բողէ կամ մի ամբողջ յաւիտենականութիւն:

Սցիկի դուռը դժգոհ շան մոտոցով ծածկուեց: Հիմա մենք մենակ ենք, ես եւ նա: Նա չի նկատում իմ ներկայութիւնը եւ այդ լաւ է: Իմ դողը անցել է, բայց դրա փոխարէն մէջո վառում են հանգարտ, բայց չիկացած կրակներ: Ես կծկուել եմ հիւանդանոցային վերմակի մէջ՝ ինչպէս երեխան մօր արդանդում, դունդ ու կծիկ եւ միայն մի աչքով նայելու համար մի անցք եմ թողել:

- Օ՛, մայն դո՛թ, - լսում եմ նորից նրա խուլ ձայնը: Նա նորից փորձում է դուռը շարժել, բայց ըստ երեւոյթի այդ նրան չի յաջողւում: Նա շարժւում է ստես փորձելու համար իր ուժերը, միշտ ամուր պահած կրծքի վրայ իր հարստութիւնը:

Ներս մտաւ բուժակ Մերպերտը՝ ջերմաչափը ձեռքին: Նա մօտեցաւ հիւանդին, թիթեւ կուպաւ, նայեց նրա

զէմքին եւ կարծես փոխեց իր մտադրութիւնը: Նրա սպիտակ միրուքի վրայ մի բոպէ շողաց ջերմաշափը եւ նա արագ դուրս եկաւ, առանց Հիւանդի ջերմութիւնը չափելու: Դուրս գալիս ես լռեցի նրա հասկէ լսելի չսեռու-սեռու-սեռու-նք: Այդպէս էր նա անում ընդունարանում, երբ ազմուկ էր բարձրանում: «Սեռու-սեռու-սեռու» - ի՞նչ գործ ունի այս զսեռու-սեռու-սեռու-ն այստեղ, ուր լուսթիւն է տիրում, քարէ լուսթիւն, երկաթէ լուսթիւն եւ ալիսարհում գոյութիւն ունեցող բոլոր ծանրութիւնների լուսթիւնը:

- Օ՛, օ՛, - լսում եմ ես իմ հարեւանի բացականչութիւնն այս անգամ ոչ թէ շուրթերից, այլ կողորդից: - Օ՛, ատում եմ ես, դիմելով այս Օ-ին, - ի՞նչ ես դու, ո՞վ ես դու, օ՛... - եւ նա ինձ պատասխանում է, - մի՞թէ չգիտես, թէ ինչ եմ ես: Օղակ եմ, մեծ, շատ մեծ, մի չիկացած օղակ, վիթխարի մի օղակ, որի մէջ են աւել գործող բանտերն ու ճամբարները, ուր մեռնում են զրպարանուանները, որոնք առանց խորութեան փարատներ են, որովհետեւ նրանց մարմինները կը մնան աննեխ ու անվթար բեւեռային սառչէ դամբարաններում: Օ՛...:

Իմ հարեւանն աղնայտ կերպով տանջւում է, հետզհետէ աղաւաղում են նրա օտ-երը, հիմա կարծես նա ջուր է վերցրել բերանը եւ կոկորդն է լուանում, - գը՛լ-գը՛լ-գը՛լ... խը՛խ: Մակայն՝ պարզում է, որ ոչ թէ ջուր է այդ, այլ թանձր, լերդացած լորձուք, որը ներսից բարձրանում է գէպի նրա կոկորդը, լցւում բերանը եւ ծորում ծնօտին, կրծքին, բարձին:

Նա անշարժացաւ: Դուրս բացուեց այնքան, որ մի աչք միայն կարող էր նայել, եւ նորից փակուեց: Յետոյ արագ ներս մտաւ Մերպերաւ եւ դուրս եկաւ: Ես նորից լսեցի՞, թէ ինձ թուաց, որ լսեցի նրա զսեռու-սեռու-ն: Միջանցքում երեւաց պատգարակը: Ներս մտան սանխտարները: Հաւատարմաւով, որ հողէ ամանին չի սպանում ընկնելու վտանգ, նրանք գերմանացու դիակն

իջեցրին պատգարակին եւ անհետացրին՝ կրծքի վրայ ամուր պահած ճաշամանը, ճաշամանում մի փայտէ գդալ եւ շարշարուած ու կրծոտուած սեւ հացի մի կտոր:

«Մարդը մահացաւ» - ասում եմ ես ինձ, - հէնց նոր մահացաւ եւ նրան տարան: Դու էլ կը մահանաս: Մի՞թէ այդ քեզ չի յուզում...»: Ես նայում եմ դատարկ մահճակալին: - Յիմարութիւն, այս ամէնը նրանից է, որ ես տաքութիւն ունեմ: Աչքիս բաներ են երեւում: Մեռու գերմանացին՝ կրծքին մի կտոր հաց: Յիմարութիւն, յիմարութիւն: Իսկ բարձր, բարձր, չէ՞ որ բարձր թաց է: Երեւի այսպէս են խելաղարում: Եւ ինչո՞վ կ'աղացուցանես, որ դու արդէն չես խելաղարուել: «Կեցութիւնը պարձում է դիտակցութիւնը...»: Պարզ է, որ ես դեռ չեմ կորցրել դիտակցութիւնս, անգամ մէջըբերում արի: Յիտա՛տ, ցիտատներ՛ր:

Ու նորից՝ շարժում միջանցքում ու նորից՝ դուրս բացում է, ու նորից՝ պատգարակ միջանցքի յատակին: - Բարձր՛վ ես գալիս, ա՛յ նորեր, ա՛յ լաւեր, - ո՞վ է սաեւ... Յովհ. Թումանյանը: Ո՛ւմ. երիտասարդ գրողներին: Պարզ է, որ ես կամ խելաղար եմ կամ խեղկատակ: Կատակ, երեւի հիւանդանոցային կատակ, ոչ, երկրային կատակ, աստուածային կատակ: Ինչո՞ւ աստուածային, ի՞նչ գործ ունի այստեղ այդ երկնային քաղաքացին, պարզապէս մարդկային, օ՛, ո՛չ, հակամարդկային կատակերգութիւն: Եթէ լուրջ գատենք, ես ի՞նչ գործ ունեմ այստեղ, սա ի՞նչ երկարատեւ գործուղում է: Կտրուեցի գործերիցս ու թ տարի ատաղ: Ինչո՞ւ եկայ այստեղ: Ե՛տ դնալ, տո՛ւն: Թայց ե՛ս չեկայ, ինձ բերին, ես չե՛մ կարող դնալ, ինձ կարող են տանել:

Իմ նոր հարեւանը վերմակի տակ համարեա չի երեւում: Նիհար է նա, աչքերը, որը հիմա յառել է առաստաղին, հանգած են: Ե՛էկ է նա, մաղբն անհատասար խուզուած: Թւում է, զըլուխն է միայն բարձի վրայ, իսկ մար-

մինը՝ չկայ: Կարծես հակառակն սպասուցելու համար՝ նա մի ձեռքը հանում է վերմակի տակից, բարձրացնում եւ ինչ-որ նշան է անում, որը մտաւորապէս նշանակում է՝ «հեկէք»: Ո՛ւմ է նըշան անում. սենեակում ոչ ոք չկայ: Երբեւում է նրա վիզը, երկար ու ճերմակ, բարաւիկ վիզը: Ձէ՛, նա մարմին ունի, նա պարզապէս նիհար է, շատ է նիհար: Երբ նրան դրին ժահակալին, ես աչքերս փակել էի, յայտ սենեակում, որ կը բանամ աչքերս եւ ոչ ոքի չեմ տեսնի: Բայց ահա պակած է նա վերմակի տակ ու ձեռքով նորից նշաններ է անում: Յետոյ՝ - Այսպէ՛ս, - ասում է նա ու կըրկիւթում, - այսպէ՛ս: Ձայնը կրծքային է, մի տեսակ կռուարար. այս էլ հետաքրքիր է: Ես՝ ա հետաքրքիր:

- Քաղաքային օրաթերթի հասարկային լուսանկարիչ Սերգէյ Լեակով կամ պարզապէս Սերեոսա... շատ ուրախ եմ: Այսպէս:

Նրա նիհար դէմքի մկանները շարժւում են: Նա երեւի ժպտում է իր խօսակցին կամ խօսակիցներին:

- Բոլորն են այստեղ: Կթուրուհիներ, ասաջ: Այսպէս, այսպէս: Գաշտային քրիզադի անդամներ, այսպէս, այսպէս: Բրիդադիներ, ասաջ, ասաջ: Խո՛ւրազրուծիւններում շատ բարձր են գնահատում... (նա երկու ձեռները շարժեց վերից վար) այսպիսի... ըլլում... կուշտ ունենեք: էյ դու, դուրս արի, նա, ի՞նչ է, չի՞ ուտում: Գո՛ւ էլ, դո՛ւ էլ: Անյարմար է, հիւանդանոցից են փախել, ի՞նչ է... Լո՞ղբ... մի՞թէ լողերը նիհար են լինում: Պատրաստուեցէ՛ք: Իսկ հիմա ժպտացէ՛ք: Ժպտացէ՛ք:

Նա լռեց, շարժուեց, ուղեց բարձրացնել զլուխը բարձից, բայց չկարողացաւ:

- Ժպտացէ՛ք, - խեղդուած ձայնով հրամայեց նա, - խօսքը միայն քրիզադիներին չի վերաբերում, ոչ էլ միայն վարչութեան անդամներին, ժպտացէ՛ք, որքան կարելի է լայն ժպիտով, ժպտացէ՛ք, ասում եմ, այլապէս սպառնեմք:

դէմքով լուսանկար ո՞ր խմբագիրը կը սպի: Ժպտացէ՛ք, ժպտացէ՛ք, խնդրում եմ, դո՛ւն է մի...:

Նա թնկթնկաց երեխայի նման, կրկնելով, ժպտացէ՛ք, ծնկաշոք խնդրում եմ... դիտեմ, դժուար է ժամանակը, բայց դուք ձեռացրէ՛ք, որ ժպտում էք... այ, այսպէս... նայէ՛ք թերթում սպասուած լուսանկարներին, բոլորն էլ այսպէս են ժպտում... Թանկագին ընկերներ, սպա՞, շա՞ն սրդիներ, մոռացել են ժպտալը...:

Նա լռեց եւ խոսոված երեխայի նըման սկսեց քիթը վեր քաշել: Ես փորձում եմ նրա համար, յատկապէս այս թշուառ լուսանկարիչ համար, այս նախկին Սերեոսայի համար ժպտալ, բայց այդ ինձ չի յաշողում: Դէմքիս մկանները կարկամել են: Նորից եմ փորձում, ես չեմ կարող ժպտալ, ես ուզում եմ, բայց չե՛մ կարող ժպտալ...:

Վերջին խօսքերը, երեւի ես արտասանում եմ բարձրաձայն, որովհետեւ դրան նեղ բացուածքից մէկը նայում է ու անհետանում: Ուրեմն ի՞նչ, իսկ եթէ այս բոպէիս ներս մտնի երրորդ բաժնի մտայլ պետը եւ ժպտալով ասի, - ժողտա՛, մի անգամ ժպտա եւ մենք թեղ կ'ազատենք, - ես չպիտի՞ կարողանամ ժողտալ: Իսկ եթէ նա համոզի, - ժպտա՛, յիմա՛ր, ժպտա՛, ե՞րբ է ազատութիւն ձեռք բերուել այդքան հժան դնով, ընդամենը մի ժպիտ... Գու ժպտա՛, յի՛չիք Ստեփանաւանի ցեղական ազնիւ կովերը եւ ժպտա՛... ժպտա՛, յիմա՛ր, ժպտա՛...:

Իսկ հիմա նա խօսում է տաղնապով, խառնելով բառերը:

- Ե՞ս... սպասումքութեան կո՞չ... ծիծաղում է՞ք, ինչ է: Մի խփէ՛ք, անտուններին են խփում... Ե՞ս, ծիծաղել եմ ժողովուրդներին հօր վրա՞յ... Ե՞ս... այդ լուսանկարը իմը չէ, մենք ստացել ենք... ուստույը վատ էր, իմ ուստույն էլ չեղոտ, դուրս եկաւ: Խփէ՛ք, խփէ՛ք...:

Նա կրճտեց ատամները, բարձրացաւ եւ ետ ընկաւ բարձին: Լալի՞ս է, թէ՞ ծիծաղում:

Ես այլևս չեմ կարող լսել: - Ձեռ կարող, - ուզում եմ աղաղակել եւ աղաղակում եմ, բայց ոչ մի ծպտուն: Եր պարզապէս մտքումս եմ աղաղակում, սրտումս եմ աղաղակում, երեւի հոգումս եմ աղաղակում: Աղաղակ, աղաղակ...

Երբ ես բացում եմ ասես սոսնձով իրար կպած կոպերս, երկրորդ մահճակալը դատարկ է: Այրւում եմ ես կրակների մէջ ու չեմ մոխրանում: Երեւի այս է ոյն, ինչ որ կոչւում է գեհեմական կրակ: Մանրացել եմ ողջ էութեամբ հազար սարի ծանրութեամբ: Պարզ է, որ ինձ տարել է մղձաւանջը: Ձե՛ր եղել ոչ գեղմանացի, ո՛չ մի ծպտով սրտուղ ազատութիւն, ո՛չ լուսանկարիչ իր ուսուչով: Չառանցանք: Իսկ ես կա՞մ: Այո՛, ես կամ, եթէ միայն այս ետը ես եմ:

Այս ետը ես եմ, սրովհետեւ ինձ ծանրը ինքնամոռացումից հանում է մի հաստ ձայն - բո՛ւ, բո՛ւ... Ի՞նչ գիտակցութեանը ոչինչ չի հասնում այս բառից բացի: Գուցէ ականջներումս է հնչում, լսողական պատրանք է գուցէ: Ես դժուարութեամբ բաց եմ անում աչքերս եւ բացի խաւարից ոչինչ չեմ տեսնում: Յետոյ խաւարում ես նշմարում եմ լոյսի մի փշուր: Աւելի ուշ՝ ես գիտակցում եմ, որ փակուել է այն փոքր անցքը, որը կապում էր ինձ արտաքին աշխարհի հետ: Ես աղատում եմ դուրս վերժակից եւ չեմ հաւատում աչքերիս: Հարեւան մահճակալին նստած է մի յաղթանա՞ղամ մարդ, կարմիր, դէր գէժքով, ոլորուն, հաստ, սեւ բեղերով... Աւելի ուշողիք նայելով, ես պնդում եմ, որ նա ամենեւին յաղթանա՞ղամ չէ, գուցէ եղել է յաղթանա՞ղամ, բայց երեւի նախկին կոչման բարձրութեան վրայ մնացել է միայն դէժքը: Իսկ դէժքը... ոչ, դա դիրութիւն չէ, նրա գէժքը պարզապէս ուռած է, իսկ կարմրութիւնն անասող է, անասող ու հիւանդագին: Նա նստել է մահճակալին, հիւանդանոցի շապիկովարտիկով, ոտները վար կախած եւ մեծ, անանգիստ աչքերով նայում է սառցալարած փոքրիկ պատուհանից դուրս:

- Սարսափելի եղանակ է դրոտում, -

ասում է նա իր բասով, կարծես շարունակելով վաղուց սկսած խօսակցութիւնը, - ձիւնահոգի: Ես իջայ պատարապէս եւ հարկեւ կարողացայ ինձ նետել... (Նա լռեց, ձախ ձեռքով բռնեց կուրծքը...) այստեղ: Տեսնես ե՞րբ է լուսանալու: Գուցէ ժամացոյց չունէ՞ք... Յիմար հարց: Երբեք այնպէս չեմ սպասել լուսարացին, ինչպէս այսօր, այս դիչեր: Գու ինչո՞վ ես հիւանդ, հարբուխո՞ւմ... Իմն էլ դրա նման մի բան է, արեան ինչոր բան: Արիւնս սպիտակ դուր է պարզել: Իսկ այսօր տաքութիւնս բարձրացաւ եւ ահա ժամանեցի. թոյլ տուէք պառկել: Այստեղ երեւի պառկեցնում են թեթեւ հիւանդներին: Կամ արտասահմանցիներին: Այո, ես արտասահմանցի եմ, Բուլղարիայից, Մոֆիայից:

Նա լռեց, շուտ եկաւ մի կողքի վերայ, աչքը յառեց դէպի փոքրիկ պատուհանը: Ձիւնահոգի թեւահարում է պատուհանը եւ վերաւոր թռչում հետու: Քիւրքը ճահում են, միջանցքով մէկն անցաւ որթորթալով: Ինչ լու է, որ աշխարհում էլի մարդիկ կան, բացի երկու սանիտարներէից եւ Մերպերտից, բացի այս արտասահմանցուց եւ ինձանից: Ի՞նչ տախտակէ պատը բաժանում է ինձ հիւանդների պալատից: Այնտեղից էլ լըսում է երկարատեւ մի թառանց: Ուրեմն այնտեղ էլ մարդ կայ, որը չի ջնում: Կարելորն այն չէ, թէ ինչու չի ջնում, սարսափելի է, երբ բոլորը ջնած են եւ դու ես միայն անջուն: Այդ դէպքում դու մտածում ես բոլորի եւ տանջում բոլորի փոխարէն: Այստեղից էլ այսպիսի մի մեծ փիլիսոփայութիւն, - լաւ է ջնել ուրիշների փոխարէն ջան արթուն մնալ, լաւ է մեռնել բոլորի փոխարէն... Ձէ, այս արդէն չեղաւ, - ինչո՞ւ չեղաւ, - շարունակում եմ ես դառանցել մտքում, մի՞թէ ես չմեռայ ութը տարի առաջ դուրս մնացածների փոխարէն: Մեռայ եւ եկայ այս աշխարհը, ուր ստատոնաները դիտուարական շորեր են հագնում, իսկ հրեշտակները... հրեշտակներ չկան այստեղ, զժոխքում հրեշտակները գործ չունեն, չեն երևում:

— Ես Մոֆիայի քաղաքապետին եմ : Այո, Մոֆիայի դուրսը : Մարդու եւ քաղաքի մէջ այն սարքերութիւնը կայ, որ երբ մարդու գլուխը կտրոււմ են, մարդը մեռնում է, ոչ մի ուրիշ գլուխ չեն պատուաստի նրա ուսերին : Իսկ քաղաքը... Մոֆիայի դուրսը կտրեցին, նրա տեղը դրին մի ուրիշ գլուխ, եւ Մոֆիան ապրում է : Այո, քաղաքները ապրում են, ապրում են նաեւ ժողովուրդները... Ահա մեզ մօտ (նա մայնի ինչոյցից), երկու սուր արած բեղեր եւ մի զոյգ երկաթէ սապոտ : Ահա ամբողջը :

Իսպիսի բան չէր պատահել անտառում, ա՛յ քաւոր :
Որ ժամափխը դառնայ քաղաք, քաղաք...

Նա երգեց, բայց երգ դուրս չեկաւ, ուղեց ծիծաղել, այդ էլ շատացուեց :

— Մանկական երգ է, — ասաց նա, — ես գիտեմ, որ դուք բանտում անդամ մտնեցիք էք նրանից... Մանկական երգ է :

Նա սեւեռուն նայեց ինձ : Ըստ երեւոյթին պատուութեամբ, բայց հաւատարմ էր իր մտքերը :

— Եւ ինչո՞ւ էք վախենում, մնում է անհասկանալի : Ինձ մինչեւ այսուեղ քերելը... Ես անցայ տասներեք քաղաքների տասներեք բանտերով : Մի տեսակ՝ զրօսալընիկ : Դաժան զրօսանք էր դա : Տարբերութիւնը մեծ էր այդ բանտերի մէջ : Մի տեղ մեռածներին նոյն օրը հանում էին կամերայից, մի ուրիշ տեղ՝ երկրորդ օրը, եղայ մի բանտում եւս, ուր մեռելներին ամենեւին չէին հանում : Մենք նրանց համար ստեղծեցինք այսպէս կոչուած մեռելների անկիւն : Մենք նրանց դարսում էինք իրար վրայ, որպէսզի մի քանի սանտիմետր զկենսական տարածութիւնը չաւենէք, որովհետեւ ջնում էինք յայտնի ճոտ-գլուխ բանտային սխտեմով : Մթնոլորտը բոլոր զնգաններում նոյնն էր, — դազազած մարդիկ, քաղցից, կեղտոտութիւնից, մօտ հինգ հարիւր մարդկանց համար

յատկացուած մէկ միզամանի շուրջը կանդնած հերթերից, դարչահասութիւնից պաղազած մարդիկ, որոնք իրենց ճճօրճ անունը տալիս էին երկհիղածութեամբ : Ես տեսիլ եմ մեծ մարդիկ, գիտնականներ, պատասխանատու աշխատողներ, նրանց օձիքների վրայ դեռ երեւում էին մէկից անկի վայրենի կերպով պոկոտուած շքանշանների հետքերը... Բայց նրանք դեռ հաւատում էին նրան : Տեսնո՞ւմ ես, ես էլ նրա անունը չեմ տալիս : Սա էլ մի բան նշանակում է : Նրանք փնտում էին մեղաւորներին եւ գտնում : Նրանք հաւատացնում էին, որ այս վիթխարի ողբերգութիւնից նա անտեղեակ է եւ եթէ նա իմանա՛յ... օ՛, միայն թէ նա իմանա՛յ...

Ներս մտաւ Մերպերտը :
— Քնէ՛ք, — ասաց նա, — ուշ գիշեր է, զնէք, թէ չէ դայլը կը դայ, ով որ ջնած չի, նրան կը տանի, — նա երեւի ժպտաց, որովհետեւ նուրբ շրթունքների բացուածքում երեւաց նրա սպիտակ, արհեստական տատմանալորը :

— Գայլը որ դայ, չի հարցնի՞ ո՞վ է ջնած, ո՞վ է արթուն :

— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, ի՞նչ էք ասում, — աշխուժացաւ բուժակը, — ես Հէնց Հիմա հեռադիր ստացայ գլխաւոր գայլից, հեռադրում պարզ ասուած է՝ ջնածներին չեմ դիպչի...

— Գայլերի հետ կապ ունէք, Իոսիֆ Իսակովիչ :

Մերպերտը մթնեց :
— Այնուամենայնիւ՝ իմ կապը ոչխարների հետ է, այս ես անկի պարզ եմ զգում, երբ ինձ հետ եմ լինում :

Ու դուրս եկաւ — Մի բան էլ ասեմ, ես չգիտեմ, համաճա՛յն էք, մի ամբողջ սերունդ... Դուք հասկանո՞ւմ էք... մի ամբողջ...

Բայց ինձ տարաւ նորից մի պզտոր ալիք : Եւ ես չկարողացայ նրան լսել : Իմ սկանչիս, կարծես հեռուից, մէկ-մէկ հասնում էր նրա զրո՛ւ-բո՛ւն բասը : Այդ նշանակում է, որ նա խօսում է : Թո՛ղ խօսի, իսկ ես, ահա, Երեւա-

նում եմ: Վերջին օրը, որով եւ վերջա-
ցաւ իմ երիտասարդութիւնը եւ ընդհան-
րապէս կեանքը, Արոզեանի վրայ, ման-
կական խաղալիքների խանութում, ես
տեսայ մի մեծ ձի եւ որոշեցի գնել երե-
խայիս համար: Ընդմիջում էր, խանու-
թը փակ: Չսպասեցի խանութի բացուե-
լուն եւ որոշեցի յաջորդ օրը գնել ան-
պայման սեւ բաշտով, չորս կանաչ անիւ-
ների վրայ կանգնած այդ չքնաղ նժոյ-
գը: Նոյն գիշեր, մի պարմանալի հեռա-
տեսութեամբ, մեր հանրապետութեան
եւ մայրաքաղաքի ազանոժութեան հա-
մար ինձ մեկուսացրին նշանաւոր առեֆէ
մեծ շէնքի ներքնայարկի թիւ 2 խցիկում,
պետական անվտանգութեան համար գե-
շեր-ցերեկ մասնույ սպիտակները: ցու-
ցափեղկում կանգնած փայտէ ձին յա-
ջորդ օրը երեւի երկար սպասեց ինձ եւ
յուսահատութիւնից նրա սեւ բաշը, ա-
մենայն Հաւանականութեամբ, աւելի սե-
ւացաւ կամ, գուցէ, մի գիշերուայ մէջ
սպիտակեց:

Սեւ տնա, արդէն Քանիերորդ ան-
գամ, ես գնում եմ այդ ձին ու թելիս
տակ դրած բարձրանում Արոզեանով
վեր: Բաղում անգամ տեսած այս երազը
տարբեր վերջաւորութիւն է ունեցել:
Կամ՝ մերթապառնել եմ՝ ձին թելիս
տակ, կամ՝ հեծանիւի հետ ընդհարուել
եմ եւ ձին ջարդ ու փշուր է եղել, կամ
վաճառողը հտեւիցս վազել եւ խլել է
ձին, առանց բացատրութիւն տալու...
եւ ոչ մի անգամ ինձ չի յաջողուել այդ
սիրալի խաղալիքը երեխայիս հասցնել:
Այս անգամ էլ, կարծես առաջին ան-
գամ, ձին թելիս տակ գնում եմ ես Ա-
րոզեան փողոցով եւ իմ սիրտը ճշում է
ուրախութիւնից: Թեքուելով մեր փողո-
ցը եւ ծօտենալով մեր տանը, ես քարա-
ցած կանգ եմ աւելում: Ամբողջ տունը
չըջափակուած է սիններով, իսկ սինե-
րը կապուած են իրար խիտ փշալարե-
րով: Փշալարերի երկայնքով ես ու ա-
ռաջ ճայում է բարձրահասակ, սեւ բե-
ղերով մի գինուորական, մերկ ատրճա-
նակը ձեռքին:

- Այս ի՞նչ է, - հարցնում եմ ես:

- Ինչ որ տեսնում ես: Մի՛ մօտե-
նայ, կը կրակեմ:

Բաց պատուհանից նայում է ութ
տարեկան երեխաս եւ դռում է:

- Մի մօտենա՛, հայրիկ՛, ես հիմա
տեսորիտս եմ, լրտես եմ եւ նման լաւ
բաներ:

- Սեւադա՞ր էք, ի՞նչ է, - ասում եմ
եւ գինուորականին, - ախր նա անմեղ
երեխայ է...

- Յետոյ ի՞նչ, - ասում է նա, - բո-
լորն էլ անմեղ են, բայց երբ նրանց փա-
փուկ տեղերը կոշտացնում ենք եւ կոշտ
տեղերը փափկեցնում, յիշում են իրենց
չգործած մեղքերը:

- Դուք խիղճ չունէք, - ասում եմ
ես:

- Մի՛ մօտենաք, - պատասխանում
է նա, - մեր ստացած հրամաններում եւ
հրահանգներում այդ սպարանքի մասին
ոչինչ չկայ տուած:

Ես ձին վար եմ գնում եւ մի ստախ-
նով թաչում եմ այդ թշուառականի վը-
րայ, խլում ատրճանակը եւ նրան դետին
տապալում:

- Բանալիները վերցրու, - զոռում
է տղաս, - ես գտնում եմ եօթ կողպե-
ներից ներս:

Ես կռանում եմ բանալիները վերցը-
նելու, բայց տեսնում եմ, որ դետին վը-
րայ տապալուում է հիւանդանոցային
սպիտակեղէններով... սպասի՛ր, որտե՞ղ
եմ ես տեսել սրան:

- Բանալին ինձ մօտ չէ, - դռում
է նա, բոլոր բանալիները գտնում են
նրա մօտ... Յրկու արիւնտտ ստպողներ,
այո՛, կրկու... Այս ինչ սարսափելի գե-
շեր է, ե՞րբ պիտի լուսանայ... դուք
ժամացոյց չունէ՞ք...

Այս իմ հարեւանն է դռագոռում՝
ցնցելով մահճակալի երկաթէ ճաղերը:
Այս անգամ էլ ես չկարողացայ ձին երե-
խայիս հասցնել: Ի՞նչ անհեթեթ երազ...

- Լուսաբաց... մի՛թէ այս գիշերը
վերջ չի ունենալու: Սոֆիայում հիմա
առաւօտ է: Ամէն տեղ հիմա առաւօտ է:
Եթէ ուշանար առաւօտը, ես Սոֆիայի
քաղաքապետարանից կը հրամայէի, կը

կարգադրէի, որ կրկնապատկեն փողոցներէ լոյսերը: Կամ զուցէ արեւը մոլորե՞լ է իր ճամբան: Գուցէ արեւը ձերբակալուած է: Է՛յ, ձեռք մի բարձրացրէք արեւի վրայ: Վատ կը լինի: Նախազրուցանում եմ ձեզ վերջին անգամ... Լսիր, դու, ինչո՞ւ չես խօսում, Հոմեր ես եւ մեղադրում ես Հակապետական ազիտացիայի մէջ, Հնարուոր է, ես Հանդիպել եմ խուլ լրտեսներին, նապատակի պէս վախկոտ տեղափոխներին, լսարատորիաներ պայթեցնող գիտնականներին, կազ եւ կարծատես սահմանազանցներին... Շատ բան եմ տեսել, բայց այսպիսի երկար դիշեր չեմ տեսել: Այս ի՞նչ դիշեր է, Աստուած իմ... Հիմա ես կ'ուտէի մի ամբողջ ոչխարի չտփ սառ, փորը լցրած բրինձով եւ չամիչով: Մազդան մասնագէտ էր այդ գործում, մե՞ծ մասնագէտ... Իսկ եթէ սեւ Հացի մի աւելորդ բաժին... Լսիր, դու Հաց ունե՞ս: Մի վախճնա՛, չեմ գողանայ: Երեւի բարձիդ տակ ես պահում: Տո՛ւր ինձ մի կտոր, ես առաւօտեան կը վերադարձնեմ: Գու մտածում ես, որ ես կարող եմ մինչեւ առաւօտ մեռնե՛լ... Խոտանում եմ չմեռնել, ազնուօրէն եմ աւում:

Նա չկատարեց իր խոստումը: Երբ ես տանջալից ինքնամոռացումից ազատուեցի եւ բացի աչքս, տեսայ նրա կրծկըւած, կապտած երեսը, դէպի ինձ նայող սառած աչքերը բաց եւ աջ ձեռքի երկու մասները միայն չուած: Երկու՛ւ:

Ես նրան հասկացայ: Պէտք է ենթադրել, որ այդ անգամ իմ «Քունը» երկար էր տեւել, այն էլ պէտք է ենթադրել, որ նրան ամենեւին դուր չի եկել իմ վարձադիժը, բարձիս տակ պահուած իմ չուսնցած Հացից նրան բաժին չեմ Հանել եւ Հանդիստ խղճով զննել, կամ ո՞վ գիտէ, սուտ Քուն եմ ձեւացրել...

Ես ինձ ճնշող ծանրութիւնը մի կերպ յաղթահարում եմ, շուտ եմ դալիս դէպի պատը:

...Հեռուստոյ խորութիւնից, ասես շրճորի խորքից, ինձ Հաննում է զար-

թանքի զանգի հատ-հատ զննոցը: Ուրեմն առաւօտ է: Ուրեմն լուսարաց է: Ուրեմն արեւը ձերբակալուած չէ: Ես չըջում եմ նորից, որ մի անգամ էլ տեսնեմ նըրան, ով չտեսու ալտորոտայ լուսարացը: Մակայն Հարեւան մահճակալը դատարկ է: Ասես անմեղ եւ անտեղեկ՝ կանգնել է Լրկաթէ նեղ մահճակալն իր չորս ոտների վրայ եւ կարծես ոչինչ չի պատահել: Ոչինչ չի պատահել: Այս աշխարհում այնքան խառն են իրականութիւնը, երազն ու երեւակայութիւնը, որ չգիտես՝ ո՞րը որն է: Յամենայն դէպս ես Աշոտ դայուն ոչինչ չեմ պատմի այս դիշերուայ մասին: Իրականութիւնն էր, երա՞զ, թէ՞ երեւակայութիւն, - ես չեմ կարող այս մասին հաստատ մի բան ասել:

Գրսի ստուն օդով եւ Աշոտ դայով լէցուեց խցիկը: Նա ձեռքը զնում է Ծակատիս, յետոյ յիշելով՝

- Բարբ լոյս, - ասում է:
- Լուսարա՞ց է, - Հարցնում եմ ես:
- Առաւօտ է, - ասում է նա, - բայց ինչպէս գիտես, այստեղ ուշ է լուսանում: Ինչպէ՞ս անցաւ դիշերը:
- Ուրախ, - ասում եմ ես, - լսիր:

Էսպէս բաժ շէր պատմեցի ամսառում, ա՛յ, քաւոր, Որ մանուսիսը դամնայ քազաւոր, քազաւոր...

- Այդ ի՞նչ բան է, - մտահոգւում է Աշոտ դային:
- Մանկական բանաստեղծութիւն է, - ասում եմ ես:
- Նա դուրս է դալիս: Ես լսում եմ նրա ձայնը: Նա երեւի խօսում է Մերպերտի Հետ: Յետոյ դուռը բացւում է, եւ նրանք ներս են մտնում:
- Նախ՝ ընդհանուր պալատում տեղ չկայ, - ասում է նա, - բոլոր մահճակալներն զբաղուած են: Թող մնայ մի դիշեր էլ...

Մերպերտը դուրս է դալիս: - Ես քեզ կ'ազատէի այս անիծուած խցից, բայց, տեսնո՞ւմ ես, Հնարաւորութիւն չկայ:

Նա լուում է եւ բարձրաձայն մտա-
ծում .

« Զամանովը ծանր է :

— Նա որտե՞ղ է, — Հարցնում եմ ես,
դիտացաւից տառապելով :

— Ընդհանուր պայտուակ : Նա այլ-
եւս ծխել անշամ չի կարող : Նա իր ծը-
խախտը նուիրեց Սանասարին : Սանա-
սարը մերժեց : Մխախտը դանոււմ է
ինձ մօտ :

— Ես ինձ այստեղ լոււ եմ զգում, —
Հանգստացնում եմ ես Աշոտ դայուն :

— Տայ Աստուած, որ այդպէս լինի,
— ասում է նա :

Աշոտ դային ճարպութեամբ, կոշտ
ձեռնոցի ցուցամտով, արցունքի մի
կաթիլ է թոցնում աջ աչքի եզրից : Յե-
տոյ ասում է .

— Գէ, ես դնացի, Հայր՝ւհ, Հիմա
կը սկսի բրդադնեբի կլբը : Երեկոյան
կը դամ :

Նա դնաց, իսկ ես փակում եմ յոգ-
նած կոպերս : Նորից դանդի Հաստ-Հաստ
գտանակ-տանկը : Բակը լեցում է խուլ
աղմուկով : Լուում է կարգադրիչ Միգո-
րովի կանչը — Տարասով, — ու նորից աղ-
մուկ :

Ինձ տիրում է մեծ մտանդից պաշտ-
պանուած մարդու երջանիկ զգացողու-
թիւնը : Կարծես ամբողջ աշխարհը դա-
հավիժում է մի անել անդունդ, իսկ ես
ապահով եմ, ինձ չի վերաբերում այդ
զարհուրելի փրուզումը : Մերպերտը շա-
փեց իմ տաքութիւնը, — 38,9 : Ոչ ոք, ոչ
ոք չի կարող խլել իմ ջերմութիւնն ինձ-
նից : Քանի կայ այդ՝ ոչ ոք չի համար-
ձակուի ինձ սախպել, որ սեփական ու-
քերով մտնեմ տաշտը եւ Հունձեմ կաւա-
հողը, ոտներս պաղութիւնից անզայա-
նան, իսկ շապիկիցս դուրընի բարձրա-
նայ : Ես վազում եմ բրտառանցի մի
անկիւնում դանդաղ վառուսղ վառարա-
նին, ոտներս ուշքի եմ բերում, չորաց-
նում եմ շապիկս ու նորից բարձրանում
տաշտը եւ ոտներս խրում յամառող կա-
ւահողի ոտան ընդերքը : Ես յիշում եմ
Մամոյին, Սանասարին եւ Կապեային եմ
յիշում, որը Հիմա չկայ : Լինէ՛ր ար-

ցունք եւ արտասուէի Լեւիտայի համար,
սեփականատիրական, Հին Հիւանդու-
թեամբ տառապող դերմանացու եւ խեղճ,
խեղճ լուսանկարչի համար, Սոֆիայի
քաղաքացու համար, որը շտեռաւ այս
խաւար առաւօտը, արտասուէի՝ բոյր
ապրող ու մեռած, նեխուող եւ աննկի,
երկու սեռի փարաւոնների համար ու
դեռ արտասուէի՝ փշալարերի ծաղկած
արդիւնաբերութեան եւ ամենաթանկա-
կապին կապիտալ մարդու համար, որը
ոսկու, ազամանգի նման գրուած է եօթը
կողպէքի տակ : Լինէ՛ր . . .

Ներս է մտնում սանիտարը, մա-
րում է նախի ճրագը եւ դուրս է աս-
նում : Առած ապակիները կապտել են :
Այո՛, լուսաբաց է : Վերջապէս լուսա-
բաց է : Նորից ներս է մտնում սանիտա-
րը՝ այս անգամ ձեռքին մի հողէ աման,
իսկ ամանում մի փայտէ զգալ եւ իմ օ-
րարածին հացը : Ես անդիմադրելի ցան-
կութիւն եմ զգում այդ ամէնը վերջնել
եւ դնել կրծքիս, բայց ինքս վախենում
եմ իմ ցանկութիւնից :

Ես գիտեմ, թէ ինչու եմ վախե-
նում . . .

Բայց վախենալուց աւելի ես գիտեմ,
որ կայ եւ այն, ինչ Աշոտ դային է աս-
ում յամախ, — վեր կաց, Հայրուհի,
փոքր առաւօտը բացուեց, ով քնի փոքր
առաւօտը, մեծ առաւօտը չի տեսնի :

Ես գիտեմ, որ կը բացուի մեծ ա-
ռաւօտը : Մերպերտը շափեց իմ տաքու-
թիւնը՝ 35,5 : Նա շարժեց գլուխը եւ
լինջաց՝ « Զարմանալի է » : Իսկ ես յիշե-
ցի Աշոտ դայու Հինգ դոյլ եռման ջրե-
րը, թշնամի, բաղնիքում :

Մերպերտը բարձրաձայն մտածում
է :

— Հիտլէրը նահանջում է : Վերջին
զերմանացին փախաւ մեր հողից : Զհա-
ուած գերիները, Ձէ՛, կը բացուի մեծ
առաւօտը : Իսկ Հիմա աւելի Հաստատուեմ
քայլերով Արտիկան փողոցով վար կ'իջ-
նեմ . . . Երեխայիս համար կը գնեմ սեւ
բաշով, սիրուն մտութով անուաւոր ձի :
Կը գնեմ :

Պ. Մ.



ԻՎԱԿԱԿԱՆ ՀԱՐՓՈՒՄ

ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ (*)

Արեւմտահայ գրականութիւնը զոյգ գրականութիւն մըն է, կարելի է նոյնիսկ բաւել արուեստական գրականութիւն մըն է այն իմաստով, որ իր դեղադիտական ու բարոյական արժէքները անմիջական անցեալէ մը չեն փոխանցուած, ժողովուրդի զանգուածներու զրտինքէն, սարսափներէն ու հրճուանքներէն շատ քիչ քան կը կտակեն մեզի. այլ՝ սահմանափակ ու լոյծ բնորանիի մը ու անոր քանի մը արտակարգ անհատականութիւններու ապրումներուն մէկ կազապարը՝ որ շորնայու անգամ ժամանակ չունեցաւ: Թրքահայերը իրենք ստեղծեցին իրենց շափանիշերը ու եթէ մենք դեռ զանոնք կը կ'իբարկենք մեր մտաւորական կեանքին մէջ, առկա իրենց պատիւ կը բերէ եւ ոչ թէ մեղի: Արեւմտ. գրականութիւնը Հայոց պատմութեան մէկ շրջանն է ու եթէ պատմութիւն ըստւածը որեւէ իմաստ ունի, ուրեմն այդ գրականութեանն է, որ ան կ'առնէ այդ իմաստը: Նոյնը չենք կրնար ըսել մեր շրջանին Համար: Գրականութիւնը Հասարակ Հարց է, Հասարակ իմացականութեան կամ բարոյականի, ու լուսադոյն պարագային՝ երկուքին ալ: Սփիւռքը օրէ օր կը սպասի իր Հասարակէն ու կ'ա-

պաստանի հոնորութեան, միամիտ լուսատեսութեան ու ամուլ Հայրենասիրութեան մէջ: Այս Հարցին մանրամասն պիտի անդրազառնանք մեր գրութեան վերջին բաժնին մէջ:

Արեւմտահայ գրականութիւնը բարոյական ըմբռնում մըն է ամէն բանէ առաջ ու Հաւանաբար մեր վերջին դարը ոչ քաղաքական իրազարժութիւններու, ոչ սոցիալական դէպքերու եւ ոչ ալ բնկերային երեւոյթներու մէջ կ'արտայայտէ ինքզինքը, այլ ստեղծումի ճիւղին ու մասնաւորաբար գրական դպանութեան մէջ, յանդիւր Համար ներկայի յիւրեղացումին, այսինքն բարոյականի մէկ այլ ձեւին՝ կրօնական դժգոյսանքին: Այսպէս է որ ան որ կը փորձէ պատուակ միամիտ ու յաճախ ոճրային ըլլալու աստիճան վնասակար լուսատեսութիւնը որով բարեմիտներ զմասեր են Հայ միաբը՝ ստիպուած է Հայհոյել ու փախիլ, փախիլ դէպի սանկ 100-էն 125 տարի միտ, անուս ու փարթամ ամիրաներու, գերիմաստուն դպիրներու ու պատուէրիներու եւ դունազեղ առասպելային վար-

*) Սկիզբը տես «Բագին» 2, 1964:

ժապետներու հմայուած աշխարհին մէջ: Պէտք է կայնիլ անոնց քովը, համեստ ու պարկեշտ, ու գիտել 1964-ը:

1840: Կալիաթա անկումի մէջ է բայց արդէն նոր օճախ մը վառած է - Զմիւռնիան: Մէկ միլիոն հաշուող Սփիւռքէն դէպի հին, հպարտ Զմիւռնիան համրան պրեթէ անպտանելի է: Հրդեհներ, երկրաշարժներ, Պոլսեցիներու նախանձը, Արեւելահայերու բնածին անհասկացողութիւնը ու Արտասահմանի անտարբերութիւնը յաջողած են արժեզրկել, ու քանի մը թուանշաններու տակ թաղել այդ պզտիկ, 5000-ը բնաւ չանցած զաղութին հսկայական կարեւորութիւնը (1):

1840-ի Պարզազարեանի «Արշալոյս Արարատեան» պարբերաթերթի նման հրատարակութիւն Պոլիսը միայն 45 տարի վերջ պիտի կրնար երեւան բերել, այսինքն՝ «Արեւելիք» ու իր մտաւորական շքախումբը: Զմիւռնիացիք 1843-ին Արալի թարգմանած են, մինչ թրքական տաղին դասական թարգմանութիւնը, «Թէլէմախ»ը 1860-ին է որ տեղի կ'ունենայ: Պոլիս նոյնքան յետամնաց է - աշխարհաբար առաջին թարգմանութիւնը, Խօժէն Սիւ-ի «Թափառակամ Հրեան» 1854-ին է, որ կը կատարէ Կ. Իւթիւհեան: Իսկ գրական լեզուի հարցին մէջ, Թրքահայերը արդէն 1840-ական թուականներուն զայն կազմաւորած են, Արեւելահայերէն սանկ 20 տարի մը առաջ:

(1) 1846-ի Զմիւռնիան, Պոլսոյ Յոյն ժամանակի յարաբերական ամսուրքեան ժով (միայն Տերայեան պատուի մը կայ) իրապէս նախնական վիճակ կը պարզէ: 2 մեծ նիւթեցիներ. 2 ազարան, 7 վաքտարան, ուր կ'աւանդուէին զքրաքարէ գատ, սնգիլիւն, ֆրանսերէն, սանկերէն, յուճարէն ու իտալերէն (Հայաստան, 1846, քիւ 48):

1840-էն սկսեալ, Տերայեան բազմաթիւ քարգմանութիւններ կատարած էր, Փաստով-է առ այլ հնգիմանկերէ, բայց զրակամ մտածողութիւններէ յալարսովիմ գուրկ էին այդ աշխատմաններէն: Երկուքը մասամբ նոյնն է իւրիմանակի քարգմանութեան պարագայիմ:

Այդ ժամանակուայ միակ գրողներն, Պաշտուր Միսաքեանին լեզուն այսօր իսկ սքանչացում կը պատճառէ: Լեզուն կազմաւորելու, զայն յոտակ ու ճշգրիտ կերպով դործածելու կարողութիւնը իմացական հասունութեան փաստ է դըր-խաւորաբար ու համեստ վկայութիւն մըն է Թրքահայերու մտային որակի մասին: Այդ տեսակէտէն, Միսաքեանի արժէքը անգնահատելի է: Հըր. Ասատուր անկէ կէս դար վերջ կը յայտնէր, թէ աշխարհաբարի կանոնները 1840-ին Միսաքեանի գրչին տակ զաւելի հաստատուն ու գիտուն էին», քան 1888-ին (2):

Բայց աշխարհաբար լեզուին բուն արմատը Զմիւռնիացի հռչակաւոր դաստիարակ-մտաւորական Անդրէաս Փափազեանն է, ըստ Հըր. Ասատուրի (3), ու եթէ բողոքականները այդ աշխարհաբարը դործածած չըլլային Աւետարանի իւրենց թարգմանութիւններուն համար, հաւանաբար դեռ 1840-էն իսկ այդ լեզուն անցնէր Զմիւռնիայէն Պոլիս ու որդեգրուէր որպէս գրական լեզու ամբողջ Արեւմտահայութեան (4), յիտուծ տարիով մը կրճատելով գրարարի հոգեվարքը: Անշուշտ գրական լեզուն մը ո՛ր լեզուաբանները, ո՛ր բանասէրները, ո՛ր ալ ժողովուրդը կրնայ ստեղծել: Գրապէտ պէտք է ատոր համար, Միսաքեան մը՝ որ իր լեզուական կրթանքը Փափազեանէն ստացած է:

Այդ օրերէն մինչեւ ներկան, հարիւրաւոր սրտածնիկ մարդիկ երկու խօսք, երկու քերթուած, երկու դիրք տալով դասակարգ փոխած են (մեր մէջ, 1860-էն սուրին մշակութային խաւերով է որ կը հիմնաւորուին ընկերային դասակարգերը) ու եղած ուղեկից մշակութի մեծերուն: Թերթ մը հանողը, ծածկանուն մը գործածողը, Հայ Հոգիի մասին որեւէ զեղեցիկ յիմարութիւն գրողը ընդուն-

(2) «Յուսարէք» օրաթերթ, 17 մ.-9-1960:
(3) «Ամսօր» 1931, քիւ 6-6, էջ 114:
(4) «Մամուլ»-ի նուշերն. Մ. Նուարեան, Արեւիկան Մամուլ, 1894, էջ 408:

ուած է որպէս մտքի մարդ, առնուազն արժանի հայրենակցական կրակի-գին հրատարակութեան մէջ մտնելու: Ու իջած է մտաւորականութեան միջինը ու իր հետ վար քաշած ընտրանին (5):

Այսպէս է որ, երբ այսօր կը փընտսենք, թէ ո՞ր կրնայ գտնուիլ մեր վերջին 100 տարուայ մտաւորական ճիգին միջինը, քիթ քիթի կու գանք յուսուցիչ ըստելու աստիճան անմահ, ջիգ ու ժամանակ կրծող տիպարի մը հետ - թերուս, շատխօս, ուշացրիւ ու կրքոտ վարժապետը: Գրոց բրոցի տիպարը նոր ու տարբեր բաղադրութիւն է: Ան իր սիղքնական կերպարանքին տակ շատ աւելի կենցաղային յատկանիշ մը ունէր քան մշակութային ու կը թուի թէ այլեւս աւելորդ դարձած՝ ետ կեանքի մէջ հոսած է: Կը գզուչանանք ընդհանրացումէ, բայց մենք Հայերս բարոյախօս, հրեռեռորական, վար ի վերոյ մարդիկ ըլլալու ենք, դիտուած միջնադարին զրական կրկէսէն, ուր իջած ենք մրցումի՝ այդ միջինին կարծի, հինցած մէկ ներկայացուցիչով, Գ. Գեմերճեանի Վարդանանով: Առնուազն մտահոգի է այս կացութիւնը 1964-ին, երբ յստակ է, որ մեր զգացական ու ուսմանից մասնագիտութիւնը այս ժողովուրդի զարգացած լայն խաւերուն զոհացում չի տար այլեւս:

Հայ մտաւորականի այս տիպարը Զմիւռնիայէն ու Պոլսէն ժառանգ ինկած է անկասկած: Ու ժանաւանդ Վենետիկէն, որուն գործած անուղղակի աւերը հաւանաբար այնքան մեծ է, որքան ըրած հսկայ բարիքը: Վենետիկը մեր գլորականութեան վրայ ազդեցութենէ աւելի բան մը եղած է: Հայ մտաւորական ըլլալու եղանակ մը նշանակած է ան, տեսակ մը խառնուածք՝ զոր իւրացու-

ցած չէին ըլլար շատեր, եթէ ան արդէն մեր ազգային նկարագրին մաս կազմած ըլլար: Վենետիկեան խառնուածքը մեր ժողովուրդի մէջ ածէնէն բարդն է, տեղայուն համադրութիւնը կերպական դատականութեան ու վիզապաշտութեան մէկ կողմէն, ու հայկական մոլեռանդութեան միւս կողմէ, ու ամբողջը ծալլուած կրօնական զգեստին տակ: Ներկայ գրութեան համար սակայն Վենետիկի գլխաւոր նշանակութիւնը, 19-րդ դարուն, միակողմանի եղած է - ան կեանքի ու գրականութեան միջեւ ճեղքուածք մը, անջրպետ մը ստեղծած է, որ աղիտարբեր կրնայ ըլլալ տափակ, անտաղանդ մարդոց վրայ (6), բայց եւ որու միջոցաւ կարելի է աւելի լաւ հասկնալ Վարժապետի ու Սիւսանթոյի տարբերութիւնը, Արփարեանի ու Յ. Օտեանի հակադիր խառնուածքները: Հոս Վենետիկի արժէքն ու վաստակը չէ, որ կը քննարկուին: Կ'ուզենք պարզապէս բացատրել թէ ինչո՞ւ կէս դար տեսող քարոզ, բարոյախօսութիւն ու թեւատ երազանք վարակած են մեր միջին մտաւորականութիւնը (Զերազ, Սիպիլ, Անտոնեան, Մալեզիան, Մ. Պէրպէրեան, Խանանեան, Գօլանճեան, Մեր. Պարսամեան, Սիբուսի, Զօպանեան եւ այլն) դայն խրատ են դիւրին յուզականութեան մը ճահիճին մէջ: Այս յուզականութիւնը եղած է մեր մտքի պարբրի-ն, թերթեր ու սրահներ լեցուցած, եղած հսկայ հեղձուցիչ շտեմարանը եղերական խանդերու, ծանծաղ կեդրոնացումներու ու խոր, հեքոտ կիրքերու: Այս խեղդուկ մթնոլորտէն նսեւ

(6) Այս պարագային բոյսը այն կեղծ-քասական տաղաչափ ենդիմակները, Սեքսաններու, չէրիւեաններու անատում շարքը, որով Հայր Մ. Զանաշեանի այսպէս շահեկան Գրականութեան Պատմութեան հատորին առաջին 200 էջերը լեցուած են, ուր այդ մարդիկը իրենց արեւ ու հով յոնսած անբիծ մարմինները կը փոխ գեղեցիկ անակամներու գգուածներն տակ առած, անճանաչիլի դարձած, այլափոխելու առտիմա՞ ճեր ամբաղը վերածնունդի իսկական պատկերը:

(5) Ամերտե՛տ է հոս յիշեցում մը ընել: Ժողովուրդի մը գրեական կարողութեան չափը միջին, էիչ մը տափակ գրադէմ կ'առնուի: Մեծերը ժողովուրդով չեն գեղեմար ու ժողովուրդով չեն սահմանափակուիր:

իրենց իմացական աւելը քաշած են մեր հրապարակագրութիւնը, մեր բանասերութիւնն ու քաղաքական-յեղափոխական մտածողութիւնը, մեր քննադատութիւնը, եւայլն: Ասկայն օտ նոյն սրտառուչ տաղանայանքին ու քիչ մը միամիտ իտէյախոյզին ծոնը այլքն է, որուն գերագոյն թափին ընդմէջէն պոռթկացին մեր մշակոյթի բոցառիկ խառնուածքները ու մեծ յուզումները բիւրեղացնող արտակարգ անհատականութիւնները - Տէրոյննց ու Հայկունի, Դուրեան ու Եղիա, Վարուժան, Արփիարեան ու Օշական: Մինչ անդատութիւնը կը կտակէր հակադիր խեղճութիւններ, լքուած՝ ապրուամբու կենսունակութեան նուազագոյն մակարդակին - Ալփառլան ու Հաճեան, Եփեսեան, Ե. Արմէն, Ալփիար, Քասիմ, եւայլն - մարդեր՝ որոնք հակառակ իրենց սրբութեան, բարիկութեան՝ արժանի են փրկութեան որպէս ազգային արժանիքի իւրապատու անուններ:

Չմիւռիա, Վենետիկ ու Պոլիս: Մեր գրականութեան զարգացման հանգըրուաններ ըլլալէ աւելի, գրական խառնուածքի զանազան երեւներն են: Շատ ընթացիկ անձ մըն ալ չէ այդ բաղադրեալ, միջին մտաւորականը: Հաւանաբար իր մեծագոյն թերութիւնը դոց, առանց քուրան ակը-ի գրական շրջանակի մը մէջ բռնուած ըլլալն է - դասարան, խմբագրատուն ու գինետուն մը: Այնքան կը սիրէ իր Պոլիսը ու իր թաղը որ մտքէն չ'անցընեն ուրիշ երկիր այցելել (բռնապետական վարչակարգին ու ջարդերուն անուղղակի բարիքն ալ այն եղաւ, որ շատ մը մտաւորականներ ըստիպուեցան լքել Թուրքիան ու շփուժ հաստատել այլ երկիրներու մշակոյթներուն հետ, կրել անոնց որոշ ազդեցութիւնները), Պոլսոյ մէջ է, բայց տարորինակ կերպով չ'ապրիր զայն ու յապրելով իր միջավայրն ալ զուրս կը մնայ իր երկէն (7):

(7) Հայկական Պոլիսը գտնուելու համար կոք-

Գրական միջավայրը նոյնքան յատկանշական է: Մանօթ է Պոլսոյ մամուլին ճոխութիւնը, սակայն իրականութեան մէջ, լաւագոյն թերթը 400 օրինակէն աւելի չէր սպառեր (8): Գիւրջ մը, լաւագոյն պարագային (այսինքն Փրանսական արկածախնդրական վէպի մը Չմիւռիական թարգմանութիւնը) 1000 օրինակէն աւելի չէր ծախուեր, այդ ալ բազմաթիւ տարիներու վրայով (9):

Վենետիկէն դատ ո՞ր օտար ազդեցութիւնը կրնար մուտք գործել ու ինքզինքէն փրկել այդ մտաւորականը: Թրքական - 80-ական թուականներու Երեսասարդ Օթոման մշակութային ճոխ շարժումին հետ ո՛չ մէկ բեղուն կապ հաստատուեցաւ, որովհետեւ թուրք զարգացած տարրը (զինուորականութիւն, պետական բարձր պաշտօնէութիւն, դիւանապետական շրջանակներ) բոլորովին տարբեր ծիրի վրայ կը դասուար, քան հայկականը, որ վարժապետ-խմբագիր տարրն էր գլխաւորաբար:

Կալ Փրանսականը: Տէտէեան-Չիլինկիրեան-Եռուարեան խմբակի ու Պոլսոյ ցիր ու ցան թարգմանիչներու վիթխարի ճիգը յաջողած էր, 1853-էն մինչեւ 1884 հրապարակ նետել մօտ 210 հատոր Եւրոպական վէպ, հարիւրին 90-ով Փրան-

սայու է կամ ժողովրդական գրեկի վիպասանները - Հանեան, Փափագեան, Թիւթիւմնեան, Լիոնէէ, Եւայլն - կամ ալ երգիծաբանները - Սվանեան (Մեղու), Գ. Ալվագեան (Մամուլ), Պարոնեան, Պ. Համսմեան (Մագիկ), Վ. Փափագեան (Լոյս), Ալփիար (Ար. Մամուլ), Էւն:

(8) Այս էր ՎՄտիսի տպագրանք 80-ական բուսկաններուն (Բիւզանդիոն, 1896 թիւ 1): Ըստ ուրիշ աղբիւրի մը, այս թիւը 100-ը չէր անցներ... (Մասիս, 1876 թիւ 1882): 70-ական բուսկաններու մասին ուրիշ վկայութիւն մը հետեւեալ թիւերը կու տայ - Մասիս՝ 300 ու Մանգուէէ Էֆէթար՝ 1300 (Արարատ, 1896 թիւ 15): Յարմար դատեցիմք այս բոլոր թիւերուն համար միջին մը ամեն - 600:

(9) Մասիս, 1876, թիւ 1882:

սական: Այս երևույթը շահեկան է շատ մը տեսանկյունների: Մեզ հետաքրքրողը այն է, որ իր այդ ծանր ձեռնարկի յաջողութեան համար, թրջահայ մտաւորականութիւնը կամ դաւաճանեց իր ըսկըրտնէքներուն կամ ալ ցոյց տուաւ որ սկզբունք իսկ չունէր: Այլապէս ինչպէ՞ս բացատրել այն աններելի դիմումը, որ ան ըրաւ երբ իջաւ հասարակ զանդուածի իմացական մակարդակին, նպարտվածառի ու անտեսի ճաշակին ու նոյն կատաղի արտրտակով լսփեց իր հրամացուցած պեւհիկ պրակտիկութիւնը, հատորով, թերթով ու օխայով: Հաւատարման դիմումութիւն մըն էր որ շատ սուղի պիտի նստէր: Եղան անշուշտ բողոքողներ, որոնք սակայն աւելի մտահոգուած էին ընկերային բարոյականի խաթարումով, քան թէ պրակտիկ շփանիւնի սպառնացող վտանգով: Դեռ կան պատճառներ, որոնք մտամբ կ'արդարացնեն, ոչ-դրական նկատումներով՝ այս վայրէջքը: Մեզի համար կարեւորը զրազտանի գրական զգայարանն է, անոր դատումը ու աշխատանքի անկախութիւնը:

Ու բնական օրէնքով մը, պատահեցաւ անխուսափելի - ինկաւ գրական մակարդակը, զոր հաւանաբար 1915-ի սերունդը վերականգնէր, եթէ ազդելու տոթի ունենար: Այս անկումը սակայն անխուսափելի չէր, եթէ ճիշդ մը ըլլար երկու հակազէր շփանիւնը իրարմէ անջատ պահելու, եթէ անարժէք հեղինակներու հատորներու հեղեղին դէմ՝ այդ նոյն մտաւորականները թարգմանած ըլլային բարձրորակ երկերը իրենց շրջանի (10):

Անշուշտ քանի մը արժէքաւոր հեղինակներ թարգմանուեցան, բայց այնքան

(10) Կու տա՛նք անունները ամենէն Պշտուարներուն: - A. Dumas, E. Sue, A. Achard, Paul de Kock, Xavier de Montepin, E. de Mitcourt, Hector Malot, Ponçon de Terraille, Jules Verne
Անտեսանմանում մէջ կ'իյնան հետեւեակները - Թ. Կորիւն, Ֆլորէր, Սթանուայ, Տասթայեւսի, Մատամ աջ Սթայ, Պոլգաֆ:

զիչ ու պատահական էին, որ զո՛հ դացին հոսանքին:

Վարժապետական ու ինքնարաւ, կամ՝ չափազանց վերացական, երազային ու եղբրական կամ ալ ծայր աստիճանն օգտապաշտ՝ Արեւմտահայ միջին մտաւորականութիւնը որեւէ չեղանշը թայի նուաճումին չէ նետուած, այլ զուայցած է օտարներու արուեստին արտաքին ձեւերը կապելով, անձնատուր իր անմիջական յուզումներուն ու զանդուածի ազդումներուն, ու մտքին արկածախրնդրական ձգտումը իր թափը սպառած է տեղական փոշոտ ու գորշ պայքարներու, թաքուն փառամտութիւններու դաւիթին մէջ: Բարի, հաւատաւոր, խանդավառ ու ազդասէր մարդիկ՝ երբեք չեն հասկցած, որ պրակտիկութիւնը իր ժողովուրդին կրնայ ծառայել նաեւ ու մանաւանդ՝ անկէ անկախ մնալով եւ թէ այդ անկախութիւնը անհրաժեշտ պարտան կը դառնայ երբ այլ գրականութեանց հետ կենսատու շփումներու կարելիութիւնը կը ծաղի: Այս իմաստով է որ զոց մնացած է ան: Վասի, տգիտութեան, ինքնախտահութեան պակասի, փախուստի մը արդիւնք է, որ մեր մտաւորականները խուսափած են եւրոպական մեծ գրողներու գործերը հայերէնի թարգմանելէ (11):

(11) Այլապէս, ինչպէ՞ս բացատրել որ եւրոպացի մեծերը այդքան ուշ կը թարգմանուին - Փ. Պարմէ ու Ա. Ֆրանս՝ 1901-ին, Գօլա՝ 1909-ին, Թոլսթոյ՝ 1910-ին, Մոփասոն՝ 1911-ին, Տօլէ՝ 1926-ին, եւ այլն:

Անգլիական գրականութեան փոխադրումներն այն պատկերը կը ներկայացնեն: Միշտ երկրորդականներն են, որ կը թարգմանուին - Ս. շոնտըն՝ 1863-ին, Լ. Սթրբն՝ 1884-ին, Օսլան՝ 1876-ին, եւ այլն: Բուլղարիկ անտեսուած չն 18-րդ դարու հզօր վէպերը ու պէտք է սպասել մինչեւ 1907, որպէսզի նամդիպիմէ առաջին անգամ - Ե. Պրոսթ-ի մէջէն էր: Միայն Օ. Կալուսիթի գործն է, որ կը վայելէ բացառիկ պատիւ, շնորհիւ վեներիկի օրինութեամբ...
Նոյնն է պարագան գերմանական գրականու-

Այս քանի մը մատնանշումները կ'ընենք պարզապէս աւելի ցայտուն գործընելու համար Արեւմտահայ գրականութեան հիմնական արժանիքները: Անդրէաս Փափազեանէն մինչև Գր. Օտեան, Եղիա ու Արփիարեան, այդ գրականութեան նուաճումները կը կազմեն ո՛չ թէ երկերը, այլ մարդիկը, ինչպէս կը յայտնէր Օշական: Ու ասիկա շատ աւելի ճիշդ է միջակ գրողներուն համար, որոնք չեն պայտպանուած իրենց գործերով: Այսինքն ստիպուած ետ կու գանք ժողովուրդին, որմէ արդէն շատ չէինք հեռացած, կու գանք ապրելու արուեստին: Բայց այդ մտկարդակին, այլևս արուեստն ալ շատ արժէք չունի ու կը մը-

նայ ինքը, կրակ ու մերկ ապրումը: Այս իմաստով է, որ Արեւմտահայ գրականութիւնը մարդկային պատմութեան մէջ եզակի փորձառութեան մը վկայութիւնը կը գտնայ, հսկայ ու հոյակապ վաստումի մը հերթաթիւ, անհաւատալի բռնկումներու հրախաղութիւն մը, որ երկվայրկեան մը լուսաւորեց մեր ազգի ամէնէն դեղեցիկ ու եղբրական կիսադէմերը ու անցաւ դնաց:

Այս ամբողջով սակայն, գրականութիւն մը չի փրկուիր, չի վերապրիր իր մարդերէն անդին: Առաջինութիւններով միայն սուրբեր կը փրկուին: Ձմիւռնիս, Գաւառ ու Պոլիս այսօր զոհ կ'երթան իրենց փառքն իսկ հիմնաւորող արժանիքին՝ ապրումի ուժին:

Քեան: Այս առիւ կ'որժ: դիտել տայ, որ Արեւիկայերը շատ աւելի նուրբ թաշակ յայտնորեալ են իրենց քարգմանութեան մէջ քան թըրքախայերը:

(Մար. 2)

Վ. ՕՇԱԿԱՆ

Գրական տեսակցութեան մը ընթացքին, վերջնա, նախկին մրցանակիմ արժանացած ամերիկացի գրագետը՝ ձան Սքէյնպէտ հետեւեալ մտքերը արտայայտած է Կերոքեայ գրագետներու, ու գրականութեան մասին.

...Գրագետի մը համար տեսելու, կամ անմտութեան հարց գոյութիւն չունի, չի կրնար ունենալ: Իր մտեւն հա՛, ի՞նչ նշանակութիւն ունի, իրնն եւամար, անմտութիւնը: Քանի մը տասնեակ տարիներ, քէ քանի մը դար՝ տարբերութիւն չ'ընեն. պիտի անհետան օր մը, ինչպէս պիտի անհետին մեզ շրջապատող առ հսկայ շէնքերը, որոնք այնքան հաստատուն կը թուին, եւ այնքան ամրադատուան: Չեմ գիտեր քէ քանի՞ տարիէն, սակայն որոշ է քէ պիտի անհետին անմտ ալ, անպայման: Ապագան գոյութիւն չունի:

...Գրական մնայուն արժէքներ... կը կարծեն քէ գրականութիւնը նորայի հարց է, ինչպէս կամանք փշերուն երկայնքը:

ԱՐԳԻ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1920-ական թուականներին ասպարէզ մտած գրական սերնդի մնացորդները եւս շարունակում են ստեղծագործել: Նրանք մեծ մասամբ բանաստեղծներ էին, թէև ամէն մէկն էլ աւելի կամ պակաս չափով դիմել է արձակին: Յայտնի է, որ մեծ փորձութիւններ են թարգմտեց այդ սերունդը: Ոմանք զոհուեցին, ոմանք ամուշ տասնամեակներէց յետոյ վերստին կեանքի կոչուեցին, իսկ ոմանց էլ վիճակուեց առանց դադարի մասնակցել գրական կեանքին՝ աւելի կոտ պակաս չափով գոհարբելով իրենց մարդկային ու ստեղծագործական արժանապատուութիւնը:

Ամենուրեք Հերոստրատեան չափանիւրով յայտնի դէմք է ՆԱՅԻՐԻ ԶԱՐԻԱՆԸ (Հայաստան Եղիազարեան, ծնուած 1900 թ. Վասպուրականի Խառակոնիս դիւղում): Նրա մասին շատ է գրուել: Եթէ այդ գրուածի մէկ մասը Հաւանաբար բերնէ-բերան տարածուած լուրերի արձագանգն է, ինչ որ առայժմ դժուար է ստուգել, միւս մասը անպայման հիմնաւոր է նրա Հրապարակային կրթութեան եւ գրական արտադրանքի վրայ: Առհասարակ Զարեանի գրական-հասարակական մեղքերն այնքան բազմաթիւ են, որ ինչքան էլ դրանք ներողամտօրէն դեղչելեն, դարձեալ շատ-շատ են մէկ անձի համար, ուստի ինքնին աւելորդ են դառնում կողմնակի յաւելեալ վերագրումները: Զարեանի ինչ ինչերը իր ժամանակ շատ լաւ գիաց Փարիզի «ՎԷՄ» հանգէսը, երբ 1936 թ. սկզբի համարում կողք-կողքի գետեղեց նրա նորաթուխ «Ստալին» քննադատութիւնը եւ դրանից 16

տարի առաջ գրած «ԳՆԴԱՊԵՏ ՄԱՋՄԱՆԵԱՆԸ» խորագրով բանաստեղծութիւնը՝ «Իբրև մարդկային վաւերացիք», առանց մեկնաբանութեան: Զարեանի ներքին գոյութիւնը վերծանելու բանալին հինց այդ ապշեցուցիչ հակասականութիւնը, անզուտ պատեհապաշտութիւնն է: Կարող է կարծուել, թէ նա իր ամբողջ ուժերը արամաղքել է ստալինեզութեան, բռնակալութիւնը ստորաբարչութեամբ փառաբանելուն, բայց նրան են պատկանում նաև ազգային-հայրենական արժէքների դո՛ւքն անող բազմաթիւ կրակոտ էջեր: Հինց մեծագոյն դժբախտութիւնն էլ դրա մէջ է: Զարեանը ամենայն հեշտութեամբ, առանց խղճի խայթի, լարից լար է թռչում՝ ոտնակոխ անելով հող-բարոյական հանցանանշ սկզբունքները, այդպիսով յիմարի տեղ դնելով բոլորին, բոլորին, բոլորին... Կարող է նաև կարծուել, թէ նա միշտ էլ իշխանաւորների ու պետական մամուլի աչքի լոյս սիրելին է եղել, բայց ոչ ոքի սկանջներէց Հրապարակայնօրէն այնքան չեն քաշել, որքան որ Զարեանի տկաններէց, զանազան առիթներով, երբ նա չափից աւելի է քայտայտել իր եսամոլական հակումները: Ուրեմն, երբ տվորարար միանգամայն իրաւացիօրէն դատապարտում է Զարեանի հասարակական ու գրական դժբունքութիւնը, - դրա համար խսկապէս լուրջ հիմքեր կան: Նրա ստեղծագործութիւնը քննութեան պէտք է ենթարկել ոչ միայն գրականադիտական, այլև ուղղակի ախտաբանական տեսակէտից: Զարեանը իր բացասական արտայայտու-

Թեամբ աննախընթաց երեւոյթ է հայոց դրականութեան պատմութեան մէջ: Բայց, հակառակ դրան, նրա դրական արտադրանքը այնքան բեղուն ու բազմազան է, երբեմն էլ իր որակով միջակից շատ բարձր, որ չի կորելի պարզապէս զուրա նետել մեր դրականութեան մէջից: Չարեանի պարագան իր հերթին ցոյց է տալիս, թէ ընութիւնը երբեմն ի՞նչ ահաւոր սխալներ է դործում, երբ մէկին օժտում է խօսքի ու արուեստի վարձանայի կարողութիւններով, բայց վրանում է մի քիչ տարրական բարեխղճութիւն դնել նրա բնախօսական կառուցի մէջ: Նայիրի Չարեանը դրել է բազմաթիւ բանաստեղծութիւններ, պոէմներ («Ռուշանի ջարսփը», «Ձայն հայրենական» եւ այլն), մի քանի անգամ վերահրատարակուած «Հացաւան» վէպը, չափածոյ եւ արձակ թատերգութիւններ («Արա Գեղեցիկ», «Փորձադաշտ», «Աղբիւրի մօտ» եւ այլն), երգիծական էջեր, ուղեգրութիւններ, հրապարակաօտական յօդուածներ, եթէ չհաշուենք նրա այնքա՞ն նշանաւոր ստալինապաշտական քննադատութիւնները: Նրա ստեղծագործութեան համար ընտրոշ են անգլուսալ եւ փրփրաբաշ կէրքը, խօսքի վերամբարձութիւնը, երեւութական ճաղաքացիական պաթոսը, ինչպէս եւ նիւթերի լայն ընդգրկումները: Լեզուն կանոնաւոր է, հարուստ եւ զրնդուն, երբեմն կախարդի՛ վարգամիտների համար: Չարեանը իր տեղը հանդիստ նստողներից չէ, այսօր էլ շարունակում է գրե՛լ ու գրե՛լ: Երկրից-երկիր է ճամբորդում՝ «Բազադութեան կոմիտէի» միջոցներով, «Բազադութիւն եւ ժողովուրդների բարեկամութիւն» քարոզելու առերեւոյթ նպատակով...

ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆԸ (Բաղդասարեան, ծնուած 1902 թ. Թաւրիզում) սկզբից մինչեւ վերջ սիրուած քնարերգուներից է: Մի ժամանակ նոյնիսկ արձակ էջեր է դրել, իսկ Հետապաշտում նաեւ թատերգութիւններ, բայց նա հիմնականում ծննդաբանութեան է: Առաջին գիրքը

«Շիրակի հարսանիքը» պոէմն է (1925 թ.): Այնուհետեւ յաջորդաբար հրատարակուած գրքերում զետեղուել են տարբեր մեծութեան չափածոյ երկեր: Գրել է, թէեւ ոչ այնքան յաջող, «Հրաշալի սերունդ» չափածոյ վէպը: Սարեանի ուժը քնարական բանաստեղծութիւններ եւ փոքրածուալ պոէմներ գրելու մէջ է. մեծ ընդգրկումները նրա տարբերը չեն: Սարեանի մի ժամանակ լայն հռչակ ըստապաւ իր ինքնատիպ արեւելեան պոէմներով: Նրա «Գիւլնարան» եւ նոյնաբերնոյթ միւս երկերը բեմերի վարդն էին: Սարեանի բաւական թուով բանաստեղծութիւններ կրդի են վերածուել: Նրա երկերում կան եւ անհատական արդումներ, եւ վիլիստոփայական խոհեր, եւ քաղաքացիական թեմաներ: Բայց բոլոր երկերն էլ անձնադրոյմ են. երեւում է, որ միեւնոյն հեղինակի ստեղծագործութիւնն են: Գեղամ Սարեանի ստեղծագործութիւնը դժուար է ընդհանուր բաներով բնորոշել, քանզի նրա արժանիքները մանրամասնութիւնների մէջ են, այլ ոչ թէ արտաքին ցցուն տուեալներ:

Կան բանաստեղծներ, որոնց ստեղծագործութիւնը կարծես թէ ստուպում է մի անհասկանալի ակամայ հակասականութեամբ, ինչ որ բացասաբար է ազդում առաջին հերթին հենց նրանց արուեստի վրայ: Թերեւս դա կարելի է բացատրել այսպէս. այդ գրողները օրգանապէս կապուած են հայրենական թանձրացեալ արժէքներին, առանց պայմանի եւ անվերապահօրէն, բայց առարկայօրէն դրուած են հակահայրենական պարտադրանքների տնօրինութեան տակ: Արդ, նրանք ոչ մտքի ու տաղանդի այնքան բացառիկ ուժ ունեն, որպէսզի կարողանան յաղթահարել պարտադրուած խորթ մտայնութեան դադափարախօսութիւնը, մարտն հակասութիւնները եւ ներկայանան միայն իրենց սեփական դէմքով, ոչ էլ այնքան անաղնիւ ու անբարեխիղճ են, որ ինքնուրաջման ճանապարհով բարոյական «հարա-բիրի» անեն: Նրանք անկեղծօրէն ջանում են ըն-

դուների համարել եւ մէկը եւ միւրը, իւրովի համադրել ու հաշտեցնել դրանք: Արդիւնքը ստացւում է այն, որ նրանց երկերում «հաղադ զոյակցութեամբ» միանաւորից ծաղկում են դադափարական ու ստեղծագործական ակնյայտօրէն անյարբր ծայրայեղութիւններ, արուեստի գնեմութիւնն ու պարզունակութիւնը, հոգու բոլորաութիւնն ու համակերպութիւնը, շնորհքն ու անշնորհքութիւնը: Սա մի այնպիսի ցոյցաբան երեւոյթ է, որ գրականագիտութիւնը վաղ թէ ուշ չի կարող մասնաւոր քննութեան նիւթ չդարձնել: Այս ի միջի այլոց յիշատակման նպատակն է ընդգծել, որ այդ կարգի բանաստեղծներից (Սարմէն, Նորենց, Տարօնցի, Վեսպեր, Խերանեան, մասամբ էլ թերեւ Պրաչի) ամէնից շատ տուժել է Սարմէնը, բաւական բան զոհելով իր գրական ամբողջականութիւնից:

ՍԱՐՄԷՆԻ (Արմենակ Սարգսեան, ծնուած 1901 թ. Ռշտուրի Պախուանց գիւղում) առաջին գիրքն է «Բաշտերը ժպտում են» (1925 թ.): Տասը տարի լեռնութեան յետոյ՝ հրապարակ եկաւ նրա «Թորիչը ժողովածուն»: Այնուհետեւ միմեանց յաջորդեցին բանաստեղծութիւնների բազմաթիւ ժողովածուներ: Սարմէնն ունի նաև ծաւալուն երկեր («Պանդուխտի խոսք», «Քեօտաղի»): Նա այն քերթից է, որոնք «մշակել» են «Լենին հսկայ» անտրոպութիւնը: Վերջին ժամանակներս Սարմէնն իր վրայ շատ խօսել տուեց «Ջողովում» բանաստեղծութեան պատճառով: Այդ «Ջողովումը» հոգեբանօրէն շատ բնորոշ է Սարմէնի համար: Սարմէնը եւս ուրիշների նման գովեր է հեռու սասայիների հասցէին, բայց առաջիններից է, որ հրապարակօրէն հրատարակ է գրանցից, որովհետեւ նրա կենդանի խիղճը ի բնէ չի կարող այդ սեւ քիծը կամովին իւրացնել, վերջնականապէս ինքն իր աչքին ապականուել: Այսպիսի դէպքերում՝ լիովին եւ գիտակցօրէն ապականուածները առ ի զգուշութիւն ձայն չեն հանում: Բայց Սարմէնը,

պարզում է, չէր կարող լուր եւ մինչեւ վերջ կրել այդ հոգեկան նուաժութիւնը: Սարմէնի ստեղծագործութեան առանցքը հայոց հայրենիքն է. գրքերի վերնագրերն իսկ այդ են ցոյց տալիս («Հայրենիք», «Հայրենի տուն», «Կարօտի կրակներ», «Հայոց սիրտ» եւ այլն): Նրա երկերում գերակշռում են քնարերգական կտորները, բայց հաւանաբար շատ անելի յաջող կը լինէին այդ երկերը, եթէ զարգանային գլխաւորապէս դիւցազներգական ուղղութեամբ: Սարմէնը ջանում է նուրբ գրագումներ արժեք արտայայտել, բայց դրանք մի քիչ արհեստական են թւում, քանզի բանաստեղծի ձեռքերը իրականում կոշտ են ու հզօր, ուստի եւ անվարժ՝ ջնարի բարբրի հետ մեղօրէն խաղալու համար: Ով ինչպէս էլ որ գնահատելու լինի Սարմէնի գործը, նա տասնամեակներից ի վեր ամենամանաւորաւ բանաստեղծներից մէկն է:

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՕՆԵՆ (Մովսիսեան, ծնուած 1904 թ. Տարօնի Կոփ գիւղում) եւս շատ ուշագրութիւն է յատկացրել հայրենական նիւթերին, բայց նա բաւարար է նոյնպէս արեւելեակն նիւթերը ընդգրկելու մարմաղով: Տարօնցին սիրում է առհասարակ իր իսկ հաճոյքի համար փրիթոփայական խորհրդածութիւններ անել, փառարանել չուժն ու գեղեցկութիւնը, առատօրէն ձօներ բաշտել մեռած ու ողջ յայտնի անուններին, միամտաբար թէ ինչպէս խորութիւն չգնելով արժանաւորի ու անարժանի միջեւ, Կոմիտաս Վարդապետից սկսած մինչեւ... Լենին եւ այլն: Տարօնցին փորձել է բանաստեղծական զանազան ձևեր, սիրով մշակել է բանահիւսակն կտորներ, բուական թուով թարգմանութիւններ է կատարել օտար գրականութիւններից: Առհասարակ ջերմ սէր եւ մանուսանդ ակնածանք է տածում ցույր ժամանակների ու երկրների հուշակաւոր բանաստեղծների հանդէպ: Ձուր չէ, ուստի, որ երգիծական բնութագրումներից մէկում, Տարօնցին կոշտ է գեր-

զընեալ բանաստեղծ»։ Տարօնցին էր առաջին ժողովածուից («Առաւօտ», 1930 թ.) յետոյ լոյս է ընծայել բազմաթիւ այլ ժողովածուներ եւ իր սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչներէց մէկն է։ Այժմ էլ շատ հետու է պապաւած լինելուց։

ՎԵՍՊԵՐԸ (Մարտիրոս Գարադեան, ծնուած 1893 թ. Վանում) գրել սկսել է դեռեւս երկրի խորհրդայնացումից առաջ, բայց նրա անունը յայտնի դարձաւ մասնաւորապէս 20-ական թուականներին։ Փորձել է նաեւ արձակ, բայց հիմնականում բանաստեղծ է։ Շատ է գրել դարոցական մանուկների համար՝ Նովտեմբեր ու կոմունիզմ երգելով։ Բայց կասկածից վեր է հայրենական լարի առկայութիւնը նրա գրութեան մէջ։ Վեսպերը աւանդական սէր ունի չափածոյի մասամբ հնացած ձևերի հանդէպ (սոնետ, տրիոնետ եւայլն)։ Վեսպերի երկերը աչքի չեն ընկնում հզօրութեամբ, ընթերցողին դրաւելու կախարդական ուժով, այլ փաստօրէն ինքնին երգուող երգեր են, յաճախ կարոտաբազմ ու անհանգիստ, իսկ երբեմն էլ սակաւարին ու վերացական։

20-ական թուականների գրական սերունդից ողջ մնացածների շարքում միայն ՄԻՐԱՄԵՆ է (Հմայեակ Ոսկանեան, ծնուած 1902 թ. Ալաշկերտի Ղարաքիլիսէ աւանում) սկզբից մինչև հիմա բացառապէս արձակ գրում։ Միրասը սիրում է իր երկերը վերստին մշակել եւ նոր անունով հրատարակել («Հարցրէջ նրանց» - «Նախօրեակին», «Զգրուած օրէնք» - «Անահիտ»)։ Կրթութեամբ լրագրող է։ Նրա ստեղծագործութիւններից են. «Մազոյի դղումը», «Կեանքի կարօտ», «Մամէն ու Աշէն», «Լաթիֆէ», «Մասունցի Դաւիթ», «Հայր եւ որդի», «Արարատ» եւայլն։ Միրասը մամուլում քանիցս հարց է բարձրացրել, որ իր սերնդի պարտականութիւնն է տալ 20-րդ դարի ըսկզբի հայոց պատմութեան գեղարուեստական տարեգրութիւնը, որովհետեւ անելի ուշ եկողներէ համար դժուար կը լի-

նի այդ խնդիրը, ու ինքն էլ կարծես թէ այժմ այդ ուղղութեամբ է աշխատում։ Հարցը վերաբերում է առաջին հերթին նդեռնի գէպքերին։ Միրասի երկերը ծաւալուն են, բայց զուրկ հիւթեղ խառթիւնից։ Սովորաբար հասարակական հարցերն ու հերոսների անհատական կեանքի հանգամանքները ներկայացուած են միատամբակ, միահիւսուած ձեւով, բայց պակասում է գրական ներդաշնակութիւնը։ Կան նկարագրութիւններ, հանգոյցներ, բախումներ, այդ ամէնը կարող են հրապուրիչ լինել կեանքին ներքեւից նայող պատանիների համար, բայց շատ բան տեսած մարդիկ հազիւ թէ կարողանան հոգեկան սնունդ կորզել նրա երկերից։

Նշանաւոր Գէորգ Արսլը եւս 20-ական թուականների գրական մտնիկաններից է։ Այժմ նա զբաղւում է միայն դիտա-հետազոտական աշխատանքներով եւ խմբադրում Ակադեմիայի «ՏԵՂԵԿԱՊԻՐ» ամսագիրը։ Ոչ նրա հին գրութեանն են յիշուած, ոչ էլ նորերը կան։

Ե.

Ինչպէս յայտնի է, 20-ական թուականների սերնդից որոշ գրողներ, ստալինեան աքսորավայրերի դառնութիւնը ճաշակելուց յետոյ, վերջին տասնամեակում հնարաւորութիւն ստացան վերջապէս խառնուելու գրական կեանքին։ Ներքինից վաստակը փոքր չէ եւ հարկաւոր է ներկայացնել։

Իր տեսակարար կշռով առաջին տեղն է բռնում ԳՈՒՄԻԷՆ ՄԱՀԱՐԻՆ (ԱՃէմեան, ծնուած 1903 թ. Վանում)։ Մահարու ստեղծագործութիւնը ծիածանի պէս բազմերանգ է։ Բանաստեղծ Մահարին նոյն հմտութեամբ գրում է նաեւ արձակ էջեր, թատերգութիւններ, երգիծական մեղծ ու կծու դիտողութիւններ, գրաքննադատական բաւական ինքնատիպ յօդուածներ, հոգատարութեամբ արձագանգում է գրական նոր ուժերի երեւան զարուն եւայլն։ Յայտնի է իր «Մանկու-

Թիւն եւ պատանեկուցութիւն» ու «Երիտաւարդութեան սեմին» ինքնակենսագրական երկերով: Նրա բանաստեղծական վաստակի հանրագումարը հանդիսացաւ «Մրզական» ժողովածուն (1933 թ.), իսկ վերջին տարիներին լրջա տեսած գրքերից լայն ընդունելութիւն դտաւ «Լուսութեան ձայնը» ժողովածուն (1962 թ.): Մահարին գրել է պատմութիւններ աքսորավայրի կեանքից, «Նախօրեակին» ընդհանուր խորագրով, այդ թւում եւ «Մեւ ժարդը» վիպակը: Յուշեր ունի ժանաւանդ Չարենցի ու Բակունցի մասին: Մահարին թէեւ նրբանկատ, բայց միաժամանակ նաեւ համարձակ յօդուածագիր է, ուստի բարեկամներից բացի, միշտ էլ շահել է նմանապէս՝ հակառակորդների: Մահարու երկերում հեղինակի ենթակայական գործօնը շեշտուած է: Ըստ էութեան, «սիւստային կառուցումները» այնքան էլ չեն հրապուրում նրան: Ամէն ինչ նրա ստեղծագործական հնոցում այսպէս տօած ժահարիադրում է, եւ ապա միայն հրապարակ դալիս՝ գրական յոտակ «ապրանքանիւղով»: Մահարու ոճը թրթռուն է, թեթեւասակ, աշխոյժ, «ճարպակայած ոճի» ճիշդ հակառակը: Թէեւ բնածին քնարերգու է, փիլիսոփայական չափաւոր թերահաստութիւնը նրան ալնում է պարզ աչքերով նայելու իրականութեանը:

Բանաստեղծ է նաեւ Մահարու եղբայր ԽՈՒՆՆ ԲԱՌԻՍՆ (Աճէմեան, ծնւած 1907 թ. Վանում): Իր ժամանակ նրա գրածները բեմերից արտասանելու յարմար տարածուած նիւթերից էին: Գրել է «Ռազմի նուազներ» (1928 թ.), «Համագարկներ» (1931) ժողովածուները: 1959 թուին լրջա տեսաւ նրա «Յորձանքներ» բանաստեղծութիւնների ու պոէմների ժողովածուն: Ներկայումս մի տեսակ թաշուած վիճակում է: Տարիներ առաջ նրա ձայնը լսում էր Մոսկուայից՝ գիտական վիճարանութիւնների առիթով:

ՎԱՀԱՏԱԿ ՆՈՐԵՆՑԸ (Երիցեան, ենթադրաբար ծնուած 1903 թ. Սասունի

Շենիկ դիւղում) Յովհաննէս Թումանեանի օրհնակներից է: Նրա ստեղծագործութեան միջով կարմիր թելի պէս անցնում է քնարերգութիւնը, ինչ որ երևում է թէկուզ գրքերից շատերի վերնագրերից, թէեւ գրել է նաեւ բաւական թուով պոէմներ: Վերջին տարիներս, չգիտեմ ինչու, Նորենցը, իր գրական կեանքի մայրամուտին, սկսել է փոռաբանութիւններ հիւսել Լենինի հասցէին: Թէ այդ ուշացած ու սնանկացած սէրը ում է պէտք՝ միայն Աստուած գիտի: Նորենցին ամէնից առաջ դրողեցնում է հայրենիքի, հայրենի մարդկանց եւ հայրենի արժէքների ճակատագրերը: Նրա ստեղծագործական ելակէտը հասկանալու համար արժէ կարգալ 1955 թուին գրուած այս՝ «Մեր մեծ սարից» խորագրով բանաստեղծութիւնը:

Երբ մայում եմ մեր մեծ սարին,
 Մեր մեծ սարից մեր աշխարհին,
 Միշտ առում եմ ես ինձս ինձ, -
 «Իս ալստեղից, միշտ ալստեղից
 Նայիր ամբողջ երկրագնդին.
 Դու այս երկրի, եղի որդին,
 Թէ աշխարհին ունես ստալիք՝
 Ալստեղից էլ հէնց պիտի տաս,
 Եթէ ունես ստանալիք՝
 Հէնց ալստեղ էլ պիտ ստանաս:
 Աշխարհը մեծ, անմայրածիր,
 Այնքան հեռու եւ անմտօք,
 Թւում է ինձ ապաստից
 Աւելի պարզ, աւելի մտա, -
 Երբ մայում եմ մեր մեծ սարին,
 Մեր մեծ սարից մեր աշխարհին:

Եղևոնի թողած ապաւորութիւնները անընդելի են մնացել Նորենցի հոգում եւ համապատասխան արձագանգներ դառել նրա ստեղծագործութիւններում: Հողն ու հողի մարդը ի պատուի են Նորենցի մտ: Նորենցը մասնաւոր հողածուրթեամբ դրողուել է արեւմտահայ ծանօթ ու անծանօթ գրողների գրական շահերի պաշտպանութեամբ, նրանց երկերի ժողովածուներ կազմելով, խմբագրելով եւ

հրատարակել տալով, ինչպէս եւ ան-
խոնջ եռանդով ժողովրդականացնելով
նրանց վաստակը բանիւ եւ գործով: Նո-
րենցի լեզուն միշտ էլ աչքի է ընկել իր
յատկութեամբ, մարդարտաշար կանո-
նաւորութեամբ, իսկ ոճը զուսպ է, մար-
դու քարեքար դցող կրքի տարրերից հա-
մարեա գտուած, թէեւ երբեմն ասողներ
կան, թէ նրա ստեղծագործութիւնը սո-
զորուած է մարտաշունչ ոգով: Լըջախոհ
Նորենցը երբեմն գրում է նաեւ երգիծա-
կան էջեր:

Ա.Ա.ՉԱՆԸ (Վահրամ Գարուզեան,
ծնուած 1903 թ. Վանում) երբեմնի գը-
րական ակտիւիստներից է: Գրել է ան-
յաջող վէպեր, երգիծական միտումնա-
ւոր պարսաւազեր (մեծ մասամբ «Եռու-
դոյնի» եւ նոյնանոյթ ազգային ու խոր-
հրդանշական արժէքների դէմ), հրա-
պարկախօտական յօդուածներ: Եղել է
խմբագիր եւ գրական կամուկերպու-
թեան ղեկավար: Բայց սովորաբար կոչ-
ւում է բանաստեղծ, թէեւ այդ բնագա-
ւառում եւս փայլուն յաջողութիւններ չի
ունեցել: Պատճառը թերեւս այն է, որ
Ալազանը շատ է ցրել իր ուժերը, ի զուր
վաստել: Գրական ասպարէզ է մտել հա-
մեստ «աշխատանքային երգերով», բայց
գրանցով չդոհանալով՝ ջնանցել է իր
ձայնն էլ անպայման խառնել «համաշ-
հարհային յեղափոխութեան» հետամուտ
աինքերական աղմկարարների ձայնին:
Այնպէս օր այժմ չի երեւում, թէ Ալա-
զանը տաղանդաւոր կամ անտաղանդ է.
չիտենք, որ նրա գրեթէ բոլոր զեղար-
ուեստական երկերը պակասաւոր են,
մակերեսային: Աջորի պատճառած տա-
ռապանքները խախտել են Ալազանի ա-
ռողութիւնը: Բայց նա վերադառնալուց
ի վեր մինչեւ հիմա էլ անընդհատ գրում
է (կամ թելադրում): Ծանօթ է նրա
«Հիւսիսային աստղ» վէպը: Վերջերս
լոյս տեսաւ «Լուսեղէնն ու Կարօտը» հե-
ջեթիւր: Որոշ հետաքրքրութիւն են ներ-
կայացնում նրա Յուշերը: Յուշագրու-
թեան ասպարէզում Ալազանը բոլորից

շատ ասելիք ունի, ինչպէս եւ՝ անյայտ
չնորհք:

Արձակագիր ՄԿՐՏԻՁ ԱՐՄԷՆԸ (Ռա-
բութիւնեան, ծնուած 1906 թ. այժմեան
Լիննականում) եւս չափածոյ գործերով
է հրապարակ մտել («Միջկանաչ», «Կոմ-
սոմոյիս», «Ներկաթաւորուող երկրի եր-
գեր»), բայց որոշ ժամանակից ի վեր
արձակ է ընտրել «մասնագիտութիւն»:
Նրա երկերից են. «Ձուրէյլա», «Քաղա-
քը բլուրի վրայ», «Նրեւան», «Ակաւու
թիւ 98», «Առաջին պատկոմները», «Հեղ-
նար աղբւր» եւ այլն: Աջորից յետոյ
գրել է «Նասուաթ», «Կարմիր եւ կապոյտ
փողկապներ» (հին երկերից մէկի վերա-
մըշակութիւն), «Գոյնզոյն թագաւորու-
թիւնը» վիպակները: Վերջին գրքն է
«Վարդաւան» վիպակների ժողովածու
(1962 թ.): Պատրաստել է բաւական թը-
ւով Լեզեր աջորաւայրի կեանքից
(«Տեղն արեւի տակ» վէպն ու 40 պատմը-
ւածք պարունակող «Պատուիրեցին յանձ-
նել ձեզ» ժողովածուն), բայց առայժմ
միայն առանձին կտորներ են լոյս տեսել:
Արմէնը ունի բանավիճելու եւ հրապա-
րակախօտական ելոյթների կարողու-
թիւններ, որոնցից հազուադէպ է օգտը-
ւում: Արմէնը նաեւ թարգմանիչ է,
թարգմանական արուեստի պիտակ: Ար-
մէնի գրելը ընդհանրապէս շատ քեղուն
է, բայց նրա բոլոր երկերը համարժէք
չեն կարող համարուել: Ինքն էլ կարծես
շատ կարեւորութիւն չի տալիս այդ հան-
վամանքին: Գրող է ծնուել եւ չի կարող
առանց գրելու ապրել, եթէ նոյնիսկ լա-
ւադոյն երկերին յաջորդեն կիսովին ան-
ջիղ ու միապաղաղ շարադրութիւններ:
Այսպէս թէ այնպէս, Արմէնը միշտ էլ
ունեցել է ընթերցողների հաւատարիմ
չըջանակներ:

ՎԱՆՏԵՐ ԱՐԱՄԵՆԸ անծանօթ տ-
նուն էր մինչայժմեան գրական աշխար-
հում: Գրել է. «Պատմութեան» (1956),
«Մարդը» (1959), «Մարդու սէրը»
(1962): Հետաւոր հիւսիսում զայլած
լինելով՝ գրում է այնտեղի կեանքից,

յաճախ պատանիների համար: «Մարդու խնդիրը» ըստ երեւոյթի շատ է պարզեցրնում եւ շարժարում Արամեանին: Երբեմնի հանրոժանօթ լրագրող ՌԱՏԱՅԷԼ ԱԲԱՅԵԱՆԸ գրեց, «Մայա» վէպից յետոյ, «ՉԱՐԹՕՆՔ» եւ «ՄՊԱՐՏԱԿ» այսպէս ասած պատմավէպերը՝ 10-20-ական թուականների հայկական կեանքից, հեղձունիտական երիտասարդական» կազմակերպութիւնների գոյացման կապակէքումը, ջանալով իղէայականացնել մի շարք բուլեւերիներ: Բայց այդ վէպերում կան նաեւ ժամանակի հայկական կեանքը արտացոլող բաւական ուսանելի եւ յաղպ նկարագրութիւններ:

2.

1930-ական թուականներին գրական ասպարէզ ժողով գրողները եւս մեծ մասամբ բանաստեղծներ էին, բայց նրանք ժամանակի ընթացքում, «բնական ընտրութեան» կարգով խիստ մոլորեցին: Ոմանք մի կողմ քաշուեցին, ոմանք «բըշուեցին», ոմանք էլ գուհուեցին պատերազմի դաշտում: Իսկ համեմատաբար զոյնող գրուխ» ունեցողներն էլ կամ տեղ-քայլ արեցին, կամ կողմնակի գրական գրադոմներ մէջ դասն իրենց միմիարութեւք, կամ էլ աստիճանաբար ուղղակի լուեցին: Նրանցից շատերը տարիներ յետոյ հրամարտեցին չափածոյից եւ նրախրուեցին արձակին: Ընդհանրապէս բանաստեղծական այդ սերունդը ամենազբախտն է, որովհետեւ նրա ամժան տարիները գուգաղիպեցին «անհատի պաշտամունքի» ասնձարձակութեան տարիներին: Այդ հարցը, անշուշտ, բաւական բարդ եւ ինքնուրոյն քննութեան արժանի հարց է: Այստեղ յարմար է ասել միայն, որ այն ժամանակուայ բանաստեղծների ստուար ընկատից քիչ թէ շատ աչքի ընկնող ցայտուն բանաստեղծներ գուրս չեկան, իսկ սակաւաթիւ արձակագիրները գունէ կարողացան որոշ ժառանգութիւն թողնել:

Արձակագիրների մէջ ամէնից բախտաւոր եղան ՎԱՅՏԱԳ ԱՆԱՆԵԱՆԸ եւ ՀՐԱԶԵԱՅ ԲՈՉԱՐԸ: ԱՆԱՆԵԱՆԸ (ծնւած 1905 թ. դիլիջանամերձ Պողոսքիլ-սա՝ ոյթմեան Ծամախեան գիւղում) լըրագրութեան ասպարէզում առաջ քաշուեց: Նրա ստաջին խոշոր երկը («Կրակեղեղ օղակի մէջ», 1930 թ.) վերաբերում էր Հայաստանի այսպէս կոչուած քաղաքացիական կռիւներին. այդ գործը երկրորդ անգամ հրատարակուեց 1936 թուին՝ «Քարանձաւի ընակիչները» վերնաշրջով: Բայց դրանից յետոյ Անանեանը փաստօրէն դուա իր իսկական տեղը եւ ընտրեց իր հիմնական նիւթը՝ բնութիւնը, կենդանական աշխարհը եւ բնութոյց մարդիկ: Յայանի են նրա օրսորդական պատմութիւնները, ինքնակենսագրական ընօյթի բնաշխարհիկ պատմըւածքները, «Մեանի ափին» եւ «Յովաղաձորի ղերիները» արկածային վիպակները եւայն: Պատերազմից յետոյ յոյս տեսան նրա պատերազմական ակնարկների ժողովածուները: Գրել է վիպակներ նաեւ ժամանակակից գուղական կեանքից: Անանեանը այն սակաւաթիւներից է, որոնց երկերը թարգմանուել են աշխարհի շատ լեղուներով: Անանեանի ամենուրեք սիրուած եւ ընթերցուող հեղինակներից է: Վերջին տարիներըս լուրջ գործի է անցել՝ գրելու մի քաղմահատոր իւրայատուկ գիտական աշխատութիւն: Այդ առթիւ իր հարցազըրոյցներից մէկում յայտնում է, թէ Փիլիպեան կամուար աշխատանքը «Հանդրատացրել է ուղեղս, եւ ես նորից ձեռնամուխ եմ եղել իմ ամենամեծ նպատակի իրականացմանը՝ վերջացնել «Հայաստանի կենդանական աշխարհը» քառահատոր աշխատութիւն»: Ինչպէս երեւում է, Անանեանը կարող էր գրողի փոխարէն նոյն յաղութեամբ նաեւ գիտնական լինել: Բայց ոչ ինքը, ոչ էլ հայ ժողովուրդը ափսոսալու պատճառ չունեն, որ մեր դրականութիւնը հարստացել է Անանեանի ինքնատիպ երկերով: Անանեանի լեզուն ու ոճն էլ համապատասխանում են նրա երկերի բովանդակութեանը:

նը: Բնաշխարհիկ ժողովրդի մտածելա-
կերպն է այնտեղ իշխում եւ ուղղակի
բացահայտում են վերացական, գեղադի-
տական կամ ինքն իր մէջ ամփոփուած
մասուորականի յատուկ որոնումները:

ՀՐԱՋՅԱՅ ՔՈՉԱՐԸ (Գարրիէլեան,
ծնուած 1910 թ. Ալաշկերտի Թումշի-
Պունաի գիւղում) նախապէս երգիծան-
քի շեշտուած սէր ունէր («Վահան Վարդ-
եան», «Յոզսէն Վասպուրի ճանապարհոր-
դութիւնը»), բայց աստիճանաբար լըր-
ջացաւ, մանաւանդ չորս տարի պատե-
րազմի դաշտում գտնուելուց յետոյ: Նը-
րա ամենածաւալուն երկը «Մեծ տան
դաւակները» վէպն է՝ պատերազմական
առօրեայի վերաբերեալ: Քոչարը լրա-
դրող է եւ Հրապարակախօս: Նրա յոգ-
ուածները միշտ էլ պարունակում են փի-
լիսոփայական խորք եւ ունեն ինքնու-
րոյն մտածողութեան շեշտ: Այլ պայ-
մաններում նա թերեւս միայն փիլիսոփա
լինէր, բայց դրող դառնալն էլ զուր չի
անցել: Այնուամենայնիւ, զբաղումների
բազմազանութիւնը կարծես թէ խանգա-
րում է, որպէս Քոչարը երեւան գալ ըս-
տեղծագործական կուռ դիմագծով: Պա-
կասում է զբաղան կենտրոնացումը եւ
մասնագիտական նպատակայայտութի-
ւնը:

Միւս արձակագիրներից է ԳԱՐԵԳԻՆ
ՍԵՆՈՒՆՅԸ (Գրիգորեան, ծնուած 1911
թ. Զանգեզուրի Խնձորեակ գիւղում), ո-
րը պատերազմից յետոյ է Բաքուից փո-
խադրուել Երեւան: Սեւունցի գործը բնո-
րաչում է Հետեւեալով:— Նա փոքրածա-
ւալ երկերի սէր չունի, Հակոբում է
անպայման Հաստափոր գրքեր գրե-
լու. բացի այդ, նախասիրութիւն ու-
նի անպայման «կոյս թեմաներ», «խո-
պան ընտելաւաններ» ընտրելու, ուրիշ-
ների շօշափած նիւթերին սովորաբար
ձեռք չի տալիս: Գրել է «Իէպի երկինք»,
«Մովսիսորչում», «Կեանքը թեւերի վը-
րայ» (անուարտ), «Թեհրան», «Գերի-
ներ» երկերը: Զանազան պատուիրակու-
թիւնների շարքում պարբերաբար շըր-
լում է աշխարհի տարբեր երկրները: Սե-

ւունցի երկերում գերակշռում են մակե-
րեսային նկարագրութիւնները, կեանքի
խլրտուն խորքը փաստօրէն խուսափում
է նրա տեսողութիւնից: Թերեւս էլ Հէնց
այդ մակերեսայնութեան հետեւանքով է,
որ երբ Մոսկուայում մի որեւէ յետադի-
մական միջոցառում է լինում, Սեւունցը
անմիջապէս բեմ է բարձրանում՝ Ծափա-
Հարելու համար: Բայց բաւական զուսպ
և ծանրախոհ բնաւորութիւն ունենալով՝
միշտ կարողանում է պահել Հաւատարա-
կըշտութիւնը, առանց ամբոխավարական
ժխոր ստեղծելու:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԹՎՓԱՆՅԵԱՆԸ (ծըն-
ուած 1911 թ. Տարօնի Կոփ գիւղում) եւս
նախասիրութիւն ունի ծաւալուն երկեր
գրելու: Եթէ չհաշուենք «Պատերազմ»
վէպը, նրա բոլոր վէպերն էլ («Վիկտոր-
րիա» - 1937, «Կեանքի արշալույսը - 1939,
«Ոսկէ հովիտ» - 1955, «Հայրենայէն-
ներ») շօշափում են ժամանակակից Հայ-
կական գիւղաշխարհի կեանքը, գերա-
զանցապէս ծանրանալով տեղական ջո-
ղերի բարձրի եւ գիւղական մասուորա-
կանութեան առօրեայի վրայ: Թափալ-
ցեանը անպայման ունի որոշակի եւ կա-
յուն, կարելի է նոյնիսկ ասել ասողը ըմ-
բռնումներ, բայց երբ փորձում է գե-
ղարուեստօրէն մարմնաւորել դրանք ամ-
բողջ տարողութեամբ՝ երբեմն վրիպում
է: Նա աւելի շատ պատմում է, քան թէ
գեղարուեստօրէն կենսական դրուագներ
հիւսում, վէպերում ներկայացուող Հե-
րոսները ոչ թէ իրենց շարժումներով ու
զործերով, ընտրոշ արտայայտութեամբ
են ուզում ճանաչուել, այլ հեղինակի ըը-
նութադրումներով: Գրական մամուլում
մի ժամանակ բաւական երկար բանավէճ
տեղի ունեցաւ այդ առթիւ, Թափալցեա-
նին բարկութիւն պատճառելով: Բայց
առայտ մանկերքի իրողութիւն է, որ
Թափալցեանի գրական փորձն ու բարձ-
րանկութիւնները բաւական չեն արդէ ի-
մասսով գեղարուեստական կուռ երկեր
յօրինելու համար:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

(Շար. 2)

ԱՐՈՒ ԴԱԼԱ ԱԼ-ՄԱ՛ԱՐՐԻ

ԱՐԱԲ ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԸ

Մահարի ըմբոստութեան է հրաւիրում մարդուն ճակատադրի դէմ, բայց եւ միաժամանակ յորդորում է առկալ տառապանքներին, որոնք անխուսափելի են կեանքում.

Ըմբոստացիր ցաւերիդ դէմ, դէմ շարտիր Այն՝ ինչ տանել անկարող է մահկանացուն. Բայց մի մերժիր այն բաժինը մուսապազուն Որ Արաբիչն է շնորհիլ խղճուկ մարդուն:

Արուլ Ալան տառապանքի մէջ տեսնութեան եւ սիրոյ հիմքը, առանց որի նուս է մարդկային քաջութեան, առկալ մարդկային հոգին կը կորցնի իր արժէքը.

Մենք տառապում ենք: Միակ բանն է դա որ գիտենք վստահ: Անկիւնաբարն է դա մեր էութեան: Եւ եթէ մի օր իննթութեամբ աննոգ շարտենք մի կողմ ժայռը մեր ցաւի՝ Յայնժամ քաջութեան եւ սիրոյ գործքն կը փլի անգոր:

Միաժամանակ իր հեզանքով եւ թիւնը գտնում է իրականութեան ըմբոստանը նա ցանկանում է արթնանալ թշուառութեան, տգիտութեան անողոք ճշմարտութեան մէջ: Այդ մտեցմամբ է որ նա գրում է. Եւ նախապաշարումների մէջ միտնուած մարդկութեան: Նա մարդկային փրկու-

Թէ առաջնորդը դառնայի մի օր այս քարաւանի եւ չէի խարի տնասուններին այս երկոտանի: Եւ կը գոչէի՝ - Ահա՛ մի աշխարհ, բոյսերը որի մաւ են, ու ջուրը բայն է անբարի: Կեանքը տանգան է, աշխատենք գաղթել մի ուրիշ աշխարհ, Փախչենք այստեղից եւ կեանքը այս անց մտնանք ի սպառ: Ոչ մի օր - ոչ մի մասնիկ օրուայ - գերծ չէ այս կեղտից, Քայնեցէ՛ք արագ դէպի այլ մի վայր, հեռու այստեղից: Ձեզ ճշմարտօրէն բզգռւշացնում եմ, փախէ՛ք անվարան, Ձեզ չեմ ցանկանում բակարդել սուտի ցանցում դիւքակամ:

ԿԱՍԿԱԾ ԵՒ ԵՐԿԵԱՅՈՒԹԻՒՆ -- (ՍԿԵՊՏԻՑԻԶՄ)

Արուլ Ալան, հակառակ Արեւելքի որեւէ աղանդի, հաւատալիքի, խորհրդերթողների ճնշիչ մեծամասնութեան, դապաշտութեան կամ յոյնիսկ պանթէիզմի մէջ: Այդ տեսակէտից էլ նրա միակ զուգահեռը Արեւելքում Օմար Խայեանն

է, որը նոյնպէս չի խոնարհուում ասա-
ուածային բռնութեան առաջ, այլ աշխա-
տում է պարտադրել Նրան իր անթերի
տրամաբանութիւնը: Ինչպէս ճայեամք,
Աբուլ Ալան եւս կրօնական բոլոր վար-
դապետութիւնների հանդէպ արհամար-
հական դիրք է բռնում եւ իր արտայայ-
տութիւնների մէջ չափազանց անաջող եւ

յաճախ հայհոյական է: Նրա որոշ ար-
տայայտութիւններից կարելի է եզրակա-
ցրել, որ նա կրօնը համարում է առաս-
պելների եւ հեքիաթների արտասոց մի
հաւաքածոյ, ՋԱՆԳՈՒԱԾՆԵՐԻ ԱՃԻՈՆԸ
- ինչպէս կ'ստէինք այսօր - իրականու-
թիւնից փախչելու մարդկային քնազա-
կան մի պահանջ:

Այսօր ընդունուած մի սպանդ է սա,
Մինչեւ այլ ազանդ այս մէկն տապալի.
Մարդիկ չեն կարող մարդկանց հետ ապրել,
Առանց հեքիաթի, սին ու տաղակալի:

Նրա մտքի թռիչքներում հանդի-
պում ենք երբեմն այն հազուագիւտ յան-
դիպութեան, որը նկատուած է միմիայն
պարսիկ մեծ իմաստասէր Ջաֆարիա Ռա-
զիի գրուածքներում եւ Պայեամի քառ-

եակներում, որոնք մտրակում են օր-
ուայ նախապաշարումները, դաւանանք-
ները եւ դրանցից ծնունդ առնող մարդ-
կային յիմարութիւնը: Պայեամը գրում
է.

Մէկ եզ կայ վերում կոշուած բազմատեսզ
Եւ մէկ եզ էլ կայ թափում գետնի տակ.
Խելիք այլը բաց, եզների մէջտեղ
Տես իրար ընկած մի բուն աւանակ:
(Թրգմ. Յովսէփ Միրզայեանի)

կամ՝

Տօնն եկաւ եւ այժմ մեր բանը լաւ է,
Սաղին հին գինով կուժը կը լեցնի,
Մումը ցոլակապ եւ նամազը - օտնձ՝
Տօնն այս էշերի գլխից կը հանի:
(Թրգմ. Յ. Մ.-ի)

Նոյն բանը, բայց դառնօրէն, առանց տութեան գտնում ենք Աբուլ Ալայի
Պայեամին յատուկ դազտնի գուարճամը- քերթուածների մէջ.

Արքնացէ՛ք, մարդիկ, ով մուսուլմանք, արքնացէ՛ք հիմա,
Սրբազար կարծուած կրօնները այս յերիւրանք են լոկ:
Շէշիտն ուզեցին սիրամալ սսկու, դիրքի եւ ամուսն,
Բայց չըկան հիմա. իրենց հետ մեռաւ օրէնքն ամուսն:

կամ մի այլ հատուածում՝

Հեքամուսուքիւն, կրօն եւ աւանդ, Սուրք Գիրք եւ Թօուրաք,
Կամ Կտակարան, որի վրայ յենուում, սնուում ենք քրով,
Տարբեր ազգերի առասպելներն են հին ու օրնամիտ:
Ո՞ր է այն սերունդն որը կը քայլի նշմարիտ նամրով:

Մասսիսիոնը, վերլուծելով Աբուլ Ա-
լայի անաստուածութիւնը, զա բնական
մի արդիւնքն է գտնում այդ ժամանա-
կաշրջանի ԲԱՆԱԿԱՆ ԱԶԱՏԱՄՏՈՒ-

ԹԵԱՆ: Աբուլ Ալան արժեքաւ չէր այժ-
մէական հասկացողութեամբ, քանի որ
ներկայ չափանիւշերով մենք չենք կարող
կշռել 11-րդ դարու պարկեշտ, անկա-

չառ, ճշմարիտաց եւ ԲԱՐՈՅՈՒՄ բարեպաշտ մի իմաստասէրի, ինչպիսին էր Արուլ Ալան: Նա աւելի շուտ պայքարում էր օրուայ կրօնական նեղմտութեան, կուրուքեան, անհանդուրժողութեան դէմ, աշխատում էր փշրել ազանդային հասկացողութիւնները, վերացնել անտիպազաւտութիւնը եւ այդ բոլորը փոխարինել ԱԶԱՏ ՀԱՒԱՏՔՈՎ, ուրոյն միաստուածութեամբ, որը ծնունդ էր ա-

ռել Իրանում եւ իր բանական լուծումն էր գտել Կարմատեանների եւ Էսմաիլիներե ազատամիտ վարդապետութեան մէջ: Արուլ Ալայի համար բոլոր կրօնների արժէքը համեմատական է, բայց նրանցից եւ ոչ մէկը մարդկութեան ցոյց չէ տալիս ճշմարիտ ուղին, որը պիտի հիմնըւած լինի բանականութեան, մտքի եւ զատողութեան վրայ:

Սխալում են մարդիկ. հրեայ, քրիստոնեայ թէ մահմեդական, Աշխարհում այս լայն՝ երկու խմբակի մարդիկ կան միայն. Բանական մարդիկ, ոգատ, անկաշկանդ եւ հաւատագուրկ, եւ մի խումբ մարդիկ, խեղճ ու մոլեռանդ՝ գրաստներ անբան:

Սակայն, Միակ Արարչի Հանդէպ աարբեր է Արուլ Ալայի դիրքը եւ Համապատասխանում է օրուայ ընդունուած Միապաշտութեան: Այդ բանը ցայտուն ձեւով չի արտայայտուած որեւէ տեղ, բայց կան բազմաթիւ հատուածներ, ո-

րոնց մէջ զգացում է ակնածանքը, կամ աւելի շուտ՝ ԱՆՅՈՒՍԱՓԵՆԼԻ ԳՈՅՈՒՔՈՒՄ Հասկացողութիւնը, առանց որի նոյնիսկ բանականութիւնը բացատրել չէր կարելի:

Վեր է շատ Աստուած: Նա մեզ չի կարող Ազատութիւնը ճախրել վերից: Մինչ մենք կտաչել ենք նրա Գրութեան ինչպէս մի բտարուկ՝ իւ շղթաներից:

կամ՝

Ձրկայ Աստուած թէ ոչ Աստուած: Ճիշդ խօսք է ցա: Իսկ Մարգարէն նրա՝ միտքն է այն խելառի Որ խաւարում լոյս է փնտռում ու մի դրախտ, Որն հագումն է ինձ եւ քա պէս մի թշուառի:

Աստուածային գոյութեան գաղափարը շատ քրքրալի Միաստուածութիւնը ամփոփում է հետեւեալ քառեակում.

Եթէ չեմ յղկել հնազանդութեանդ գոհարը երբեք, Եթէ չեմ մաքրել փաշին մեղքերի երեսից իմ հեզ, Բոլորից յետոյ, գիտեմ կը գթառ ու ինձ կը ներես, Քանզի ես երբեք ԵՐԿՈՒՄ չեմ կաշել Էութիւնդ ՄԷԿ:

ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Բացիմալիզմ) .-

Արուլ Ալայի համար բանականութիւնը հիմքն է համայնական արդարութեան, ուղղմտութեան եւ ճշմարտակեցութեան: Նա յորդորում է մարդկանց Հետեւել միայն բանականութեան թելադրանքներին եւ պահպանել «ԱՆՀԱՏԻ ԲԱՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ» ու գրանտվ

պայքարել բոլոր խաւարամիտ աւանդութիւնների, սովորութիւնների, նախապաշարումների եւ ազանդների դէմ: Բանականութիւնը նրա համար հաւատար է «ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ» երբ նա ասում է.

Մի հանցրու լոյսը, որ տուել է ինձ ինչպէս Գերագոյն,
Դա բոց է անշէջ եւ աստուածային,
Դու խորհրդակցիր մտքիդ հետ միայն եւ եզիր ներհուն,
Ապաւենջ է դա, հանգրուանդ վերջին:

Բայց բանականութիւնը դրաւականը չի հանելուկն է, որ ուսցի՞նալիցմի մե-
ջէ անասման եւ կատարել իմաստու- ծազոյն ներկայացուցիչը, Արեւելքի Փի-
թեան. կան բազում հարցեր, որոնց ըմ- լիստփայութեան վարպետ՝ Արու Ալի
բընեւի կամ բացատրել բանականու- Սինան հետեւեալ բառերով է նկարա-
թեամբ անհնարին է: Այդ այն անուծե- նդրում:

Անցայ եւ երկրից մինչ եօթ երկինք
Հասայ Սատուրնի գահին երկնագամ,
Համբիմ լուծեցի ամէն համելուկ,
Բացի համելուկն կեանքի եւ մահուան:

Նոյն ժղձաւանջային միտքը գե- 'Ալան բազմաթիւ քերթուածներէ մէջ.
գեցկութեամբ արտայայտում է Արու ինչպէս, օրինակ՝

Եթէ ամէն ինչ պիտի լուս մեռնի իր միջօրէին
Որպէս մտածին ու սիմ մի պատրանք ճակատագրական՝
Ապա ինչո՞ւ է սոխակն երազում մի վարդի մասին,
Ապա ինչո՞ւ է աղօթում լուսինն մի ջրաշուշան:

Բանականութիւնը, որը քարոզում է Արու Ալան, նախ եւ առաջ քննադատու-
կան, վերլուծական բնոյթ ունի. դրա- նով է նա ուղղում ժողովուրդը մտոր վար-
դապետութիւններին, լինեն դրանք հո- ղեւոր թէ փրիստփայական: Բայց ինչ-
պէս ասացինք, բանականութեամբ նա ամէն ինչ բացատրել չի կարողանում եւ
կանգ է առնում այնտեղ՝ ուր կանգ ա-
ռան պարսիկ միտախնդրեր: Բոլոր կրօն-
ներէից բարձր, մերկացուած որեւէ ձե-
ւական կառուցուածքից, նա որդեգրում է
Վերսիլիքայաւաշտ մի ուսցի՞նալիցմի ո-
րի հիմքերի վրայ կառուցում է իր աշ-
խարհաւայեացքը համամարդկային եւ
սեփեզրական ինդիւիւիդի շուրջ: Դրա
ուղղակի արդիւնքը անաշտ մի հումա-
նիզմ է, մարդասիրութիւն՝ ուր բացա-
կայում է քնքրութիւնը, գգուանքը եւ

որը արդարացնում է նրա անողորդ դիր-
քը ղէպի այդ մարդկութիւնը ստորացը- նող, նրա հոգեկան մեծութիւնը ապա-
կանող երեւոյթները:

Արու Ալան հաւատում է Ստեղծա- գործ մի Արարչի գոյութեան, բայց պա-
հանջում է ԻՄԱՅԱԿԱՆ, ԳԻՏԱԿԻՑ ՀԱ- ԻՄՏԻՔ ղէպի այդ Գերագոյն իսկը, դրա-
նելով որ բանականօրէն նրան ճանաչել, հասկանալ կամ վերլուծել չի կարելի:
Ստեղծագործութիւնը եւ սեփեզրական ներդաշնակութիւնը՝ ապացոյց են այդ-
պիսի Արարչի գոյութեան, չնայած այդ ստեղծագործութեան նպատակը անյայտ է
մարդուն եւ անճանաչելի եւ Զարիքի գոյութիւնը այդ ընդհանուր ներդաշնա-
կութեան մէջ ստիպում է մարդուն կաս- կածել նրա Գերագոյն Իմաստութեան վրայ:

Աստուած ինձ ստեղծեց: Չըզիտեմ ինչո՞ւ:
Բայց փառք Արարչին:
Այս սիկեպի հրաշալիքները թէ չըլինէին
(Որ ապացոյց են նրա գիտութեան ամենապարփակ)
Աշխարհն այս համակ խեղճանոց էր սոսկ,
Դատարկ, անմեկին:

Բանական էակը չի կարողանում Արարչին պատկերացնել ժամանակից եւ տարածութիւնից դուրս: Տարածութիւնը եւ ժամանակը միակ շրջանակն է, որի սահմաններում մարդ աշխատում է կազմարել տիեզերական իրադարձութիւնները, իր գոյութեան իմաստը եւ տարաչութեան գաղտնիքը: Այդ սահմաններից դուրս՝ ամէն ինչ անհասկանալի է նրա համար:

Գու՛ք ասում է՛ք ինձ, ամենագէտ է Արարիչը մեր: Դա ճշմարիտ է: Նայ՛նք եւ՛ ես պնդում միշտ եւ անդադրում: Եւ դու՛ք ասում է՛ք. Նա չի պարփակում տարածութեամ մէջ Եւ ժամանակի: Ես անա ա՛յդ է, որ չեմ հասկանում:

Այլ խօսքով՝ 11-րդ դարու այս մըտածողը, Իրանի զխորհրդապաշտ ուսցիտնալիստներին՝ հետքերի վրայ, հասել էր մի անգ, ուր սրանից հազիւ 150 տարի առաջ հասաւ Կանտը, որը աշխատում էր ապացուցել, որ բանականութիւնը ունի իր անանցանելի սահմանները: Եւ մեթոդիկ գիտութիւնը, յանձինս տիեզերագէտ-Փիզիկոս Հայզլերերգի եւ թըւարանագէտ Գոդէլի, ցոյց են տալիս

մարդուն նրա բանականութեան սահմանները, առաջինը մեզ ներկայացնելով տիեզերքի քառասյին եւ հակա-բանական կառուցուածքը եւ երկրորդը խորտակելով թուարանագիտութեան ուսցիտնալիստ հիմքերը, որոնց վրայ, Պիթագորասի օրերից ի վեր, հիմնուած են եղել այդ գիտութեան բացարձակօրէն ճշմարիտ հաւաստիացումները:

ՀԱՎԱՏԱԳԻՐԸ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՀԱՆՆՆՈՒԿԸ

Ահա այս կենսական խնդրի լուծման տարրերն ջնջելով մէջ է, որ Արար մեծ սկեպտիկ-յոռետեսը եւ նիշարուրի փիլիսոփայ-քառեակազիբը այնքան են մտանում իրար, որ յանախ կըրկնում են միմիանց մտքերը, համարեա միօրինակ մտիւններով: Արու՛ Ալլայի համար ճակատագիրը անողոք եւ անբացատրելի մի ու՛՛ է, որի ստրուկներն ենք մենք բոլորս անխորթն, չհասկացող,

անօգնական եւ հլու: Աստծոյ ցանկութեամբ եւ ճակատագրի տնօրինութեամբ է (քանզի Աստծուն է պատկանում ճակատագիրը), որ մարդիկ ծնւում են անկախ իրենց կեանքից եւ մեռնում են՝ հակառակ իրենց կամքի: Եւ չընայած այն կարելի կասկածել Արդարութեան վրայ այն էակի, որը ստեղծել է անարդարութիւնը, այնուհանդերձ այդ էակն է պատասխանատու մարդկային բոլոր մեղքերի համար:

Աստուծոյ գիշերուայ փնտումն են լուծումն այս մեծ գագտնիքի եւ մեմէ սինսպիշ յարկի հնիք Յրանց մեր այ՛դ անա: Ես այս աշխարհը եկայ հակառակ իմ ազատ կամքի, Եւ, Աստուած գիտէ, հակառակ կամքիս՝ գնում եմ հիմա:

Եւ կամ՝

Ես չընտրեցի ծնունդը իմ, ոչ կեանք, ոչ մահ, Ի՞նչ բնորութիւն տրուեց արդեօք ինձ այս կեանքում: Ես եկել եմ կանխորոշմամբ աստուածային Եւ կամեովն եմ նախատագրի վերագառում:

Կամ՝

Այս անջրպետում, որ տարածում է ծնունդից մինչ մահ՝ չե՛ք ան մեմէ արդեօք կայր նախատագրի, թէ մարդ հնիք ազատ: Երանի ջնջի մագալան մի ձեռք կասկածները այս, Փրկուենք յուարից եւ ապրենք արպէս գիտակից մի մարդ:

Նոյն այս միտքը, որը արտայայտել է Մարուշ Ալյան արարական կարուկը և վճռական որով, շատ ասելի մեղմորէն, բայց նոյնքան կուտ արամարանութեամբ

առաջադրել է Քայնամը առանձնակ ճառ-
եակներէ մէջ, որոնցից, պատահական
ընտրութեամբ, տալիս ենք երկուսը.

Դադողալով ըսկզում հրաւիրուեցայ ես ի կեանք,
Զանլցաւ այս կեանքից թէ՛ ոչ միայն իմ գարմամբ:
Գնում եմ այժմ ակամայ, եւ չիմացայ ես բնաւ,
Ինչ այս գալուց, մնալուց եւ գնալուց դուրս եկաւ:
(Թրգմ. Յ. Մ.)



Ձրնայած որ պննուած ենք գոյն ու բոյրով հրաշակիրտ,
Մեր հասակը մոռնեման ու մեր դէմքը ծաղկաւետ,
Զընակացանք, գիւնմանի գիւնով բրձուած այս հողից
Ինչո՞ւ կերտեց պատկերը մեր նակատագիրն անհեթեթ:

ՀԱՆԻԲԵՐՁԵԱԼ ԿԵԱՆԻՔ. — Հանդերձ-
եալ կեանքի վերաբերմամբ Արուշ Ալյան
առանձնակ մի դիրք է բռնում: Որպէս
բանական մի էակ, նա չի կարողանում
հաւատայ Հանդերձեալ կեանքին կամ
Յարութեան: Բայց որպէս փոստատէր
և խորհրդապաշտ՝ նա նոյնպէս չի կա-
րողանում Հաշտուել իր վերջնական ա-
նէպցման, ոչնչացման հետ: Այդ տոտա-
նումը, որը արամարանական Հակամա-

րութեան մեւ է ստանում նրա դրչի տակ,
բնորոշ կերպով արտայայտուած է նրա
քերթուածներում: Հետեւեալ բանաս-
տեղծութեան մէջ, որինակ, իւրաքան-
չիւր տող կարծես Հակատում է նախոր-
դող տողին եւ ցոյցուն կերպով ցուցա-
դրում է բռնական Հակի տագնապալից
մղձաւանջը եւ անօգնական պայքարը
վերջնական ոչնչացման եւ անէպցման
դէմ:

Մեր հագիները մեզ հետ են: Մինչ մենք մըրամց՝ չենք նամաչում:
Ապա ինչպէ՞ս այդ նամաչինք, երբ մեզ քաղնն գերեզմանում:
Հագին գիտէ գոյութիւնը մի այլ կեանքի, մինչ կեանքն մերկայ
Կամուրջ է լակ դէպի մի լոյս, կամուրջ վշտի, ցաւի անհուն:
Ո՞վ կարող է վստահեցնել շփոթ, շուար այս էակին
Որ կը բացուի գերեզմանը եւ փոշեպատ՝ նա դուրս կը գայ.
Փամանակը սահում է մեզմ, սերունդները միտնում են լուս,
Մինչ յուսահատ մենք փարուել ենք մի տեսիլքի՝ որը չըկայ:

Աւելի խորանալով Արուշ Ալյանի կողմէ պարսիկ խորհրդապաշտութեան
փիլիսոփայութեան մէջ, մենք աստիճա-
նարար պտնում ենք միտքից մի եւ յատ-

եւ պանթէիզմի գաղափարներ:

Սթէ քեզ ասեմ, որ ժամանակը ոչնչացնում է, բնջում ամէն ինչ,
Գու մի հաւատա՛, ժամանակն չէ այդ, այլ ժամանակի անգուք Արարիչն:
Փամերն անցնում են, չեն վերադառնում
Եւ յարգուում են իրար անդադար,
Անցեալ կայ միայն եւ մի ապագայ
Ներկան չի եղել եւ չըկայ ի սոյառ:
Այն՝ ինչ եղել է, չի լինի մտից
Եւ ժամանակից դուրս ոչինչ չըկայ-
Մինչ ժամանակը կրկնում է միշտ,
Յաւերժական է ընթացքը մըրա:

Նոյն փիլիսոփայութիւնը, իր ան- կրկնում է իր կեանքը քանիցս անգամներ
 նրման անհունութեամբ, որի տակ թագ- իր քառակնների մէջ:
 նրեած է դառը մի յոսետեսութիւն,

Ինչո՞ւ վախճալ եկող կեանքից, լինել մտայլ ու մտախոհ,
 Յաւերժական ու մշտական ոչինչ չըկայ երկնի ներքոյ:
 Կարն մի շունչ է կեանքը ունայն, քեզ այդ շունչն են տուել միայն,
 Մի վախենայ ապագայից ու մի ողբայ անցեալը քո:

Պայեամի նմանօրինակ մտքերը Կանդիդայի այս երկու մեծ բանաստեղծ-
 այնքան շատ են, որ նրանցից մէջըն- ների զերթուածների մէջ: Այսպիսի մի
 բուժման աննիշ միայն կը ծանրաբեռնի օրինակ է հետեւեալ հատուածը, որը իր
 այս աշխատանքը: Այդուհանդերձ կ'ու- համարեա նման մտքով եւ բառերով
 զէինք նշել զոնք մի օրինակ այն Միկ- Կեոս է դուրսդիպութիւն լինելուց: Ա-
 նՇՄԱՆ տողերից, որ յաճախ կարելի է բուլ Այան գրել է.

Մեր հոգիները մեզ հետ են: Մինչ մեզ հըրանց չենք անաչում:
 Ապա ինչպէ՞ս այդ անաչենք, երբ մեզ քաղիմ գերեզմանում:
 Այսօր քանի դեռ ինքրդ քեզ հետ ես՝ ոչինչ չիմացար,
 Ի՞նչ կը հասկանաս վաղը, որ քեզից զնացիր ի սպաս:
 (Թրգմ. Յ. Մ.)

Միտքը եւ այն արտայայտելու ձե- նկատուի՝ անպայման արդիւնքն է տար-
 ւը, բառերը, պատկերը - բոլորը նոյնն բեր թարգմանութիւնների...
 են: Այն փոքրիկ տարբերութիւնը որ կը

2. ՄԻՐՉԱՅԵԱՆ

(Շար. 2 եւ վերջը յարորդով)



ԲԱՑ ՆԱՄԱԿ՝

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻՆ

(Պ. ՄՆԱՊԵԱՆԻ «ԱՒԱԶԱԻՐԱԾ ՆԱԻՇ» ԳՐԲԷՆ ԵՏՔԻ)

Կը Հրատարակենք Սը. Պոյանեանին բաց համակ ժը. զըրուած՝ Պ. Մնապեանի նոր լոյս ընծայած «Անապիրած Յարց զըրքոյին առիթով եւ սւղղութեամբ՝ աւագործութիւն զտ՛ Կ. Զարեանին:

Թէ՛ Պոյանեանի եւ Թէ՛ Մնապեանի գրութիւններուն առեւ սուր ուղի մտաւորականի այն արդար ընդգլուծն է, որ ծընունդ կ'անէ զնաւը լիքան զբայն զէպին Հայաստանեան ապագրութեան մէջ կատարուած ընդարձակ շարափոխութիւնն:

Մնապեանի գրքը կարգադրելըը զիտնն եւ Հետաքրքրւողները նոյն զաննութեամբ պիտի Հաստատեն, Թէ Կ. Զարեան տեղական պայմաններուն շարժարկու Համար աներեւակոյնի Համեմատութեամբ ժը փոփոխութեան ենթարկած է իր հաւանով զէպը, գիտիվայը շրջան է սնոր զուղակարական բաժանագրութիւնը, մարդկային եւ գրական արժանապատուութիւնը իշեցընելով նուստագոյն առտիւնակի ժը:

Մեր խմբագրիները, երկուքն ալ, ինչպէս պիտի Հընեն ընթերցողները տեսնց գրութիւններէն, զրոյի անսահման ցաւով ժըն է, որ շարժան են իրենց գրիները: Պէ՛լ ժը վարը պիտի տեսնէք Պոյանեանի վրդովումը, իսկ Մնապեան իր գիրքին առաջին էջերուն մէջ վերահարուած նոյն Հագիով կը գրէր:

«Ասկէ առաջ ուղիբայտ պարտականութիւններ կատարելու տալիվան տակ գտնուած ենք բազմաթիւ անգամներ, բայց անանցմէ ալ մէկը այնքան գտնութիւն պատճառան է մեզի, որքան պատճառեց լեաներէն վար իրան եւ Պանիներու մէջ նրեբացող այս դժբայտ մաւը:

«Եւ որդարեւ, գրագէտ Զարեանին գրականութիւնը այգրական գիրքերէ հարուածելու էլան գրիներուն դէմ երեւէ շոքս անգամ մայն բարձրացուցած մարդուն համար, որ մենք եզան ենք, բիբելս յկայ աւելի դժուար պարագայ մը, քան մայն գրագէտին տեղեկագրութեան վատանքունը մտանալելու աւ հարկադրանքը:

Մտքաղութեամբ իբրացնելէ հոց երկու գրագէտներուն զատապարտութեան ցաւագին խօսքը Կ. Զարեանի գրական անպարկեշտ վարժունքին դէմ, խմբագրութիւնս կը զատապարտէ նոյն ասան Հայաստանի պատկան սնմերն ու մարմինները, որոնք ճրագըրուած կերպով եւ սկիզբէն իսկ, արհուլիան բարքեր ասեղծելով, կը վտանգեն Հայ տեղեկագրութեան մաւրն ապառ ճառագարութեամբ Հայրենի երկրին մէջ:

ՊԱՐՈՆ ԶԱՐԵԱՆ

Կարգացի Պ. Սնապեանի «Աւագախորած Եւալը», էւս հուռւղ առաջին եւ երկրորդ հրատարակութիւններուն ամանցանելի անգրքայետը չափող եւ այդ անգրքայետը երիտասարդակամ ամուր խտեղով ու խորհրդածութիւններով լեցնող, այլ մամուլանող գրողի խոր վրդաւումով մը գայն իր տակ պահող: Մտքի կուտ ուժով մը երկրորդ տղագրութեան ապօրինութիւնը բացայայտ ու հանրայայտ դարձնող գրչոյկ մըն է սն:

Կարգացի: Զկարգայի՛ր երամի:

Եւ հիմա՛

Այսպեանի՛ր գրագէտ, ու նաեւ ողբայի՛ր:

Որքան խեղճ՝ է ու իսկ հաւանութեամբ հրոյ հարակ եղած գազափարձներու մոխրակոյտին տաջի: Եւ հիմա, Արարտի սպիտակ տեսիլքին դիմաց՝ խիղճ ո՛չ մաքուր, հոգի ո՛չ հզարտ, սիրտ ամա՛ղ: Եւրուկ անտառէնի: Զանգուի լուսակարկալ ափերուն, ա՛նձ անկեալ՝ մայրամտեալ մտօք: Լուսարշի շնորհատարածք ինքեղին տակ, հաւատակորոյս տժգօ՛յն արարած՝ բարոյական հանգուցեալ հասկացողութեամբ: Գետի՛ն ինկած ոճ, գետի՛ն ինկած թախի՛ք: Գրական ընթացքի դէպի վա՛ր ուղղութիւն: Եւ Հայաստանի սրտին մէջ ու Արուսեանի արձանին առջեւ իսկ՝ կարծես վերակարսուած հայ: Մեանչի մատենագրարանի մը ծո՛ւլ գրեթէ ընդհանրութեան ու Մետրապոլիտանական դամբարանին ծով իսկ՝ դուն կարծես վերակարսուած, ամենազաւրթ հայերէն. վերակարսուած, անհամանչ ոգի եւ այլասերման վերաբացուած կարմիր վերք: Նարեկը կարծես բնա՛ւ չկարդացած, Զուարթնացը երբե՛ք չտեսած, Բաքմիին ու Նալպանտեանին, Միսմանթոյին ու Վարուժանին ամուսնեքը ամենիւր շլտած, Զարեհին տողերէն բոլորովին անտեղեակ ու փետայիններուն դիւցազնատիպ մտապատկերները չես գիտեր ո՛ւր կարճացած, կարծես կո՛յր յիշողութիւն:

Եւ այս բոլոր ամիս՛ն տրամութիւններէն հտէ, դուն այսօր օտար վարդապետութեան մը արեւին տակ մերկութիւն շերտացնող՝ ստրկութեան նորանդամ ու նորեա՛նդ մուրացիկ: Դուն այլեւ, - աւա՛ղ -, էամակ խոնարհուվարժ եւ նակատ բոլորովին անապատամբ: Դուն այլեւ լալէն փոխտակա՛ն գրիչ եւ բանութեան կարմիր կտառններու առջեւ մտածումներդ մէկիկ մէկիկ ապանձող անկարելի՛ մարդ:

Յա՛ն է որ կը խօսի այս տաղերուն մէջ, ու ցաւին բառերը դժուար կը կշռուին, դժուար կը հայտնակին մեզի, կը ներե՛ս: Խորունկ ցաւ մըն է դարձեալ ըսողը--

Ո՛րք հասանք...

Ո՛րք հասաւ, փոքր ու մեծափայլ ստրուկներու երեսէն, Հայ ժողովուրդը, երէկ եւ այսօր, Հայ գրականութիւնը՝ երէկ եւ այսօր: Հոգին եւ գիրին անուանով՝ հոգին եւ գիրին կեանքը վտանգեցիք դուք, մանրակարգ ու բարձրաշնորհ ստրուկներ, երէկուայ եւ այսօրուայ: Տէ՛ր փնտռեցիք, տիրակա՛լ փնտռեցիք ուրիշ. ատրուշան, մտրակ, հաքազան ներածեցիք: Օտարի սուի՛ն: Ուրաջող բաւը սին բառ մը չէ, նայնիսկ իր կէտով: Զայն տեւեմ եմքակայի համդէպ հին սէր մը եւ հետագայ մեծ ցաւ մը արուստանած են անսցիմ անգամ եւ ամուսանալ տրամագրած մեր պատմութեան էջերուն:

Ու քանի որ այդպէս՝ ինչպէ՛ս շակեմ, Հայ ժողովուրդ եւ Հայ գրականութիւն, այդ քառին դժոխքի կրակ յիշողութեան հետ, ստրուկի ձեր հոգեբանութիւնը այս օրերու, ուրացական արարքը ներկայի:

Մտածես գուցէ.

- Գո՛րծ տեսայ նաեւ սխանչելի՛... .

Մի՛ շարունակեր. մեր պատմութիւնը տգէտ չէ՛ այդքան: Հին մեծավայելուչներուն հետագայ անվայելութիւնը ոչինչով կը մեղմէ բարբառական արեւէ անկումի վնաս: Բնդհանգառակն՝ կը սաստկացնէ վնասը:

Սովորական մարդիկ, տարօրինակ չէ՛ քերեւս որ հայեռանք մինչեւ իրիկուն. վա՛յ սակայն հզմաւորին մէկ բա՛ռ իսկ հայեռանքին:

Մի՛ շարունակեր. մեր ժողովուրդին տանջալից պատմութիւնը կրնայ անհուն տխրութեամբ ըսել այս առթիւ, եթէ չէ ըսած արդէն, իր էջերէն մէկուն մէջ.

- Էի՛նչ օգուտ, եթէ երբեմն հարուստ եղաք, հարուստ քըւեցաք, ի՛նչ օգուտ: Մնաւ օր մըն ալ յանկարծ ձեր մէջէն վտանգաւոր ազգաւոր, ծնու արժանապատուութեան ու ոգիի սարսափելի յունեւոր: Կուր եղաւ հարուստի ու ազգասի ձեր ներսի երկու անձերուն միջեւ, ու ազգա՛տը յազթեց: Զունեւորը: Վերջին խօսքը տարիք ձեր մէջէն ծնած մուրացիկին, ի՛նչ օգուտ:

- Ե՛ւ արդ դուն, հին, հարուստ որդի, ի՛նչ շնորութիւններ մտնեցիր, Պետերաստի մը կարմիր ոսպապարին արժանանալու համար. սրբազնագոյն հին գիրք մը, աստուածութիւն շնչող գիրք մը, չփսփոսա՛ց ականջիդ, անդամակութեան հրաժարողներուն տխրագոյնութեան տառը, ժամանակին հետ յարացող եւ անպատմելի՛ք:

Խեղճ Զարեան,

Որչա՛փ պէտք է խղճալ քեզի: Ու պէտք է քերեւս անասելի տառապանքի մը, մարդկային խորունկ ողբերգութեան մը մէջ տեսնել քեզ այսօր եւ սիրել, ինչպէս բոլոր հովիւներուն մեծագոյնը ուզեց որ սիրուի՛ կորսուած ոչխարը: Պէտք է սիրել քեզ ու քերեւս միայն յա՛լ վրադ:

Այլ մայն ատեն, ինչպէ՛ս չընդվզի մտաւարակամ այսքան անկու՛մբ դիմաց, անչարգալից եւ դատմն ըլլալու գնով ծակ, երբ զու՛ն եւ քու տեսլիներդ, օր մըն ալ ու՛նու հռչակեցի՛ք ձեր բոլոր աստուածներն ու մտաուցած բոլոր պատարագները: Սո՛ւտ՝ մինչ այդ ունեցած ձեր հոգեկան ու գաղափարական ամբողջ տեսիլքը: Սո՛ւտ՝ մեծագո՛յն երազի մը համար տասնամեակներով տրո՛ւնի առ տրո՛ւնի մամբայ կտրած ձեր սրտին բոլոր նամապահները:

Դու՛ն կրակի պէս այրուող աշխարհ մտիք էիր ու մտքերէդ ամբարձոն՝ նառագայթազ տեսիլներու պատմաբան, գրականաւթեան մեր վերջին մեծ դեպքաններէն: Այդպէ՛ս կը թուէիր, թուեցար. դու՛ն հասարակ եւ ի գործ անցորդ մը չէիր, ու անցած ճամբաներուդ բացառիկ փայլ, բացառիկ իմաստութիւն եւ կեանք կու տայիր: Քու խոհերուդ մերմակեղէնները մասնաւոր փայլ մը ունէին: Այդպէս կը կարդայինք Քեզ, կարդացինք երկար ատեն:

Օր մըն ալ, սակայն, տեսլիօրէն չեացար մտիք կրակնորէն, տեսլիքիդ բոլոր նամանկներէն, արուեստիդ ուխտատեղին տանող բոլոր նամբաներէն: Գեղեցիկ աստուծներու, իմացական շուտաշուտ լեզուներու սիրահար մարդն էիր դու՛ն, եւ քու Հայաստան երթալուդ մէջ հայկական աստուածներուն դեռ չպատմբուած դիւցազներգութիւնը երկնայ մը ուզեցինք տեսնել. շքեղ ակունկալուքիներ կայեցինք պահ մը քու երթիդ եւ աստեցինք Հայրենի հողէն եկող քու խորագոյն եւ բարձրագոյն լեզուներու մայրնին: Ի գուր: Գացիր Հայաստան, - մե՛ղք -, *Մուհամմադ* մը չափ խեղճ եւ անօր հանդէպ եղած վերաբերումէն ո՛չ տարբեր վերաբերումի մը արժանանալով: Հանդիպած վերաբերումը չէր ինձի եւ ինձի պէսներուն համար տարօրինակ, խռովիչը, ցուալին ու անբացատրելին, այլ քու շուտաշուտ հպատակութիւնդ, ամբողջական հնազանդութիւնդ, գերութիւն բուրոզ ու կենսահայեցողներուդ հետ իմնովին անհաշտ կեցուածքն էր, գուր արդեգրեցիր իսկայն:

Շատ կարճ շրջանէ մը ետք, քու մէկ գլուխ գործոցդ եղող «Նաւը լեքան վրայ» վէպիդ գաղափարական նախնիրի ենթարկուած Բ. հրատարակութիւնը Պետերատի կողմէ, եկաւ լիովին փաստելու գաղթականի հոգեբանութեամբ ու խեղճ ներաշխարհով քու վերադարձ դէպի երկիր:

Քու վէպիդ երկրորդ հրատարակութեան մէջ չենք տեսնիր ուրիշ բան, եթէ ոչ իր իմացական բարձունքներէն տեղանան եղած, վար, ցո՛ւրտ տափարակութիւններու մէջ իջած, հոգեկան ու գաղափարական բանագողթի ենթարկուած *Մուհամմադ* մը, զգացումներու կտրուտայ քայտար մը: Կը տեսնեմք՝ իր գրածին հանդէպ բացարձակ կոյրը, իր տեսարար ազգայնական անջնի՛ բացարձակ խո՛ւրը: Ու դեռ կը տեսնեմք, - ասիա՛ս -, անհայտպատկան ու հակա-ձարեանական բաներու ամուսնի մէկ շատախօսը:

Կարդացի՛ր, «Ասպարիբած Նաւը»: Չկարդայի՛ր երանի...

Նայն ամուսնին ներքեւ պատկազ միեւնոյն վէպի երկու հրատարակութիւններու ի՛նչ եղբրակեան, ինչ ցո՛ւրտ կենսակցութիւն: Չեղքել, պատկանել վէպ մը ինքնիր մէջ, ինքնիր ամբողջ ոգիին

ու էութեանը մէջ: Նոյն վէպին երկրորդ հրատարակութիւնը թըշնամին դարձնել առաջինին, դուրսէն եկած ջարդարար սասիի՝ մը պէս: Ոչ միայն անձեր ու հաւաքականութիւններ կը պառակտելին խորհրդային աշխարհի բոլոր երկնակամարներու տակ ապրող իշխանաւորները, վասն համաշխարհային գծուութեամ՝ այլ նաեւ կը պառակտելին ռեւէ հեղինակ՝ ինքնիր մէջ, որեւէ գիրք՝ ինքնիր մէջ, որեւէ սրբութիւն՝ ինքնիր մէջ: Ինքզինքէն հակառակորդ մը կ'անցնէին ինքզինքէն դէմ, ու դուն չէի՞ր գիտեր ատիկա, պարտ՞ն Ջարեան:

— Ո՛րք ես իջած, ո՛րք են իջեցուցած ինք... —

Ջարեանը եւ իրենց ներդաւմի՞տ ժպիտին ու ինքի համար նիւթական փոքրիկ ապահովութեան մը միշտ մէջտեղ: Դուն այլեւս այդ փոքրիկ ժպիտին ու նիւթական փոքրիկ ապահովութեան միջեւ պիտի անցընես կեանքդ: Այլ մեծ ու ազատ բաներու ի՞նչ լիզեցնո՞ւ, ինչո՞ւ Ջարեան:

Կը հաւատա՞ս որ թշնամիի մը շահախնդիր ժպիտն ու միւս կողմէ՛ ստրկութիւնը՝ կը լուծեն Հայ ժողովուրդին եւ իր գրականութեան հարցերը: Ու քան «Մշակութային Աթէնք» կուսակցական հրահանգներու արդիւնք Աթէնք մըն էր, թէ ազատութեան անկաշկանդ մզումներու, բանականութեան ու ոգիի անվերջ սլացքի:

Ըսէ՛,

Դուն Պրատոն ու Պարմենի՞տ, Կեօթէ ու Նիցչէ՞ ուսումնասիրեցիք, Փիթակոր ու Այնշթա՞յն ճննարկեցիք, Պերկսոն ու Ռոնտմունո՞ սերտեցիք, թէ Պետերստի հրատարակչական կանոնագիրքը, շրջաբերական հրահանգներ, լաւ մաթեմատիկոս դառնալու դասագրքեր, ու ի՞նչ գիտնամ որչափ առտնին, որչափ մա՛նր բան:

Մածկորէն կը սիրէի՞ր արդէն, թէ ետ, անմիջապէս սիրցուցին ինքի նոր օրերու մտքի ճննարկ-խանութուն արշաւանքը՝ դէպի ամէն իմացականութիւն, սգու լեռն-ֆիւմարներուն ոնիրը՝ ոգեկան ամէն շարժումի վրայ:

Թուրքի՞ն իսկ ինայեցիք, Կոստան՞ Ջարեան...

Ինչո՞ւ մտնեցիք վարկդ, որ պզտիկ չէր, որ միջակ վարկերէն չէր: Ինչո՞ւ ձգեցիք որ լախն՞ց գայն:

Եւ ինչո՞ւ քան առիթով, քան եղբրական ճախարակութիւնը փաթեթած, հայ գրականութեան մէկ ցաւը փաթեթած ըլլաւ հիմա ուրիշներուն վրայ, գիրք ու թուղթ գրելու այսպէս: Հաճո՞յք է միթէ: Խնայէի՞ր հայ գրականութեան, ինքի՞ ու մեզի, այսքան սրտմութիւն:

Ինչո՞ւ վէպի մը փատակներուն հաշուապահը ընէիք «Աւագայրած նաւը» գրքին հեղինակը, եւ ան մանրամասն մէկ հաշիւը ներկայացնէր մեզի, անաղմ յստակութեամբ մը, հան եղող բոլոր կէտն ու փլած բաներուն: Կէտն լեզուին ու փլած ոնին: Կէտն կառայցին ու փլած ոգիին: Քարուքանդ եղած բարոյականին, ու անբարոյութեան մատնուած գաղափարական կեցումէին:

Աւագայրած նաւը...

Գիրք մը, պարոն Զարեան, ուր հագնեմն աներակներուդ առջեւ կայ վրդովում, դառն հեզմանք, սեւ սրամտութիւն եւ այս բռնաբարձ մայր եզոզ տխրութիւն մը՝ էտ, հայ գրականութեան եւ մըտաւորական անկեայ բարձրութիւն հաշուոյն: Ուրի՞շ է մայրը ճեղք ուղղուած սա հրապարակային թուղթիւն, երբ ան կը գրուի Պօղոսին գրքին ընթերցումէն ետք, հարցնելու համար.

- Ա՞յս ես դում...

Կը փայտի շիտակ, ուղիղ: Ամուր մէջքով ու բարձրաճակատ: Ողնայտ'ը չեմ ձգած ճեղքի... ա՞յս ես դում: Վէպիդ երկրորդ հրատարակութեան մէջ, խորտակած են բարոյական կամ'խէզ իսկ: Ուրեքն են (եւ դում ընդունած են) որ դում եւ էտ վէպի փայտք բնականին միշտ հակառակ դիրքով մը... գլխու վրայ: Այդպէս՝ - գըլուխը հողի'ն: Այդտեղ այլեւս դադրած են, ժամհարացած են մարդ սպաննելէ, գրազած են մարդոց մէջ առողջութիւնը սպաննելով, իբրեւ անելի՛ թանկագին բան եւ ռեփրի իբրեւ անելի ներկայանալի ռե:

Եւ դում ուզեցի'ր երեւի արժանապատուութեան այս մտեղ, ներքին առողջութեան դէմ գործուած այս ռեփրը: Ինչո՞ւ: Ինչպէ՞ս շիշեցի'ր՝ որ մեծ էր եւ ըմբոստ: Ընդունակ՝ հակայական աւ հըպարտ «չ»երու, առողջ ու խոր կենսահայեցեցեցութիւն: Ինչպէ՞ս չգիտցար որ պատուութեան այդ «չ»երդ հասնութեան ու յօժարութեան պատու ասումներու վերածելէ ետք, դում նախկին Զարեանին հետ բազդատուած՝ թգուկ մը պիտի թուիս այլեւս, անոր դէմ թշնամի, անոր դէմ դաւադրած ու դաւադրող թգուկ մը, անոր փառքէն միշտ օգտուելու պատրաստ՝ գողի պէս թգուկ մը: Դիւրի'ն է հիմա ճեղքի, բսէ՛, կարմիր պատարագիչներու առջեւ մտք բռնել, մտք շարել անոնց խորանին եւ դառնալ ապա, ուղիղ նայելու համար առաջին ու իրա՛ւ Զարեանի աշխարհ: Հացը չի՞ գայ առաջին Զարեանին, երբ իմ, ինձի պէտքերու'նը կու գայ այստեղ, ի տես վիճակին որում մտածուած են: Ու պէտք չէ՞ ասչնան երկիրորդ Զարեանն ու գայն դէպի բարոյական անկում մղած պատկամ անձերն ու հաստատութիւնները այսօրուան Սովետական Հայաստանին, երբ, որեւէ պատասխանատուութեանէ այդքան հեռու եւ նըման որեւէ արարքի այսքան թշնամի ըլլալով հանգրձո՞ւ ինձի պէտքերը կ'ամչնան հիմա յանցաւորներու'ն իսկ հաշուոյն, առաջին Զարեանին առջեւ կենալու:

Զ'ըս'եր ճեղքի, երկրորդ Զարեան, տարիքով քիչ մը փոքր, բայց իմաստութեամբ շատ անելի մեծ առաջին Զարեանը, չէ՞ ըսած արդէն:

- «Ա՞յս ես դում...

- «Այս կուշտ եւ... Թշուա՞ք: Ֆեզմէ՛ այնքան անգամ ու այնքան ծա՛նրօրէն արեամբհուած մարդուկներուն պէս՝ բարեկեցութեան հասցէ եւ հորիզոն փնտռող պետերատեսն հայրենաւէ՞ր մը: Հայաստանը, բարկացած պատուածներու՛ հող իմ Հայաստանը, դում ինչի՞ հետ շիտեցի'ր, ա՛վ իմ երկրորդ «ես»ս, ուրիշն-

բուն ինձի պարտադրած «ես»ս, ինձի քշմամի եւ զիս փոքրացնել ուզող պատիկ «ես»ս :

— «Մեր երկրին վրայ չոքած բռնութիւնը իմ վերքս չէ՞ր միքէ : Հա՞րկ էր հետեւիլ քեզի, իմ մինչեւ վերջ խաբանած մտայնութեան եւ այդ մտայնութեան ներկայացուցիչներուն, եւ անոնց սէս վարդե՞ր նետել հիմա բռնակալներու ստփին առջեւ :

Կասկած մի՛ ունենար, քու հին շուրջ պիտի ամբաստանէ քեզ : Ու քեզի ուզուած անոր թուղթերը այսպէս կարն պիտի չըլլան այլեւս : Պիտի ըլլան աւելի երկար, աւելի ծանր, աւելի իմաստուն եւ աւելի կիզիչ :

Կասկած մի՛ ունենար...

Ինչո՞ւ ըրիր, ինչո՞ւ ըրիր բռնութեան հետ այդ ձայնաւե՛ր համաձայնութիւնը : Ինչո՞ւ չգիտցար՝ որ սպագրութենէ սպագրութիւն, բռնութեան այդ բարձրաստիճան ծառաները, ամենաշփեղ դիւցազնիդութիւնն իսկ, որ մըն ալ կը վերածեն, վերածել կու տան ի վերջոյ խոհանոցային արեւէ հատորի, այս անգամ միլիոն մը սպառնակով : Ինչո՞ւ չնանչցար մարդերէն ետք աստուածներն իսկ հոսպիտութեան նակատագրողները : Ծերուկ մտքով մտածելու անպատեհութիւն : Ինչո՞ւ խօթեցիր ծերուկ Զարեան մը նուային հին պատմութիւններու մէջ. ի՞նչ պատահեցաւ քեզի :

Ընե՛՛լ տուին :

Բայց դուն հատարներով գիտէիր ընէլ տալու այդ վարչակարգին ամէնէն յռի՛ պատմութիւնը եւ ընէլուն ու չընէլուն բոլոր ողբերգական հետեւանքները : Գիտէիր մինչեւ ծուծը գացող վերլուծումներով, որոնք քու ստորագրութիւնդ կը կրէին : Յաւակնո՞տ էիր՝ ուրիշէ կարծիք առնելու համար. անէիր քո՛ւ գրեթէ ողբերգութիւն, պէտք չունէիր քո՛ւ ըսածներուդ դէմ իսկ ամբարտաւան ըլլալու :

Պուն գիտէիր ընէլ տալուն սարսփելի տուամբ : Ու գիտէիր նաեւ, որ հայրենի հողին դաժան սրբութեան վրայ մարդիկ եղան քեզմէ առաջ, որոնք վճարեցին իրենց մեծ նախադասութիւններուն գինը, մարդկային բարձրագո՛յն սակով մը, ի բաց առեալ իր հայրենիքին հին մէկ անունը կրող սխաւք գործի մը տխուր մէկ գործիչը եղող... Զարեանէ մը :

Նայիրի Զարեան մը՝ ա՛յնպէս, կոստան Զարեան մը՝ ա՛յնպէս : Հէ՛՛ք հայ գրականութիւն : Զարեաններուն երբե՛ք չհանգչող ջուրը, ու գրական ու գաղափարական նուերուն անապարտունակ ազգայնո՛ւմը ազգ :

Կարդացի «Աւագախորած նաւը» :

Տխրեցայ : Ոչ ոք պիտի երբանկանայ այդ գիրքը կարգալով, ինչպէս չէ երբանկացած իմէք, հեղինակը : Ոչ ո՛ք, բացի անշուշտ անանցմէ, որոնց տոչեւ վի՛զ ծնած ես հող, եւ ուրիշներէ՞ որոնց վի՛զը այդ կարգերուն համդէպ, չկրցա՛ւ երբեք բարձրանալ հաս : Քու արարքդ պիտի չընդունին այդտեղ, մտաւորականութիւն քէ ժողո՛ւրդ :

վարդ, պիտի ընդունին հաս, Սփիւռֆի՛ մէջ, միայն անոնք, որոնք նոր խայծ ու խթան կը փնտռեն իրենց սարկամտութեան: Արփիար-
 եանն ու անոր անունին կապուած ատորիմ ոգոսցքը ի գո՛ւր տխրե-
 ցուցած են քեզ, իբրևս մտահոգութեան արժանի ցաւագին երեսոյք: Այդ սպաննուած մարդը, տասնամեակներու մշուշէն կրնայ իր ըստ-
 ուերը բերել քեզի, մինչև գրասենեակդ, մինչև գրագէտի բուզ-
 քերուդ առջև ու մրմնջել:

- «Զե՛ւմ յիշեր եմա, հոգաբուսքիս ու մամուռներու վրա-
 յէն անցած արիւնխառն ժամանակներուն մէջ, ես մոռցա՛յ իմ
 մեղքիս էջերը, իմ հոչակաւոր մեղայագիբիս ծաւալը: Քուկդ սա-
 կայն բազմահարիւր էջ է, հստոր մըն է, նա՛ւ մը ամբողջ: Մի՛
 առարկիր: Յոյն կ՛ծու հաշիւներուն, նոյն կ՛ծու վախի՛ն, հին ու
 միշտ նոյնը մնացած սարկամտութեան մը գոհերն ենք, առաւել
 կամ պակաս յափա՛վ: «Կարմիր ժամուց»էն ետք կը գրուէ՛ր Մի՛ի՛Որ,
 նոյն ձեռքերով: Եւ չեմ շարունակեր հիմա քու մասին...»:

Կարգացի մէկ անգամ, ու չեմ կարգար ուրիշ անգամ «Աւա-
 դախբա՛ծ հաւք»: Ամէն կարգալուս, վախճամ նոր տրտմութիւններ
 իյնան միտքս, քեզի ըսելիք ուրիշ բաներ, գուցէ աւելի ծանր: Չեմ
 ուզեր կարգալ՝ որպէսզի մտնամ տակաւ, թէ երկրորդ տպագրու-
 քիւն ունի քու վէպդ, որպէսզի մնամ առաջինին տուող եւ պայծառ
 մքնայորտիմ մէջ: Որպէսզի վերջապէս ամէն անգամ համարուես
 չվիրաւորի, առնուազն անուշ բան մը պահուի քեզի հանդէպ:

Մնամ ափսոսանքով՝
 ԵԳ. ՊՅԱՅԵԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ՕՐԵՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՆԷ

ԵԳ. ՊՅԱՅԵԱՆԻ

ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ-Ը

«Նար Լեւան Վրայ» վէպին Հայաստանեան
 նրասարակութեան առիթով գրուած՝

Ա. Նամակ՝ Կ. Զարեանին
 Բ. Նամակ՝ Լո՛վեհանայ Ի՛ճխանութեան



«ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԷՋ»

(Գ. ՍԵՒԱԿ)

Երևան, 1963

328 էջ: 6 բաժին: Շուրջ 150 թերթ-ուած: 15 հազար տպաքանակ:

«Մարդը ափի մէջ»: Ուշագրաւ՝ իր բոլոր կողմերով: Նոր՝ իր բոլոր թերթ-ուածներով: Ձենք ըսեր յաղթական, կ'ըսենք նոր, ըսել կ'ուզենք հոս երեւոյող բանաստեղծութիւնները առաջին անգամ հատորի մէջ կը մտնեն: Նոյն թերթուածը հինգ ասորներ հատորներու մէջ ցուցադրելու չունենորի աւանդութեան կարելի չէ հանդիպել Գ. Սեւակի մօտ, ինչպէս կը հանդիպինք իր տարեկիցներուն ու երէցներուն զերթերուն մէջ: Գ. Սեւակ կը մերժէ առեւտուրը: Անիկա բանաստեղծ է:

Մերային երգերով կը սկսի Սեւակ իր գիրքը: Կը խռովէ ընթերցողը «Ո՛ւր է գիշերը հագարմէկիբորդ» հարցումով, «լուսնահարի կարօտ» մը կը փոխանցէ ու նաև իր «ճամակը», ապա «մաքսաննգորէն» կատարուած գիւտերը, «հանգըստացրու ինձ» եւ «Դարման հրահրմամբ» թերթուածը, աճէնէն ուժեղը:

Եւ ամէն սրտում՝
Խաղա՛ղ-ամարի՛ւմ խռովութիւն է...

Մերային երգերէն ետք, «Թուցիկ երգեր»-ու բաժինը կը բացուի ընթերցողին առջև: Ընդգծելի նոյնքան թիւով բանաստեղծութիւններ կան նաև հոս, «Վարժ մեծաց» օրինակ՝

Ո՛ւշ-ա՛ւշ եմ գալիս, բայց ո՛չ ուշացած,
Ծնւում եմ նրանք մի՛շտ ժամանակիմ:
Եւ ժամանակից առաջ եմ ընկնում,
Իրա համար էլ չեմ ներում նրանց:

«Վարժ մեծաց»-ին անմիջապէս յաջորդող «Բանաստեղծի կեանքը», աշխարհական խորքով «Միայնակ ծառ»-ին բանաստեղծութիւնը, «Ոսկին վերստին ոսկի է մնում» սակէ՛ն եւ այն թարմութիւնը որ կու գայ «Միանգամից»:

Միանգամից չեմ կշտանում եւ չեմ զգում ջուրի կարիք,
Ոչ այսօրն է անցեալ դառնում, ոչ էլ վաղն է դառնում գալիք:

Երբորդ բաժնին մէջ, Սեւակ առած է «Մարդը ափի մէջ» եւ շուրջ երեսուց թերթուածներով փորձած է պատկերացրել մա՛րդը՝ իր բազմաթիւ կողմերով, ներքին շահագրգռութիւններու եւ արտաքին փոխ-յարաբերութիւններուն ամբողջ դուժարով: Լաւին, վատին, վսեմին, նսեմին, իրաւին, կեղծին, արդարին, անարդարին, բանաստեղծականին եւ անբանաստեղծականին դիմաց կանդնած՝ կը քննէ, կը հաստատէ, կը հարուածէ, կ'ընտրէ եւ կը մերժէ: Դանի մը վերնագիր եւ իւրաքանչիւր վերնագիրէն մէկ երկու տող՝

«ԱՏՈՒՄ ԵՄ»
Ա՛յն փորձն եմ տառն,
Որ մարդկանց գլխին դառնում է փորձանք,

Այն դառնանքը,
որ վերջ է վերջոյ փոխում է դառի,
«ՁԵՄ ՅԱՐԳՈՒՄ»
Թարգած չունենամ ա՛յն ծառիցնիմ էլ
Որ սամայ ծոփց մի ըշո՛յլ չունի,

ՎիճՈՒՄ ԵՄ
Պիտի վիճեմ
Եւ երգի՛ դեմ,
Քէ բռնի եմ երգել տալիս խեղճ երգողին՝

ԵՌՍՏԱՆՈՒՄ ԵՄ
Խոստանում եմ գրկուել ճանու
Սուրբ անունից ուղղափառի,
Քամ թէ կորցնել ռաֆերիս տակ
Մարդկայնութեան հողը բարի:

ՄԵԽՔԱՐՈՒՄ ԵՄ
Հերքում աստուծոյ խեղճ ու բարի՝
Հազար ու մի շէն ու աւեր տամարմերով:

Այս թափով, այս ոճով, այս խըն-
դիրներուն համար՝ Սեւակ կը հրճուի տա-
կաւին, կը բաշխէ, կ'արդարացնէ, կը
տիրի, կը զարմանայ, կ'աղաչէ, կը խու-
սափի, կը հաւատայ մարդուն դրական
կարողութիւններուն (ե՛նս գիտեմ նրա
տղամարդկային շանորդութիւնը), կ'ե-
րեւակայէ ու կը բաղձայ եւ կը գոցէ
«Մարդը արի մէջ՝ բաժինը ձայնելով՝»

ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՄ
Եթէ պետք է լաւ հասկացուի,
Եթէ պետք է խոր գգացուի,
Լոկ եղածի նոր կրկնութեամբ՝
Ես հպարտ եմ

Չհասկացուող
Եւ չգգացուող

Իմ ինքնութեամբ՝
Շատ-շատերից չկարդացուող՝
Բայց եւ այնպէս իմ սեփական ձեռագրով,
Այլոց կողմից չարդարացուող՝
Բայց եւ այնպէս իմ սեփական ծրագրով՝

Հոս շօշափուած նիւթերուն նմանե-
րը կամ մերձուոր ասարեբակները գրե-
թէ նոյնութեամբ կը գտնենք «Ականջ
բեր ասեմ» ընդհանուր խորագրին տակ
ինկող չորրորդ բաժնին մէջ: Անհա-
տական ասպնայներ եւ ընդվզումի
յարուան պահեր: Ընդ երկուորեակին՝
անկեղծութիւն» կոչուած վտանգաւոր
հարստութեան մղումով գրեւորուած
պայքարն է նորէն, ընդդէմ ուշացածնե-
րուն, իրմէ պայմանաւոր դործեր պա-
հանջող կազապարամիտ օրէնսդիրնե-
րուն՝

Որոնց նկատմամբ միտումնաւոր եմ՝
Չորք ճարակող չար կրակի պէս,
Յուզիչ է նոյնպէս իր կաթնեղբոր
(«Համբերութիւն») կենսագրականին զրու-
պրած գառնութիւնը.
Իմ համբի՛կ... Համբի՛ր...
Իմ Համբերութիւն,
Դու էլ ես յագնել,

Բայց ընդհանրապէս ճիշ մըն է Պ.
Սեւակ, իր տարբերը հաստատելու հրա-
մայականէն դրդուած կենսատու աղա-
ղակ մը.
Աշխարհին ուղղուած մի բացիկ եմ ես,
Մի ծրարէք ինձ
Եւ մի սունձէք...

Իր մտածումներուն նորութեան եւ
ուճանութեան պատճառով տառապանքի
պահեր ստեղծած են Պ. Սեւակին եւ կը
թուի, թէ «Ձեր հազար ու մի դիտողու-
թիւնը», (Մի «կեցցեա»-ի հետ՝ հազար
«բաւ լղա»-ն) փոխանակ վճատեցնելու
առաւել եւս զօրացուցած են բանաստեղ-
ծը:

«Հարկ հողեկան» վերնագրուած հին-
գերորդ բաժնի ամբողջութեան հետ, յի-
շենք վերջին գլուխին երկու պոէմները,
«Եւ այր մի Մաշտոց անունը» եւ «Երգ եր-
գոց»-ը ու վերջացնենք մեր թւումն մա-
սանցը:

Մենք քաշեցինք «Մարդը արի մէջ»
հատորին հետ էջ առ էջ, բայց ըն-
թերցողը նկատեց հարկաւ, որ բոլոր
էջերուն առջեւ կանգ չարինք: Էջերէն ս-
մանք, մեծ մասը գուրկ էին ստրպոզա-
կան հմայքներէ: Գիրքին չորս հինգե-
րորդ մասը վերաւոր է եւ անյարիբ Պ.
Սեւակ անունին: Տեղ մը մտածումը կայ,
բայց մշակումը կը պակսի: Ուրիշ տեղ
մը զգացումը՝ կայ, բայց սանձը չկայ:
Երրորդ տեղ մը մանրութիւն մէջ խեղդուած
է մնայունը: Հարիւր յիսուն քերթուած-
ներէն հարկու երեսունը կը նուանեն ըն-
թերցողին համակրանքը: Այդ երեսուն
կտորներուն մէջ է ինք, Պ. Սեւակ ա-
նունով բանաստեղծը, իր ընդգրկած նիւ-
թերը անհատականացնելու զօրութեամբ
օժտուած խառնուածքը, աշխուժ ու կըր-

բոս, զուարթախոս եւ հեղեղ նոյն ասեն, զգացական խորութիւնները պեղելու ընդունակ եւ մտքի յանդուգն փորձերու եռանդուն գործիչ: Առարկաներուն ու մարդերուն, ասրերքին երկրորդ կեանքը, թաքուն ժապին բանաստեղծութիւնը նշմարելու ինքնուրոյն կարողութիւն մը: Արթուն միտք մըն է ամէնէն առաջ Սեւակ, Հեանուղ, պրպտող, իր կատարած աշխատանքներուն արդիւնքին մէջ ստուգած կեանքի մէկ բարախուն մասը տողերուն փոխանցելու խանդավառութեամբ ապրող անհանգստա մը: Մարդկութիւնը նոր անկիւնադարձներու առջեւ դրած մեծ ցընցումներուն տեղեակ, կրօնքներուն եւ ընկերային հարցերուն, արուեստներուն եւ աստեղ մեծ խայեցեալներուն տեսիլքը ներկայ է միշտ իր աչքերուն ու հոգիին մէջ: Պատմական ծանօթութիւնները եւ զանոնք օգտագործելու իր քաջութիւնը համեմատութիւններու նկատելի ուժ մը կը հայթայթեն իր տողերուն, հանդիսանալով միաժամանակ զինքը շրջապատի բանաստեղծներէն զանազանող կարեւոր մէկ յատկանիւր:

Եւ էջերն եմ շրջում մեր ամկատար սիրոյ,
Ինչպէս հաւատացեալն՝ Աւետարանն իր սուրբ:

Անհրաժեշտ չէ մշտածարու եւ մըլտրնջենապէս միթիարական յաղեցում մը փնտռող հոգիներուն ներքին կենսագրականը խառնող այս ընդհանրացումին երկու եզրերը պարզաբանել եւ աւելցութիւնները հաստատել: Պ. Սեւակն մօտ խտացելու եւ թելադրելու չընորհըր զանցառելի շնորհ մը չէ եւ ծանօթ նիւթերը նորոգելու գաղտնիքը ճոխացուցած է բանաստեղծական իր դրամադուրը:

Արի՛, Նա՛ր Տարի,
Փայլուտդ բարի՛,
Եւ արթնացրո՛ւ ին թնդուն իայլոյ
Ուշ մնացածին,
Վնով տարուածին.
Տա՛ւր ապափնուս հոգով ցաւածին,
Հիասթափուածին՝ Նոր մի հիացում

Սիրաթափուածին՝ մի նոր միացում,
Իրրու Նոր Տարուայ բազմալի մուէր,
Տո՛ւր նոր հաւատի կապակուս թեւեր,
Մանկանը՝ մեծի մտքի լիացում,
Մեծին՝ մանուկի ամառատութիւն,
Տափարակներին՝ Արարատութիւն.

Բանաստեղծութիւնը հոս շոկսիր եւ հոս չի վերջանար: Բայց եւ սկիզբին եւ վախճանին մէջ նոյն շունչը կը տիրէ եւ թափը: Տափակ նիւթ մըն է, ինչպէս գիտէք, այս Նոր Տարի ըսուածը, գրականութեան մէջ քարոզ կամ լալկանութիւն դիզելու անպիտան առիթ մը, բայց որ անաւասիկ դարձած է բանաստեղծութիւն, պատճառ դարձած է բանաստեղծական յորդումի մը: Այս թարմութիւնը, թարմացնելու այս ուժը, լեզուական եւ ռեալական աշխուժ գործակցութեամբ ընթերցողին սրտին հասնելու այս կենսունակ կերպը «Մարդը ափի մէջն առնող մարդուն ամէնէն սիրելի կողմն է:

«Մարդը ափի մէջնի մեր առանձնացուցած երեսուն անուն զերթուածներուն խորքը՝ խռովք է, կռիւ է եւ երկիրը սքանչացում: Կռիւր ինչդինքը ըլլալու, իր ներքին սահմանները ճշդելու եւ իր տոանձին սահմանադրութիւնը հոշակելու ամէնորեայ տապնապէն ծընունդ կ'անէ, հին արժէքները վերահաստատելու եւ նոր արժէքներ օտեղծելու արգելիչ պատճառներուն դէմ կ'ուղղուէ, իսկ սքանչացումը կու գայ մեր ժողովուրդի մնայուն հարստութիւններէն, հայրենիքին ու Մեծաքանչիին յանրժափառ խորհուրդէն: Հոս արդէն Սեւակ իր սերունդին եւ զինքը նախորդող սերունդին մէջ մրցակից շունչի թէ՛ իր յղացումներով եւ թէ՛ իր յղացումները թանձրացնելու համար օգտագործած միջոցներուն առատութեամբ: «Հարկ հողիկան» ընդհանուր խորագրին տակ ինչպիսիք զերթուածները եւ «Սեւայր մի՛ Մաշտոց անուն» ծաւալուն պոէմը առանձինն պիտի բաւէին, ապահովելու համար Պ. Սեւակին ամուր պատուանդան մը, ցեղային խորքով անկորնչելի բանաստեղծութիւններ կտակած մեր զը-

րականութեան պայծառ դէմքերուն կողքին:

Այսուհանդերձ պիտի ուզէինք անգամ մը եւս շնորհիւ, որ Պ. Սեւակ միշտ չէ կրցած պահել մարդը «...սփի մէջ»․ յաճախ ինքը օտնուած է իր ուժերուն «ափ»ին ու տարուած անոնցմէ: Նոյնինքն իր ուժերը դաւանանած են իրեն: Պիտի ըսէինք տակաւին որ ենթարկուած է իր տաղանդին փորձիչ քրմայններուն, փոխանակ տաղանդը արնտեաննու տաղանդին ուժ տալու: Գրելու դիւրութեան մը զոր գացած են իր բազմաթիւ յղացումները: Ճիշդին ու ստանձանքին կենադրձող նպաստէն չեն օգտուած անոնք, առաջին գրիչով թուղթին մտտահոսած ըլլալու տպաւորութիւնը կը ձգեն: Պ. Սեւակի «ափը» միշտ լեցուն պիտի ըլլար եւ պարտաւթեան կասկած բնաւ պիտի չտար, եթէ երբեք չփորձուէր «ձիւնգամից» ստորագրել իր գրածը («Ատում են, թէ միանգամից կեանքում ոչի՛նչ չի կատարում»): Պարզ օրինակ մը՝

Իբրև սկիբը քնդաւե՛նը ես այս կ'աւան-
Աշխարհում կայ ջանելուքի՛ւն,
կայ կեա՛մք,
կայ սէ՛ր,
կան սղաներ եւ ազդիկնե՛ր,
կայ շէ՛կ, կայ սե՛ւ:

Այս պարզունակութեամբ ըսուած ա՛յս «ընդամէնը» գիտնալու համար, չենք խորհիր, որ մարդիկ պէտք ունին բանաստեղծներու օժանդակութեան: «Ընդամէնը» այս է, որ կ'ուզենք շնորհիւ: Պատճառը միշտ նոյնն է, գրելու խարոզ դիւրութիւնն է, որ առաջացուցած է այս ցամաք հազարաւորութիւններու խճաղումը Սեւակի զերթուածներուն մէջ: Մենք միեւնոյն տճադարանքին կը վերադրենք նաեւ կրկնութիւններու պարագան: Մէկ զերթուածի մէջ ինքզինքը ամբողջապէս պարպած չլլալու հանդամանքը յաճախ ծարու ձգած է բանաստեղծի հոգին, ծարուք միեւնոյն խորքով նոր զերթուած մը թելադրած է իրեն եւ ստացուած է առաջինին մէկ տար-

բերակը: Քերթուածներու անունները «Վիճում են», «Ձեւ յարգում», «Ատում են»: Մեղի հետ անհաշտ եզող բանին դէմ է, որ կը վիճինք անշուշտ, չենք յարգեր վիճելին, եւ կ'ատենք անյարգելին: «Ձեւ յարգում»ին տակ զետեղեցէք «Ատում են»ի բովանդակութիւնը, ու պիտի տեսնէք, որ արդիւնքը նոյնն է․ ընդհակառակն, թող Սեւակ ինքը ջանքով ու սանջմանքով այս երկու բանաստեղծութիւններուն հական մասերը մէկ զերթուածի վերածէ եւ այն ատեն, ոչ մէկ կասկած, մենք կ'ունենանք անկրկնելիք: Այս է ամէնը եւ «ընդամէնը»:

Միեւնոյն դիտողութիւնը կրկնած պիտի ըլլանք, երբ ըսենք, որ «Մարդը սփի մէջ» հատորին հեղինակը կարճ բանաստեղծութիւններ յորինելու հակասադրով չէ ծնած: Սեւակը Սեւակ է ա՛յն ատեն, երբ լայն կտաւի վրայ կ'աշխատի, երբ յանձն կ'առնէ զհոգութիւնը եւ լարուած վիճակը կը պահէ երկար: Հոս է, որ կ'ածի իր խառնուածքը, կը պարծառանայ նաեւ, ու կը տաքնայ: Հոս է, որ կը յայտնուի ինդիքներ խորացնելու եւ դարգացնելու իր կարողութիւնը, որուն շունչ կ'ըսեն ռմանք, թափ կ'ըսեն, ինչ կ'ուզեն թող ըսեն, կը յայտնուի ինքը, բանաստեղծը՝

Իսկ երբ ես շատ եմ ինքը իմձ նման,
Այսինքն՝ քարձք ինքը իմձանից:

Այսինքն՝ ա՛յս: Այսինքն՝ իր տեսիլքին հետ հազարակցութեան մէջ մը տած, անոր հետ նոյնացած անշահախըզի բանաստեղծը, այն բնդմնաւոր վիճակը, որ նոյնինքն այլակերպութիւնն է, տարում է նաեւ, անկեղծութիւն է առաւել, մայրը՝ ըսլոր անկրկնելի գեղեցկութիւններուն: Պ. Սեւակէն սպասուածը այդ անկրկնելիքն է, տարումներու անկեղծութիւնը, արտայայտութեան պերճութիւնը, հետեւեալ տողերուն համահասար բանաստեղծութիւնն է վերջապէս Պ. Սեւակէն սպասուածը:

Քս անմեղութեան բայրիքից արբշիւ՝
Մտացայ իմ ողջ անցեալը հարուստ
եւ երբանկացայ իմ... ազխտութեամբ: Պ. Ա.

ԿՂՎԱՐՆԵՐ

ՃԵՍԱՆ ԱՒԵՐ ԹՈՒՐԳ ՈՒ ԴԱՇՆԱԿ

Այս վերնագիրը վերցուցած ենք Գեորգ Խմբինի Վերկու ճամբայ (1862) հաստիս մէջ գետեղուած «Սասունցիների պարը» անուն գերթուածէն: Գերթուածը կը պատմէ Սասունցիներու ճառագար անցեալը, Սասնոյ սարերէն մինչեւ Արագածի փէշերը երկարող ժամանակամիջոցին մէջ, ուր, անշո՛ւշտ, Սասունցիներու կեանքին մէջ լուսուար ոչ մէկ կէտ կայ, որովհետեւ, անոնք, Արագածի փէշերուն հաստատուելէ առաջ, կարծիր դրօշէն, մուրճ ու մանգաղէն առաջ, իրենց բովանդակ կեանքի ընթացքին միայն ու միայն:

Տեսնեմ աւեր քարիք ու դաշնակ,
 Հաշուական այս կարգի ձեռնարկներ
 սարքելու հակումը նոր երեւոյթ մը չէ
 Գեորգ Խմբինի կեանքին մէջ, չըջպատի
 արամադրութիւններուն իր դրիճը յարմար
 ցնելու զիջողական իր տկարութիւնը
 հինէն կու գայ, այն օրերէն՝ երբ ինք
 «Ստալինեան ովկիանոսն անծիր» մտած՝
 կը ջանար համոզել ընթերցողը, որ իր
 գործն ու փառքը Վժիռն առաջ կոմունիստ
 նիդմ կերտել» է: Եւ բնական է իրմէ եւ
 իր կերտած կոմունիզմէն առաջ՝

Մահաստա՞ն էր Հայաստանում՝
 Սովի երկիր դաշնակցական,

Այն ատեն, այս տողերը այսքան դիւր
 րութեամբ գրած պահու՞մ ստալինեան
 մրցանակներուն սեւեռած էր Խմբին աչքե
 րը, բայց տասնամեակ մը ետք, երբ ա
 ւելի հասունցած է ինք եւ զպատուան
 դաններքու փոշիացումով աւելի հեռա
 ցած է ժահուան ուրուականը՝ Խմբին որ
 մէ՞ գրողուած եւ ո՞ր մրցանակին սկըն
 կալութեամբ կը շարունակէ այս սրբա
 պըղծութիւնը: Թուրքը և Թուրքին հաւա
 սար աստիճանի մը վրայ դրուած գաշա
 կը պարի ելած իր հերոսներուն աչքերով
 դիտուած են արդեօք, թէ գրողին ըն

թացիկ հաշիւներուն բերումով քով քովի
 գրուած են Թուրքն ու Դաշնակը: Ինչ
 պէ՞ս կրնայ հայ մարդ մը, առուելու եւս
 հայ բանաստեղծ մը կանգ առնել Սա
 սունցիներուն առջեւ եւ թուրք արեւակը
 զակ ջարդարարներու կարգին, Պշարէ
 թախիներու, Քէօսէ Պինպաշիներու ա
 նուններուն հետ արտասանել անունները
 Հրայրին, Սերոբ Աղբիւրին, Գեորգ Չա
 ւուչին, Թուրքին, Մուշեղին եւ Չուր
 յին եւ այս ամէնուն հետ թուրքին դէմ
 ծառայած եւ ազգին համար ողջակիզ
 ուած բազմահազար երիտասարդներուն:

Ո՞ր Սասունցին կամ ո՞ր Հայը ան
 տարբեր կրնայ մնալ եւ չի վիրուորուիր,
 երբ իր սրտին ամէնէն մտերիմ ու տաք
 անկիւնին պաշտամունքի առարկայ դար
 ձած ամենատուրք այս անունները արիւ
 նոտ ուրուականներու հետ բազմատուած
 կը ներկայացուին իրեն: Հարազատը թըշ
 նամի ներկայացնելու այս անմաքուր մը
 տայնութենէն նուազ անհեթեթ չէ նաեւ
 անհարազատին գովքին նուիրուած եւ
 Սասունցիներուն բաշխուած Խմբին օտա
 քահան օրհներգութիւնը:

...Եւ երբ տեսան, որ էլ չարը մօտ չի՞
 գալիս,

Եւ երբ տեսան օտար գեմքի հոտ չի՞
 գալիս,

Եւ երբ տեսան
 Ել չի քափոււմ հազիմ արիւմ,
 Եւ երբ տեսան
 Եկաւ աշուն, եկաւ գարուն՝
 Առանց տեղի-կոտարածի,
 Բա՛ց արեցին սուփիւն հացի,
 Դեռ-գուռնան մէ՛ջ քեքցիմ,
 Ու Արագած լերան լանջիմ ճմեռ-ամառ
 Պար բոնցիմ, խազ կամչեցիմ իրնց
 համար:

Կը հասկցուի անշուշտ, որ Թուրքէն
 ու Թուրքին աստիճանին գրուած Դաշ

նակէն ետք սասունցիին ապրած միակը-
տուր երջանկութեան կը վերաբերի խոտ-
քը: Քուրքէն ու Դանակէն ետք, ո՛չ ա-
րիւն տեսած են Սասունցիները, ո՛չ ա՛ն
ապրած են եւ ոչ ալ կոտորածի ենթարկ-
ուած: Այլ զարկած են դէտլը, փշած են
զուռնան ու պարած: Այդ մարդոց իրա-
կան ապրումներուն կը համապատասխա-
նեն արդեօք այս տողերը, թէ դարձեալ
սուտ կը խօսին: Ընթերցողները կը յի-
շեն հարկաւ, որ Խմին, տնցեալ տարի,
զպատուանդաններու ինչոր պատմու-
թիւն մը կը հաղորդէր: Երգիչները ա-
ռանձին բարձրացողին պատուանդաննե-
րը արդեօք, թէ ի շարք այլոց Արազած
լեբան լանջին ապրող սասունցիները ի-
րենք ալ, երգիչներուն երգերը երգելով
եւ լսութիւնները կուլ աւալով, բերին ի-
րենց մասնակցութիւնը թուրքը գերա-
զանցող արիւնաբերուն ի խնդիր ըս-
կըսուած պատուանդաններու եւ արձան-
ներու կառուցումին: Աւ ապա քանդու-
մին, որ ինքնարտիստն կը հերքէ քան-
դումը կանխող շրջանին ապրուած եր-
ջանկութեան ողջ առասպելը:

Ջարդէ՛ք,
Քաղաքում լինի, թէ գիւղում,
Սրտում,
Ուզեզում,
Այս պատուանդանք,
Կերտում մեր ձեռքով,
Իմ ու քո երգով,
Եւ մեր ... լուսեամբ մը ...

Յատկանշական է Խմինի «իմ ու քո
երգով եւ մեր... լուսեամբ» կատարած
յայտարարութիւնը: Իր սմբողջ կեանքն
ու կեցուածքը բնորոշող խոստովանու-
թիւն մը: Երգած է, երբ կրնար լռել, լը-
ուած է, երբ կրնար երգել: Ներկայացած
բոլոր անպատեհ առիթներուն փութացած
է անպայման ներկայ ըլլալ ինք եւ իւրած
անպատեհ գործ մը ստորագրելու առաջ-
նութիւնը: Այս է պատճառը, որ Խմինի
գործերը աստիճանաբար զարգացող տա-
ղանդ մը յայտնաբերելէ աւելի, մսխը-
ւած շնորհի մը մասին կը վկայեն: Նոյն
պատճառով, այսօր, ասանըհինգ տարի
առաջ իր մասին կազմուած կարծիքը կը

տիրէ տակաւին: Կուռնկի մասին երգ
մըն է, «Կոմիտասը անապատում», ասա-
նեակ մը միջին յաջողութեամբ կատրներ,
քիչ մը «երգ երգոց» եւ սպա շիւ ու քո
երգով եւ մեր... լուսեամբ» բարձրա-
ցած պատուանդաններու անվերջանալի
եւ ապուշ շարք մը: Եւ «Սասունցիների
պարծին վերջին մասը».

Ո՞ր սասունցիմ սիրտ կ'ունենայ լոկ
պարելու,
Երբ դեռ սրտում մութա՞ր ունի
փետարելու,
Երբ դեռ Սասնայ գազպան ձեռքի՞ է
կարտում,
Սասնայ հոգը վար ու հերկի՞ է
կարտում,
Երբ դեռ Մշոյ դաշտի նման հազար
դաշտում
Ձէ՛նք է պայքում, գի՛ւղ է այլում,
ա՛զգ է գաղթում,
Եւ հիմաւարց այս աշխարհի գէթ մի
մասում,
Կա՛յ Սասունի ցասման նման
արգար ցասում:

Մեր կորսուած հողերուն ստեղծած
այս բնական տրամադրութիւնը, իր կար-
գին վերաւոր է Խմինեան ընթացիկ տուր-
քով: Մշոյ դաշտին հետ զուգընթացա-
բար յիշուած անկարելի դաշտերով: Պէտք
կա՞ր «հազար դաշտերու այս խանդա-
րիչ ներկայութեան: Սասնոյ հողին ու
Մշոյ դաշտին կարօցած մարդուն հո-
գիին մէջ գոռար թէ ուրիշ գաշտերու
յատկացուելիք տեղ գտնուի, եւ կարելի
լէ ենթադրել, որ նոյն մարդը, նոյնիսկ
սովետական սահմաններուն մէջ ապրող
սասունցին՝ այնքան զգայուն ըլլայ հե-
ռո՞ւ հեռաւոր արարածութիւններու հաշ-
տին, ինչպէս է իր հերոսներուն հոգիին
խորթ, այլ ապապրանքներ կիրարկելու
ունակութենէն ձերբազատուելու անկա-
րող այս քերթողին պարզան:

Հետու չենք այս դիտողութիւնները
հիմնաւորող փաստէն: Մէջտեղն է «Սա-
սունցիների պարը», զոր, տեսաք արդէն,
քանի մը անգամ ընդհատած է Խմին եւ
պարած է նորէն ի՛ր պարը...»

Ինչ որ կը սպասենք էմինէն ու կը գտնենք քիչ՝ իր գործերուն մէջ, նիւթ մը ինքն իր մէջ մշակելու եւ աւարտելու անխտոն ոգեւորութիւնն է, քովի սիւնակին վրայ տրուած քերթուածին օրինակով անխաղախ նմոյշներ կարգաւու առիթը: Նման կարողութիւններ անհարկի զատածումներու մէջ մասնելու ունակութիւնն է, որ կը վիրաւորէ ընթերցողը, էմինի հաշտին: Իրմէ ուզուածը չարիի զգացումն է, ա՛յս է, հայ մարդու ուզիչ կեցուածքը, անխտրական ոգին:

Հայաստանէն էաք, «Յոտարիկրացուն» ներկայացուած հայը, հայաստանցի հայը չէ միայն, այլ Հա՛յն է, աշխարհի շորս ծագելուն նետուած եւ ամբողջ աշխարհի մէջ իր շուրթին կերպին պտտակտնութեան ի ինչիւր աստիճանով տարօրինակ տիպարը: Որովհետեւ, Հայաստանի մէջ ուրիշ ո՛ւրք բաժան-բաժան, անմիաբան, դատուած, հատուած» հայեր: Երեւոյթները ճիշդ դիտելով՝ կըրնանք ըսել, որ մեր շուրթն ու հետուն ապրող «հայաստանաւէր» միաբաններն ալ շին քերթուածին լիբիբական հերոսները: «Բաժան-բաժան, անմիաբան, դատուած» հատուածը՝ ամէնուն վկայութեամբ եւ ամենուրեք՝ մենք ենք: «Ուրոյն մի կերպ» հայերու այս թեւը: Որ կը պայքարի մեր ուրոյնութիւնը վրտանող խորթութիւններուն դէմ, որպէսզի պատրաստ ըլլանք ու կարենանք մտալ ՄԻ, «էրբ սպասուած է թշնամիներ»:

Այն «Տեսան աւեր թուրք ու դաշնակը», եւ այս «Չատուած, հատուած»-ին վրայ դրուած համակրական շեշտը: Չատուած հատուածը տակաւին հայ համարող եւ հայերէն իւրաքանչիւր շուրթին մի կերպ» գաւանդող բանաստեղծին ներքի՛ է, որ նոյն գիրքին մէջ, ելլէ եւ մէկ զատուած հատուածը թուրքին հետ բազմատէ: Առօրեայ հով մը կայ էմինի քերթուածներուն մէջ, զգացումներու եւ սպրտաներու երկընտրանք մը, որ կը պակասցնէ իր յօդուածներուն ամբողջեան եւ ուժգնութեան մասին անհրաժեշտ համարումը:

ՕՏԱՐԵՐԿՐԱՅՈՒՆ

Ջգո՛յշ խօսիր Հայաստանում, —
Այստեղ ամէն գագաթ ու ձոր,
Արագածն է սայիս եզոր
Եւ քա խօսքը հեռու տանում.

Թէ բարի եմ խօսքը քա,
Հայոց լեռներն անհամար
Կը խմբարեւո՛՞թ քա զէմ լոթի՛
Փռուցք տարած աշխարհներին.
Իսկ թէ չար եմ՝ լեռները մեր,
Հրաբխի բնքն անմեռ,
Որ լռու եմ, բայց չե՛մ համբո՛ւ՛
Քեզ լուսայն՝ կ'արձագանգեմ,
Որ լեռներ է հշու՛մ, տակում. —

Ջգո՛յշ խօսիր Հայաստանում:
Ջգո՛յշ խօսիր Հայաստանում, —
Նե՛ր եմ համբէք լեռնակամ,
Երկու հոգու տեղ չեմ անում՝
Թէ իրար զէմ ելնեմ յանկաքծ.
Թէ բարեկամ ես ու ընկեր՝
Անց կը կնձա՛մ՝ գրկուած սիրով,
Թէ դատով ես այտեղ ընկի՛
Կը գլորուե՛մ ծեռ քարերով.
Ո՛ր եզու քա գայու վկան,
Գնալիս ո՛ր է ինձանում...

Նե՛ր եմ համբէք լեռնակամ, —
Ջգո՛յշ հայիր Հայաստանում:
Ջգո՛յշ գործիր Հայաստանում՝
Մեծք գան ու բայց չե՛մք ունցել
Եւ... արքայ է ամէն մի հայ.
Քոյք ու բռնակ լեռն ունցել
Եւ... սպայ է ամէն մի հայ:
Ամէն մի հայ՝ լեռն մի ծերպ,
Ամէն մի հայ՝ արո՛յն մի կերպ,
Ամէն մի հայ՝ մի Հայաստան,
Բաժան-բաժան, անմիաբան,
Չատուած, հատուած՝

Եւ ակայն մի.
Երբ սպասում է թշնամին,
Մեր դարաւոր անմահ երթին
Եւ այս հնոց բարբիկ բերդին,
Որ հայրենի՛ք եմք անուանում...
Ջգո՛յշ գործիր Հայաստանում:

Գ. ԵՄԻՆ

Ա՛Ն ԱՅՍ ԷՄԻՆԸ

«Զրոյց Մասիսի հետքը առած ենք
 «ստալինեան երբորդ կարգի ժրջանակչով
 պտակուած Գ. Խմինի «Նոր ճանապարհ»
 (1963) հատորէն, ի վկայութիւն իր
 ազայծառաւստութեան: «Զրոյց»ին ամ-
 բողջութիւնը այս չէ-կէ'սն է հոս տրուա-
 ծը, իսկ միւս մասը դարձեալ կը շարու-
 նակէ նոյն բանը ըսել, երկարելով մըր-
 ցանակաւոր հարկատուին բարբաջանքնե-
 ները վեհափառ լիւրսն եւ անոր գիցարա-
 նական խորհուրդը քնարերգուի երգիչնե-
 բուն ղէմ, որպէսզի, ի հարկէ «Որդի ան-
 ուանի Ստալինը նրան»: Եւ անուանեց:
 Մոռնա'նք:

Անցեալ տարի գրուած, այլ տակա-
 ւին հատորի մէջ շմտած վարի քերթուա-
 ծը՝ «Այս այս Մասիսը», Խմինի կեանքի
 բացառիկ երեւոյթներէն մէկն է: Վերա-
 դարձ մը հայ բանաստեղծի կոչումին:
 Պիտի շարունակէ՞ արդեօք այս սգիով եւ
 վերջապէս պիտի տա՞յ մեզի անխառն
 հատոր մը կարդալու առիթը:

Ա՛Ն ԱՅՍ ՄԱՍԻՍԸ...

Ա՛ն այս Մասիսը...
 Որից փափկում են սրտերը բոլոր
 Երբ իմէք տար է:
 Որ շիրմացնում է սրտերը մայր
 Երբ իմէք... սա՛ռն է:
 Որ աշխարհներից հեռուոր-հեռու
 Բոլոր հայերին այստե՛ղ է բերում
 Երբ իմք... այստեղ չէ
 Որ միսմութեամբ փարձ է կարգում
 Աշխարհում ցրում հայերին անտուն,
 Երբ... երկննդգում է:
 Որ մեծ սիրայ պէս
 Ոչ հեռանում է
 Ոչ էլ գայի՛ն է...
 Ա՛ն այս Մասիսը...
 ԳԵՈՐԳ ԷՄԻՆ

ԶՐՈՅՑ ՄԱՍԻՍԻ ԼԵՏ

Մասի՛ս,


Ես շա՛տ եմ տեսիլ քեզ, Մասի՛ս,
 Եւ տեսիլ շատ լսել քա մտած,
 Քա անուանով են երգուում սրբազան,
 Հայերն՝ աշխարհի ամեն մի մասից:

Զգիտե՛մ, լսած կա՞ն դաւ այս մտածիմ,
 Սակայն ասում եմ, թէ դո՛ւ ես, Մասիս,
 Երեւոյ կաւում ի՞նձ նակտա տարել,
 Եւ քեզ համար եմ ես լսիլ պայտարի,
 Իրբեւ թէ դո՛ւ ես իմ կեանքը, որ կաւ,
 Քեզի՛ց է կախում՝ ես կամ, թէ չկամ,
 Եւ երէ կեանքում ես երազ ունեմ,
 Այդ գագաթնե՛րն են միայն քա ձիւնէ:

Դու զարմանում ես, սակայն սպասիր,
 Ես դեռ բոլորը չեմ տեսիլ, Մասի՛ս,
 Ասում եմ դո՛ւ ես փրկարարն իմ վեհ,
 Դե՛ւ ես ի՞նձ ազատ այս կեանքը ասելի,
 Դե՛ւ ես հաւաքել պանդուխտ հայերին,
 Եւ ամեն անգամ լսեցիք ճայելիս,
 Ես ետ՛ր եմ զգում ի՞նձ հայրենիքում,
 Քեզե՛ն՝ կամ զգում ի՞նձ հայրենիքում:

Ես չե՛մ ուզում եիմ դարերը գնալ,
 Ես տեսածի՛ս եմ հաւատում միայն,
 Ասա՛ ի՞նձ Մասի՛ս, դու երբեք չե՛րք,
 Երբ կարցած հոգ, ասում ու մտերիմ,
 Թափառում էի ես սրբ ու անտէր,
 Այստե՛ղ ա՛յս հագում, քա հայրենցի դէմ,
 Թէ մասունի՛ր անգամ իմ մտքն,
 Ի՞նչ կարազ էիր անել դու, Մասի՛ս:

Նայն յե՛ռն էիր դո՛ւ, ի՞նձ մտն անտէր,
 Եւ «Այնպէս»-ից թէ արի չպայտեր,
 Թէ հազն այս՝ հասած վիճի եզերքն,
 Չբռնէր Կարճիբ Ռուսիայի ճեմից,
 Զի՞նէր ետ կեանքն այս սովորական,
 Որ հայրենիքս է միւ՛կ, իսկակա՛ն,
 Ես այս երկն հագում՝ ի՞նչպէս կի՛տա դու,
 Կը զգայի ի՞նձ սրբ, գերուած ու անտուն:



ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆ

Փարիզի Վերին-Կոմիտեան էրզյութուհը, վերջերս, իր հիմնադրութեան շատանձանակին առթիւ, տուած է համերգ մը:

Վերի խորագրին տակ, ՎԷՐ Մոնաշի երաժշտական աշխատակիցը՝ Ժազ Լոնշան Կեռեւ-Լալ աղջիկը նուիրած է Վերին-Կոմիտեան էրզյութութի համերգին, Քերթին Ապրիլ 2-ի թիւին մէջ:

Վեր հիմնադրութեան շատանձանակը տե՛ւ-լով, Սալ Փավոյի մէջ, Վերին-Կոմիտեան էրզյութութի յուզիչ պատկերը առաւ ցեղային փոքրամասնութեան մը, ամբողջովին մուշուած իր սրտերէն երկրին եւ որ, սակայն, տեսչարա կը պահէ իր ուսնդական զանձը: Իր տնունը կը յիշեցնէ Կոմիտեան Վարդապետը, որ հայ երաժշտութեան անհունը մշակը եղաւ, տեւի զան երեք հազար երգեր ժողովոց, 1935-ին Փարիզի մէջ մեռնելէ առաջ:

Հայ երաժշտութիւնը, զոր կը հանձնեք զը-րեթէ միայն Արամ Մուշատուրեանի զոր-ձերով, աշխարհի ամէնէն հիներէն մէկն է, իր ծագումը չորս հազարամեակներու կը պատկանի եւ զարեւու բնթացքին կրած է արարական, սը-լաւ, պարսկական, յունական, ասիական ազդե-ցութիւններ, զորս բունն զգայնութիւն մը ունե-ցող ժողովուրդ մը վերածած է մեղեդական մեծ հարստութիւն ունեցող երաժշտութեան մը:

Հաւանաբար, այս թարմութիւնն ու հրաշայի գոյնը աւելի կը յայտնուին Կոմիտեան Վարդա-պետի, Գ. Մ. Ալէշչանի ժողովրդական երգե-րուն, Բ. Ալթունեանի սքանչելի «Օսաննայի» կամ Վերի Վենդոզին մէջ՝ զան Տիգրանեանի Ա-նայշի Սարոյի եղանակին կամ Կանաչեանի «Նա-նորին պէս ճիզով շորագրուած գործերու մէջ:

Ամէն պարագայի մէջ, հիացանք Վերին-Կո-միտեան էրզյութութի միատարրութեան եւ ե-ռանդին վրայ: Կարգիս Արիւիկեանի զեկզկա-րութեամբ՝ գնահատեցինք այրերու ընտիր եւ թաւ նայները, կրներու ձայներու գունազոյ ե-րանդները, մասնաւորաբար՝ Գ. Մկրտիչ Գողոս-եանն ու Օր. Եւբէլ Պենկեանը:

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԹԱԳՈՒՀԻ ՆՈՐ ՖԻԼՄԻ ՄԸ ՄԷՋ

Նիւ Եորքի եւ Ամերիկայի գանձազմ քաղաք-ներու մէջ ներկայացուի սկսած է շատովմեա-կան կայսրութեան Անկուհը անունով ծագաւելմ մը, որուն մէջ Հայոց վերաբերեալ մաս մը կայ: Հայոց Արհամու քաղաւոր կ'անուանանայ Հռովմի կայսր Մարկուս Արիլիանի պարկամ՝ Լիւսիլլայի հետ, որ կը դառնայ Հայոց քաղաւ-նի:

Հայոց քաղաւորին դերը վերցուցած է Է-գիպտացի դերասան Օմար Շերիֆ, որ խաղացած էր «Արաբիոյ Լարէնը» ծագաւելճիմ մէջ եւ կը ճկատուի նոր օրերու վայելքիմմ: Հայոց քա-ղաւնիի դերը ստանձնած է սիմեոնայի ճշմարտ ասագ Սոփիա Լորէնը:

Ծագաւելճիմ մէջ դեր վերցուցած են նաեւ ուրիշ յայտնի դերասաններ, ինչպէս՝ Սքիֆըն Պոյս, Ալեք Կիմըս, ճէյմս Մէյքըն, Գրիտտոֆըր Պլումբը, ճամ Այրլէտս, Մել Ֆերար եւ Աժընճի Գալիմ:

ԴԱՆԻԷՆ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Դանիէն Վարուժանի թղթածրարները, որոնք Միացեալ Նահանգներ պարզ իր ազդեան՝ Վե-րնիկ Սաֆրաստեանի կողմէ զրկուած են Հայաստան, մեծ շահագրգռութիւն տակդած են Կոն: Անոնց մէջ գանուած են Վարուժանը ժա-ղովանուի բազմաթիւ փոփոխակները, բանա-տեղծութիւններու մեղագրներ եւ սեւազրու-թիւններ:

Նիւթերու մէջ կը տեսնուին երիտասարդ Վարուժանի դրական այն գործերը, որոնք ծա-նոթ չեն պատմաբաններուն՝ ինչպէս նաեւ շօտեցը ժողովանուի մեղագրը, որ 1902-ին շարաղըր-ւած է, բայց հրատարակութիւնը արդիւուս՝ Բրազիլիան գրաքննութեան կողմէ:

Արիւիկեանը նամակազրական բաժինը կը պարունակէ Դ. Վարուժանի եւ Քուրթիոյ դրա-կանութեան ու արուեստի մարդոց կողմէ իրեն ուղղուած նամակներու օրինակներ: Գանուած է

բանաստեղծին մէկ տետրակէլ, ուր կենսագրական կարճ ծանօթագրութիւններ կան թուրք զբոսորդներու մասին, ինչպէս նաեւ հասուններ՝ անոնց զործերէն:

● Հայաստանի դրականութեան ու արուեստի թանգարանը իբր ժողովածուն ճոխացուցած է վերջերս, բազմաթիւ արժէքաւոր փաստաթուղթերով, որոնք կը վերաբերին արեւմտահայ զբոսորդներու կենսագրի ու զործերուն: Տարուան սկիզբէն ի վեր՝ միայն Փարիզէն ստացուած են 15 արխիւներ, զրկուած՝ Ծրանայի Հայ Երեսօտարը զբոսորդու Միութեան եւ Մշակութային Ընկերութեան կողմէ:

ՆԻԻ-ԵՈՐԲԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ԱՌԹԻԻ

Նիւ Եորքի Սթարլըք-Հիլքըն պանդակին մէջ, Մարտ 25-ին, ՈՅԿ- Եղուարդ Ասեակեան ընդունելութիւն մը կազմակերպած է ի պատիւ Նիւ Եորքի 1964-65-ի Միջազգային Ցուցանանքէնի Հայկական ժողովրդական Փառատօնի Յանձնախումբին:

Ներկայ կգած են՝ Մեքրոփոլիքըն Օփերայի երգչուհի Լուսին Ամարա եւ չուրականարուհի Անտիտա Անտիտա, որ վերջերս, մշակութային փոխանակութեան ծրագրի հիման վրայ, արտասին ճախարարութեան կողմէ զնարտեստական շրջապայտ մը կատարած էր:

Ծանօթ լրագրագ եւ արտադրական մամուլի բազակից Պ. Լեւոն Գեղիչեան եւս ներկայ կգած եւ 250 տալարի Յուրատուութիւն մը քրած է Յանձնախումբին:

Ամերիկեանայց Աւայմորդ Գերայնորի Հրամտ Արեւայիսկայաւ հայատարեան եւ Պ. ՃէԲ Չատրնեան ներկայ եղած են իբրեւ Ամերիկայի Հայ Աւաճեակամ Եկեղեցւոյ ներկայացուցիչներ:

Այս առիւ, Փառատօնի Յանձնախումբի արտնապետ Պ. Վիգէն Պապայեան տեղեկութիւններ տուած է Միջազգային Ցուցանանքէնի Հայկական Օրչուամ յայտագրին եւ տարուած աշ-

խտամբներուն մասին: Գոհունակութեամբ շեշտած է թէ՛ նրիտաարդուքիւնը յանդակաւ մամակցութիւն կը բերէ աշխատանքներուն: Պ. Պապայեան ապա պարզած է ճիւրակամ միջոցներու անհրաժեշտութիւնը:

Հայկական Փառատօնը (Փնտրվայ) պիտի իրականանայ երկու յայտագրերով: 1964 Մայիս 31-ին, Նիւ Եորքի Միջազգային Ցուցանանքէնի Սիւնըր Պրաւ Արիմային մէջ պիտի ներկայացուին հայկական ժողովրդական պարեր եւ երգեր, երգչախումբերու եւ պարախումբերու կողմէ, մասնակցութեամբ նաեւ յայտնի արուեստագետներու:

Յանլուածաբար, համանաւագային երաժշտանանդէս մը, երգչախումբի եւ յայտնի մեներգողներու մասնակցութեամբ պիտի արտադրուին երկույեան հանդիսութեամ յայտագիրը:

ԱՐԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գահերէն Վեմած շարթաթերթը, իր վերջին թիւին մէջ ընդարձակ յօդուած մը նուիրած է կեդպատեայ երգչուհի Արամ Մուրատեանի յանդիսութեան:

Պ. Մուրատեան յորհած է Վեղէրանդրիտա երգը, որ ըստ Վեմածի կուտած է անհնարապէս յաղթութիւնը, որով պատկուած է Վեղէրաւոր եւ, Գահերէն երգը (Քէյթ ժի պէք թու Քայր): Արգարեւ, ինչպէս յայտնի է Գորիմ Եուրթիի այլ երգը արժանացած էր միջազգային զնահասանքի:

Պ. Ա. Մուրատեան Վեղէրանդրիտան երգի Միջազգային Մրցումնի մասնակցած եւ առաջնութիւն շահած է Գարշիտայի մէջ: Այս առթիւ իր ներկայացուցած Վերիւտա մեկնեցուց երգը թարգմանուած է արաբերէնի:

Վեմած> կը յայտնէ որ, երբ Ա. Մուրատեանի Վեղէրանդրիտա երգը զրուած է պատկերասփիւռի վրայ, ներկայ կգած է Հուլիոսեան Ծանօթ բեմադրիչներէն Ճոշուա Լահան, որ ըսած է. Վեղս երգը շատ հետուները, միեւն աշխարհի ծայրը պիտի երթայ:

« Ա Ր Ա Ր Ա Տ »

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

20-ԱՄԵԱԿ

Իրանահայ գաղութին մէջ մշակութային ծաւալուն գործունէութիւն մը ունեցած «ԱՐԱՐԱՏ» մշակութային միութիւնը, Մայիս 9-15-ը յայտարարեց իր գոյութեան 20-ամեակի սոնակատարութեան շարքը:

Մամուլ, ազգային հաստատութիւններ, գրողներ, արուեստագէտներ, ազգային ծանօթ դէմքեր եւ ժողովուրդ՝ իրենց խանդավառ եւ խանդավառող մասնակցութիւնը բերին, բարոյապէս թէ միւթապէս, իրանահայութեան մշակութային կեանքի պարծանքներէն մին եզրոյ աչս հռանդուն եւ երախտաշատ կազմակերպութեան սոնակամ շքարթին:

Իր հիմնադրութեան առաջին օրերէն սկսեալ մինչեւ այսօր, քան տարիներու երկար ժամանակաշրջանի մը ամբողջ տեսութեան, «ԱՐԱՐԱՏ» մշակութային միութիւնը ունեցած է ամէն գնահատանքի արժանի բեղմնաւոր եւ ազգօգուտ գործունէութիւն մը իրանի մեր գաղութի կեանքին մէջ: Եզու այն միութիւններէն մէկը, որ կրցաւ կազմակերպական եռուն գործունէութեամբ մը ազգային ոգի եւ ջերմ մթնոլորտ ստեղծել մեր մշակութային արժէքներուն համբաւը, եւ յայն հետաքրքրութիւն մը այդ ուղղութեամբ՝ նոր սերունդին մէջ:

Այսօր, երբ միութիւնը իր գործունէութեան 20-ամեակը կը տօնէ, ունի արդէն իր ուժերը բազմապատկող եւ նոր կերելիութիւններու յոյսը ներշնչող բազմահարկ անդամ-անդամուհիներ:

ՔԱԳԻՆ իր խանդավառութիւնը մեացնելով իրանահայ գաղութի խանդավառութեան, կը մազթէ որ «ԱՐԱՐԱՏ» իր մշակութային կեանքի ընթացքին նորանոր վերելքներ արձանագրէ: Կը հաւատայ՝ որ այս մեծ միութեան անդամներն ու անդամուհիները աւելի ամբողջն պիտի փարին իրենց վիճակուած նուիրական գործին եւ վերանորոգուած թափով մը պիտի լծուին հաւատարմ արշաւանակի, նոր շքանի մը մէջ:



ՏԱՐԵԿԱՆ ՔԱՃՆԵԳԻՆ

**ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՑՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ**

Վարչաբաժնի հասցե՝-

**DIKRAN KOUYOUMDJIAN
B. P. 587, Beyrouth - Liban**

digitised by **A.R.A.R.@**

ԵԹԷ ԱԻԵԼԻ ՄԵԾ ԹԻՒՈՎ ԳԻՏԱԿԻՑ ԾԻՈՂՆԵՐ ԿԸ ՆԱԽՇՆՏՐԵՆ
ՔԵՆԹ-Ը
 ԼՈՒԻՋ ՊԱՏՃԱՌԻ ՄԸ ՀԱՄԱՐ Է



ՈՐՈՎՅԵՏԵԻ ՄԻԱՅՆ ՔԵՆԹԸ Է ՈՐ
 ՈՒՆԵՆԱԼՈՎ ՄԱՅՔՐՈՆԱՅԹ ԶՏԻՉԸ. ԱԶԴԵՑԻԿ
 ԶՏՈՒՄԻ ԵՒ ՀԱՃԵԼԻ ՀԱՄԻ ՄԻՋԵԻ ԿՍՏԱՐԵՍԸ
 ՀԱՒԱՍԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՅԷ

Ք Ե Ն Թ

© 1964 ԱՐՄ ԸՆԴՔՐՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԱՐՏԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ - ԱՌԵՆՅԱԳՈՐԿ ԹԻՒՄԻՔՆԵՐ - ԱՐԻԻԿԻՔԻ ԼՈՐԻԱՐՄԻ ՀԱՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ: